# ՄԱՍ 3.

## ՀԱՅԱՍՏԱՆ. ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ

# Գլուխ 7. Առողջապահությունը և աղքատությունը

Առողջ բնակչությունը ոչ միայն որոշիչ նախապայման է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար, այլև կարևոր նախադրյալ թե՛ տնային տնտեսությունների, թե՛ անհատների բարգավաճման համար:

Չնայած Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի շատ երկրների համեմատ ցածր պետական ֆինանսավորմանը՝ Հայաստանը կարողացել է ապահովել առողջապահության հետևյալ ցուցանիշները: 2018թ.-ին առողջապահության ոլորտի մասով համախմբված բյուջեի ծախսերի մասնաբաժինը կազմել է 5.4%(Աղյուսակ 2.4.):

2018թ.-ին կյանքի սպասվող տևողությունը՝ ծնվելու պահից, տղամարդկանց մոտ կազմել է 72.4 տարի, որն ավելի բարձր է, քան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի շատ այլ երկրներում, իսկ կանանց համար՝ 79.0 տարի: Այդ երկու ցուցանիշն էլ գերազանցել են 1998 և 2008 թթ.-ին գրանցված մակարդակները, որոնք կազմել են, համապատասխանաբար՝ 69.1 և 75.2 տարի (1998թ.), 70.0 և 76.3 (2008թ.):

Ըստ ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության գրանցումների, որոնք հանդիսանում են մահվան վերաբերյալ վիճակագրական տվյալների սկզբնաղբյուրը, արձանագրվել են մինչև մեկ տարեկան մանկական մահացության դեպքերի տարեցտարի անկում: 2018թ.-ի ընթացքում, կյանքի առաջին տարում, արձանագրվել է երեխաների մահացության 261 դեպք, իսկ մանկական մահացության գործակիցը 1 000 կենդանի ծնվածի հաշվով կազմել է 7.1 պրոմիլ, 1998թ.-ի՝ 14.7 պրոմիլի և 2008թ.-ի՝ 10.8 պրոմիլի համեմատ:

Մինչև 5 տարեկան երեխաների մահացության գործակիցը (1 000 կենդանի ծնվածի հաշվով) 2018թ.-ին կազմել է՝ 8.7 պրոմիլ, 1998թ.-ի՝ 18.4 և 2008թ.-ի՝ 12.1 պրոմիլի համեմատ:

Տարեցտարի նվազում են նաև մայրական մահացության դեպքերը: 2018թ.-ին մայրական մահացության գործակիցը կազմել է՝ 21.9 պրոմիլ (100 000 կենդանի ծնվածի հաշվով), 1998թ.-ին արձանագրված՝ 23.0 և 2008թ.-ին՝ 38.8 պրոմիլի համեմատ:

Ներդիր 7.1

**ՀՀ առողջապահության նախարարության կողմից 2018 թվականի ընթացքում աղքատության կրճատմանը և/կամ մեղմացմանը միտված միջոցառումների (այդ թվում՝ մշակված և ընդունված իրավական ակտեր,զարգացման հայեցակարգեր և ռազմավարություններ) վերաբերյալ տեղեկատվություն**

1. **Իրավական ակտեր**

Առողջապահության նախարարության կողմից 2018 թվականի ընթացքում մշակվել են 17 օրենքների նախագծեր, որոնց մշակումը բխում է Հայաստանի Հանրապետությունում Միացյալ ազգերի կազմակերպության «Օրակարգ 2030-ի» Կայուն զարգացման 3-րդ նպատակի 3.ա թիրախի իրականացման և տեղայնացման միջոցառման պահանջներից (Ուժեղացնել ԱՀԿ-ի ծխախոտի վերահսկման կոնվենցիայի իրագործումը), 17 որոշումներ և 60 հրամաններ:

2. **Առողջապահության ոլորտում պետական քաղաքականությունն իրականացնելու համար նախաձեռնվել են հետևյալ միջոցառումները**

ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի թիվ 33 արձանագրային որոշման հավելվածով հաստատված 2018 թվականին նախատեսված միջոցառումներ՝ լաբորատոր համակարգի զարգացման ուղղությամբ:

Նախաձեռնվել և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի թիվ 1030-Լ որոշման հավելված 1-ի 29.2-րդ կետով հաստատվել է Ազգային լաբորատոր համակարգ ձևավորելու և վերջինիս զարգացման ազգային քաղաքականությունը, 2019-2023 թվականների զարգացման ռազմավարական ծրագիրը մշակելու գործընթացը, որի մշակման և ներդրման համար 2018 թվականի դեկտեմբերի 13-ին ՀՀ ռողջապահության նախարարի թիվ 3226-Ա հրամանով ձևավորվել է աշխատանքային խումբ:

Արցախի Հանրապետության լաբորատոր համակարգի զարգացմանն աջակցելու շրջանակներում ՀՀ ռողջապահության նախարարի 2018 թվականի մարտի 05-ի թիվ 568-Ա հրամանով ձևավորվել է Արցախի Հանրապետության ազգային լաբորատոր համակարգի և առանձին լաբորատորիաների գնահատման աշխատանքներն իրականացնող աշխատանքային խումբ, հաստատվել է խմբի կազմը և գնահատման գործիքը:

ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն», «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի մանրէաբանական, քիմիական և ճառագայթաբանական, մակաբուծաբանական և թունաբանական լաբորատորիաները հավատարմագրվել են որպես ՀՍՏ ԻՍՕ/ԻԵԿ 17025-2005 ստանդարտի պահանջներին համապատասխանող փորձարկման լաբորատորիաներ (№052/Տ-074 հավատարմագրման գրանցահամարով): Վիրուսաբանական լաբորատորիան 2018 թվականի մայիսի 9-ին Առողջապահական համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից պաշտոնապես ճանաչվել է Գրիպի ազգային կենտրոն (National Influenza Center):

Իրականացվել է ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» լիցենզավորման գործընթացը:

Իրականացվել է առողջ ապրելակերպի խթանման 2014-2020 թվականների ռազմավարական ծրագիրը (ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի նիստի թիվ 50 արձանագրային որոշում):

Երկու մարզերում (Արարատ, Արմավիր) պիլոտային ներդրվել է բնակչության շրջանում ֆիզիկական ակտիվության խթանման մեթոդաբանությունը: Պիլոտային մարզերում 2018թ. ընթացքում ֆիզիկական ակտիվության խթանման վերաբերյալ խորհրդատվություն է ստացել 7850 անձ:

Մշակվել և սահմանված կարգով հաստատվել է ՀՀ առողջապահության նախարարի 2018թ. օգոստոսի 6-ի <<Դպրոցական և նախադպրոցական տարիքի երեխաների առողջ սնուցման հիմնական սկզբունքներ>> մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին թիվ 1993-Ա և ՀՀ առողջապահության նախարարի 2018 թվականի սեպտեմբերի 7-ի <<Սննդի հիմնական բաղադրիչները>> մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 2304-Ա հրամանները:

ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 3090-Ա հրամանով հաստատված «Երևան քաղաքի 10-12 տարեկան դպրոցականների առողջական վիճակի վրա վարքագծային գործոնների ազդեցության 2015-2020 թթ. հետազոտության ծրագրի» շրջանակներում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ 2015 թվականից իրականացվում է հետազոտություն՝ Երևան քաղաքի 10-12 տարեկան դպրոցականների առողջական վիճակի վրա ազդող

վարքագծային գործոնների տարածվածության վերաբերյալ:

Իրականացվել է տրավմատիզմի կանխարգելման 2015-2020 թվականների միջոցառումների ծրագիր:

ՀՀ առողջապահության նախարարի 2018 թվականի հուլիսի 30-ի թիվ 1949-Ա հրամանով հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում սպորտային տրավմատիզմի կանխարգելման ծրագրի» մշակման աշխատանքային խումբ, որի կողմից մշակվել և սահմանված կարգով առողջապահության նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 3135-Ա հրամանով հաստատվել է <<Սպորտային վնասվածքների կանխարգելման 2019-2023թթ. ռազմավարական ծրագիրը>>:

ՀՀ առողջապահության նախարարի 2018 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 2999-Ա հրամանով հաստատվել է <<Մանկական վնասվածքների կանխարգելման ռազմավարական ծրագիրը և մանկական վնասվածքների կանխարգելման 2018-2023 թվականների միջոցառումների ծրագիրը>>:

ՀՀ առողջապահության նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 3144-Ա հրամանով, պիլոտային կարգով ներդրվել է <<Արտադրական տրավմատիզմի համաճարակաբանական հսկողության համակարգը>>:

2018 թվականի ընթացքում ՀՀ-ի բոլոր մարզպետարաններում եռամսյակը մեկ անգամ կազմակերպվել է քննարկում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման հարցերով:

Հայաստանի Հանրապետությունում 2018թ. <<Իմունականխարգելման ազգային ծրագրի>> շրջանակներում իրականացվել են կանխարգելիչ պատվաստումներ: 2018թ. կանխարգելիչ պատվաստումներում ընդգրկվածությունը կազմել է 1 տարեկան երեխաների շրջանում՝ 89,8%, 2 տարեկանների շրջանում՝ 91,3% և 6 տարեկանների շրջանում՝ 95,6%:

Իրականացվել են Կառավարության 2016 թվականի մարտի 24-ի թիվ 11 արձանագրային որոշմամբ ընդունված ՀՀ-ում տուբերկուլյոզի կառավարման 2016-2020 թթ. ազգային ռազմավարությամբ, ինչպես նաև 2017 թվականի հունիսի 15-ի նիստի թիվ 25 արձանագրությամբ ընդունված՝ ՀՀ-ում 2017-2021 թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրով նախատեսված միջոցառումները:

Մշակվել է «Դպրոցահասակ և դեռահաս երեխաների բուժսպասարկման հիմունքները, դպրոցական բուժքրոջ գործառույթները» կրթական ձեռնարկ, որով վերապատրաստվել են Երևանի դպրոցական բուժքույրերը:

Կազմակերպվել է մարզային և Երևանի ծննդօգնության հիվանդանոցային ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպությունների 5 մանկաբարձ-գինեկոլոգների, 5 անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգների և 5 նեոնատոլոգների «Անհետաձգելի բուժօգնության հիմնական սկզբունքները մանկաբարձությունում» թեմայով գիտա-գործնական վերապատրաստում ՌԴ Մոսկվա քաղաքում:

Իրականացվել է պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելմանն ուղղված աշխատանքները: Իրականացված համալիր միջոցառումների արդյունքում արձանագրվել են որոշակի դրական միտումներ սելեկտիվ աբորտների հիմնախնդրի հաղթահարման գործընթացում: Այսպես, եթե սելեկտիվ աբորտների դեմ պայքարին ուղղված միջոցառումներին նախորդող՝ 2008-2012թթ. ժամանակահատվածում ծնվածների մեջ աղջիկ-տղա հարաբերակցության միջին ցուցանիշը կազմել է 100:115, 2014թ.՝ 100:113,4: 2015թ.՝ 100:112,7; 2016թ.՝ 100:111,9, 2017թ. 100/109.8, ապա 2018թ. ընթացքում 100/111.:

Հիպոթիրեոզի սկրինինգի շրջանակներում իրականացվել է 32118 հետոզոտություն, հայտնաբերվել է 5 երեխա, որոնք վերցվել են դիսպանսերային հսկողության և ստանում են հորմոնալ հետազոտություն, ֆենիլկետոնուրիայի սկրինինգի շրջանակներում իրականացվել է 32828 հետազոտություն, հայտնաբերվել է 4 երեխա, որոնք ստանում են ֆենիլալանինից զուրկ հատուկ սնունդ, լսողության սկրինինգի շրջանակներում իրականացվել է 29567 հետազոտություն, հայտնաբերվել է ծանրալսությամբ 40 երեխա, որոնք վերցվել են հսկողության՝ լսողության պրոթեզավորման կամ կոխլեար իմպլանտացիայի նպատակով, իրականացվել է անհասության ռետինոպատիայի 19689 հետազոտություն, 179 երեխայի (311 աչք) կատարվել է լազերային վիրահատություն, 106 երեխա (186 աչք) ստացել են վիտրեոռետինալ ներարկում, 30 երեխայի (44 աչք) կատարվել է վիտրեոռետինալ վիրահատություն:

Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման, մասնավորապես արգանդի վզիկի քաղցկեղի կանխարգելման ծրագրի շրջանակներում Համաշխարհային բանկի հետ համատեղ 2018թ շարունակվել է արգանդի պարանոցի սկրինինգը: Սկրինինգային հետազոտությունների ընթացքում 2015-2018թթ. Ընթացքում Պապ թեստով սկրինինգի են ենթարկվել 220500 կին, որոնցից 2018թ.ընթացքում 50500:

ՀՀ ԱՆ թիվ 650-Ա հրամանով իրականացվել է ծննդօգնության մարզային հիվանդանոցային հաստատությունների անհետաձգելի

բուժօգնության տրամադրման պատրաստվածության ուսումնասիրություն, կատարվել են մոնիտորինգային այցեր Երևանի բոլոր ծննդատներում և ուսումնասիրություններ, «գնահատվել է պետական պատվերի շրջանակներում մատուցվող մանկաբարձագինեկոլոգիական բուժօգնության ծավալը, կեսարյան հատումների հիմնավորվածությունը և որակը:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում զգալիորեն կրճատվել է մանկական մահացության ցուցանիշը: Համաձայն Ազգային Վիճակագրական Կոմիտեի (այսուհետ, ԱՎԿ) հրապարակած տվյալների, 2018թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին մանկական (0-1 տարեկան) ցուցանիշը կազմել է 7,1 պրոմիլ (բացարձակ թիվ կազմում է 261 դեպք)՝ 2017թ. նույն ժամանակատվածի 8,2 պրոմիլի (բացարձակ թիվը կազմում է 311դեպք) համեմատությամբ:

*Ներդիր 7.2*

**Առողջապահական համակարգի նկարագիր և հիմնական ցուցանիշներ:**

2018թ. հանրապետությունում բնակչության ստացիոնար բուժումն իրականացվել է 124 հիվանդանոցներում, առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) ծառայություն մատուցվել է 501 հաստատություններում և 625 բուժական մանկաբարձական կետերում (ԲՄԿ): Առողջապահական հաստատությունները և ներուժը հիմնականում կենտրոնացված են հանրապետության առավելապես խոշոր քաղաքներում (հիմնականում ք.Երևանում՝ բժիշկների 72.7%-ը, հիվանդանոցների՝ 41.9%-ը, հիվանդանոցային մահճակալների՝ 64.9%-ը)

**Առողջապահական համակարգի ընդհանրացված ցուցանիշները, 2018թ.**

| | | Ընդամենը |
|---|---|---|
| Բոլոր մասնագիտությունների բժիշկների թվաքանակը, մարդ | ընդամենը | 13 366 |
| | 10 000 բնակչի հաշվով | 45.1 |
| Բնակչության թվաքանակը մեկ բժշկի հաշվով, մարդ | | 221.8 |
| Միջին բժշկական անձնակազմի թվաքանակը, մարդ | ընդամենը | 16 595 |
| | 10 000 բնակչի հաշվով | 56.0 |
| Հիվանդանոցների քանակը, միավոր | | 124 |
| Հիվանդանոցային մահճակալների քանակը, միավոր | ընդամենը | 12 153 |
| | 10 000 բնակչի հաշվով | 41.0 |
| Հիվանդանոցներ ընդունված հիվանդների թվաքանակը, մարդ | ընդամենը | 406 393 |
| | 100 բնակչի հաշվով | 13.7 |
| Մեկ մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը, օր | | 238 |
| Մեկ հիվանդի ստացիոնար բուժման միջին տևողությունը (մեկ հիվանդի կողմից հիվանդանոցային մահճակալի զբաղեցրած օրերի միջին քանակը), օր | | 7.1 |
| ԱԱՊ ծառայություն մատուցող հաստատությունների (բացառությամբ ԲՄԿ-ների, մասնավոր բուժական և ստոմատոլոգիական կաբինետների) քանակը | ընդամենը, միավոր | 501 |
| | 10 000 բնակչի հաշվով | 1.7 |
| | հաճախումների քանակը, հազ. | 12 082.8 |
| | մեկ բնակչի հաշվով | 4.1 |
| Կանանց կոնսուլտացիաների, մանկական պոլիկլինիկաների, մանկական բաժանմունքներ ունեցող հիմնարկների, ընտանեկան բժշկության կաբինետների քանակը, միավոր | | 452 |
| Հղի կանանց և ծննդկանների համար նախատեսված մահճակալների քանակը, միավոր | ընդամենը | 1 277 |
| | ֆերտիլային տարիքի (15-49 տարեկան) 10 000 կնոջ հաշվով | 17.0 |
| Հիվանդ երեխաների համար նախատեսված մահճակալների քանակը, միավոր | ընդամենը | 1 404 |
| | 10 000 երեխայի հաշվով | 23.4 |
| Շտապ բժշկական օգնության | կայանների քանակը, միավոր | 72 |
| | կանչերի քանակը, միավոր | 479 767 |
| | կանչերով սպասարկված անձանց թվաքանակը, 1 000 բնակչի հաշվով, մարդ | 163.5 |
| | բժիշկների թվաքանակը 100 000 բնակչի հաշվով, մարդ | 4.2 |

**Առողջապահական համակարգի տեսակարար ցուցանիշներն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2018թ.**

| | Հիվանդանոցներ ընդունված հիվանդների թվաքանակը 100 բնակչի հաշվով, մարդ | Հիվանդանոցային մահճակալների քանակը 10 000 բնակչի հաշվով, միավոր | Մեկ հիվանդի ստացիոնար բուժման միջին տևողությունը, օր | Մեկ մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը, օր | ԱԱՊ ծառայություն մատուցող հաստատությունների (բացառությամբ ԲՄԿ-ների) քանակը 10 000 բնակչի հաշվով, միավոր | Հաճախումների քանակն ԱԱՊ ծառայություն մատուցող հաստատություններ (բացառությամբ ԲՄԿ-ների) մեկ բնակչի հաշվով |
|---|---|---|---|---|---|---|
| ք.Երևան | 27.0 | 72.9 | 6.9 | 254 | 1.3 | 5.0 |
| Արագածոտն | 4.1 | 12.1 | 4.8 | 164 | 1.8 | 2.9 |
| Արարատ | 5.2 | 19.0 | 7.8 | 235 | 2.4 | 3.5 |
| Արմավիր | 4.9 | 13.5 | 5.2 | 189 | 2.3 | 3.4 |
| Գեղարքունիք | 4.8 | 32.0 | 18.4 | 275 | 1.8 | 3.1 |
| Լոռի | 8.3 | 22.3 | 6.1 | 228 | 1.9 | 4.3 |
| Կոտայք | 5.7 | 19.4 | 7.8 | 230 | 1.9 | 3.4 |
| Շիրակ | 8.7 | 35.6 | 6.6 | 163 | 1.4 | 3.9 |
| Սյունիք | 7.2 | 31.1 | 7.7 | 180 | 1.2 | 3.7 |
| Վայոց ձոր | 3.8 | 17.3 | 5.0 | 111 | 1.6 | 3.7 |
| Տավուշ | 6.4 | 19.0 | 4.6 | 156 | 2.2 | 3.2 |
| **Ընդամենը ՀՀ** | **13.7** | **41.0** | **7.1** | **238** | **1.7** | **4.1** |

**Բժիշկների և միջին բուժանձնակազմի թվաքանակն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2018թ.**

*մարդ*

| | Բժիշկների թվաքանակը | | Միջին բուժանձնակազմի թվաքանակը | |
|---|---|---|---|---|
| | ընդամենը | 10 000 բնակչի հաշվով | ընդամենը | 10 000 բնակչի հաշվով |
| ք.Երևան | 9 717 | 89.8 | 8 490 | 78.5 |
| Արագածոտն | 228 | 18.2 | 544 | 43.4 |
| Արարատ | 439 | 17.1 | 988 | 38.5 |
| Արմավիր | 390 | 14.8 | 894 | 33.9 |
| Գեղարքունիք | 339 | 14.8 | 826 | 36.2 |
| Լոռի | 520 | 24.1 | 1 083 | 50.3 |
| Կոտայք | 536 | 21.3 | 1 005 | 39.9 |
| Շիրակ | 584 | 25.0 | 1 304 | 55.9 |
| Սյունիք | 263 | 19.1 | 723 | 52.5 |
| Վայոց ձոր | 105 | 21.4 | 214 | 43.7 |
| Տավուշ | 245 | 20.0 | 524 | 42.9 |
| **Ընդամենը ՀՀ** | **13 366** | **45.1** | **16 595** | **56.0** |

Հանրապետությունում 2018թ. բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություն մատուցվել է 501 հաստատություններում և 625 բուժական մանկաբարձական կետերում (ԲՄԿ):

**ԱԱՊ ծառայություն մատուցող հաստատություններն ըստ տեսակի, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2018թ.**

*միավոր*

| | Ընդամենը | այդ թվում` | | | | | | | | | ԲՄԿ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ինքնուրույն | | | | դիսպանսերներ | ստոմատոլոգիական պոլիկլինիկաներ | | բաժանմունք հիվանդանոցի կազմում | այլ | |
| | | մեծահասակների պոլիկլինիկա | մանկական պոլիկլինիկա | առողջության կենտրոններ | գյուղական ամբուլատորիաներ | | մեծահասակների | մանկական | | | |
| ք.Երևան | 144 | 22 | 2 | 44 | - | 5 | 22 | 4 | 35 | 10 | - |
| Արագածոտն | 23 | - | - | 1 | 15 | - | 1 | - | 6 | - | 92 |
| Արարատ | 61 | - | - | 2 | 50 | - | 3 | - | 6 | - | 43 |
| Արմավիր | 61 | 1 | - | 1 | 52 | - | 4 | - | 3 | - | 39 |
| Գեղարքունիք | 40 | 2 | - | - | 30 | - | 2 | - | 6 | - | 54 |
| Լոռի | 41 | 4 | - | 5 | 18 | 1 | 7 | 1 | 5 | - | 94 |
| Կոտայք | 47 | 2 | - | 5 | 30 | 1 | 3 | - | 6 | - | 29 |
| Շիրակ | 32 | 7 | - | - | 12 | 3 | 1 | 1 | 8 | - | 97 |
| Սյունիք | 17 | - | - | - | 10 | 1 | 1 | - | 5 | - | 103 |
| Վայոց ձոր | 8 | - | - | - | 5 | - | - | - | 3 | - | 35 |
| Տավուշ | 27 | 1 | - | 1 | 18 | - | - | - | 7 | - | 39 |
| **Ընդամենը ՀՀ** | **501** | **39** | **2** | **59** | **240** | **11** | **44** | **6** | **90** | **10** | **625** |

***Հիվանդանոցների գործունեություն:*** 2018թ. ստացիոնար բուժման նպատակով հիվանդանոց են ընդունվել 406 393 մարդ, 1 000 բնակչի հաշվով նրանք կազմել են 136.9: Հիվանդանոց ընդունվածների 19.3%-ը 0-14 տարեկան երեխաներն են: Հիվանդանոցային մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը կազմել է 238 մահճակալ/օր, իսկ մեկ հիվանդի բուժման միջին տևողությունը` 7.1 մահճակալ/օր:

Կատարվել է 150 241 վիրահատություն, որի 10.6%-ը բաժին է ընկել 0-17 տարեկան երեխաներին, որի 85.9%-ը` 0-14 տարեկան երեխաներին: Վիրահատությունների 8.3%-ը կատարվել է էնդոսկոպիկ մեթոդով: Վիրահատվել են 144 486 հիվանդներ, նրանցից 13 372-ը (9.2%) 0-14 տարեկան երեխաներն են, 2 131-ը (1.5%)` 15-17 տարեկան դեռահասները: Վիրահատություններից մահացել է 530 մարդ, նրանց 9.1%-ը կազմել են 0-14 տարեկան երեխաները: 2018թ. ընթացքում հիվանդանոցից դուրս է գրվել 400 655 մարդ (98.6%), մահացել` 5 290 մարդ (1.3%):

**Հիվանդանոցներն ըստ տեսակի, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2018թ.**

*միավոր*

| | Ինքնուրույն հիվանդանոցներ | Միավորված հիվանդանոցներ | Առողջության կենտրոններ | Ծննդատներ` առանց կանանց կոնսուլտացիաների | Ծննդատներ` կանանց կոնսուլտացիաների հետ | Ստացիոնար ունեցող դիսպանսերներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| ք.Երևան | 18 | 26 | - | 2 | 2 | 4 | **52** |
| Արագածոտն | - | 3 | 3 | - | - | - | **6** |
| Արարատ | - | 4 | 1 | 1 | - | - | **6** |
| Արմավիր | 1 | 3 | - | - | - | - | **4** |
| Գեղարքունիք | 1 | 4 | 1 | 1 | - | - | **7** |
| Լոռի | 1 | 5 | - | - | - | 1 | **7** |
| Կոտայք | 3 | 4 | 1 | - | 1 | 1 | **10** |
| Շիրակ | 5 | 4 | 3 | 1 | - | 2 | **15** |
| Սյունիք | 1 | 5 | - | - | - | 1 | **7** |
| Վայոց ձոր | - | 2 | 1 | - | - | - | **3** |
| Տավուշ | - | 4 | 3 | - | - | - | **7** |
| **Ընդամենը ՀՀ** | **30** | **64** | **13** | **5** | **3** | **9** | **124** |

Հիվանդանոցներում կատարված վիրահատություններն ըստ տեսակի, 2018թ.

| | Վիրահատությունների քանակը, միավոր | դրանցից՝ 0-17 տարեկանների | | Էնդոսկոպիկ մեթոդով վիրահատությունների քանակը, միավոր | Վիրահատություններից մահացածների թվաքանակը, մարդ | նրանցից՝ 0-17 տարեկաններ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ընդամենը | դրանցից՝ 0-14 տարեկանների | | | ընդամենը | նրանցից՝ 0-14 տարեկաններ |
| Նյարդային համակարգի | 1 835 | 239 | 231 | 83 | 55 | 7 | 7 |
| Ներզատական համակարգի | 1 458 | 3 | 1 | 1 | - | - | - |
| Տեսողական օրգանի | 10 170 | 516 | 474 | - | - | - | - |
| Ականջի, կոկորդի և քթի օրգանների | 14 349 | 1 021 | 474 | 53 | 1 | - | - |
| Շնչառական օրգանների | 8 993 | 5 891 | 5 575 | 215 | 38 | 6 | 6 |
| Սրտի | 8 272 | 161 | 155 | 2 546 | 51 | 21 | 21 |
| Անոթների | 7 816 | 24 | 13 | 1 087 | 39 | - | - |
| Որովայնի խոռոչի օրգանների | 20 341 | 2 632 | 2 059 | 3 454 | 227 | 7 | 7 |
| Երիկամների և միզածորանների | 4 401 | 319 | 275 | 1 109 | 10 | - | - |
| Շագանակագեղձի | 1 684 | 2 | 1 | 728 | 1 | - | - |
| Կանանց սեռական օրգանների | 10 471 | 98 | 78 | 2 360 | 5 | - | - |
| Մանկաբարձական | 29 397 | 29 | - | 172 | 2 | - | - |
| Ոսկրամկանային համակարգի | 12 348 | 2 682 | 2 450 | 363 | 41 | 2 | 2 |
| Կրծքագեղձի | 2 205 | 2 | 2 | - | 5 | - | - |
| Մաշկային և ենթամաշկային բջջանքի | 4 846 | 658 | 507 | - | 2 | - | - |
| Այլ | 11 655 | 1 615 | 1 363 | 244 | 53 | 5 | 5 |
| **Ընդամենը** | **150 241** | **15 892** | **13 658** | **12 415** | **530** | **48** | **48** |

Շտապ բուժօգնության գործունեության հիմնական ցուցանիշները, 2014-2018թթ.

| | | 2014 | 2015 | 2016 | 2017 | 2018 |
|---|---|---|---|---|---|---|
| Շտապ բժշկական օգնության կայանների քանակը, միավոր | | 104 | 101 | 74 | 75 | 72 |
| Շտապ բժշկական օգնության կանչերի քանակը, միավոր | | 480 136 | 489 911 | 501 764 | 465 111 | 479 767 |
| Բժիշկների թվաքանակը 100 000 բնակչի հաշվով, միարդ | | 7.0 | 5.0 | 5.0 | 4.2 | 4.2 |
| Բրիգադների քանակը, միավոր | ընդհանուր պրոֆիլային | 221 | 207 | 160 | 155 | 147 |
| | մասնագիտացված | 19 | 19 | 19 | 19 | 19 |
| | բուժակային | 39 | 37 | 35 | 34 | 38 |
| Կանչերով սպասարկված անձանց թվաքանակը, մարդ | ընդամենը | 486 110 | 495 959 | 507 519 | 471 156 | 485 555 |
| | 1 000 բնակչի հաշվով | 161.3 | 165.1 | 169.6 | 158.1 | 163.5 |

## 7.1. Առողջապահության ծառայությունների մատչելիություն

Համաձայն 2018թ.-ի ՏՏԿԱՀ արդյունքների, առողջական վիճակի՝ սուբյեկտիվ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ՝ նորմալ, լավ և շատ լավ գնահատականը ստացվել է 90.4% բնակչության կողմից, իսկ վատ և շատ վատ գնահատականը՝ 9.6%-ի կողմից: Երբ առողջական վիճակի սուբյեկտիվ գնահատականները դիտարկվում են ըստ աղքատության մակարդակի, ապա վատառողջ են ոչ աղքատների 9.2%-ը, աղքատների՝ 8.0% և ծայրահեղ աղքատների՝ 17.1%-ը: Համաձայն 2018թ.-ի ՏՏԿԱՀ արդյունքների, հետազոտությանը նախորդող մեկ ամսվա ընթացքում հիվանդացել են հարցվածների 13.2%-ը:

2018թ.-ին հիվանդության ժամանակ դիմել է առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) ծառայություններին բժշկական խորհրդատվության կամ բուժման համար հիվանդների 32.7%-ը, ընդ որում՝ այլ քաղաքներում բնակվողների շրջանում այդ ցուցանիշը կազմել է 30.7%, գյուղաբնակների շրջանում՝ 39.4%, իսկ երևանաբնակների շրջանում՝ 29.1%: Նախորդ տարվա համեմատ հիվանդներն ավելի քիչ են դիմել բժշկական խորհրդատվության կամ բուժման այլ քաղաքներում և Երևանում, մինչդեռ գյուղաբնակների շրջանում նկատվում է բարձրացում (2017թ.-ին այն կազմել է, համապատասխանաբար, 33.5%, 35.7%, և 34.3%):

Առողջության առաջնային պահպանման ծառայություններին բժշկական խորհրդատվության կամ բուժման համար հիվանդանալու դեպքում բնակչությունը մեկ ամսվա մեջ դիմում է միջինը 1.51 անգամ, այդ թվում՝ ոչ աղքատները՝ 1.53 անգամ, աղքատները (առանց ծայրահեղ աղքատների)՝1,42, ծայրահեղ աղքատները՝ 1.45 անգամ: Հետազոտության մեկ ամսվա ընթացքում վերջին այցի ժամանակ որևէ պատճառով բուժհիմնարկների մասնագետներին դիմած բնակչության բաշխումն՝ ըստ բուժհիմնարկների մասնագետների, բերվում է ստորև (տվյալները հաշվարկված են բոլոր պատասխանների նկատմամբ).

**Աղյուսակ 7.1. Հայաստան. Հետազոտվող ամսվա վերջին այցի ժամանակ առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) ծառայություններին դիմած բնակչության բաշխումն ըստ բուժհիմնարկի մասնագետների և աղքատության մակարդակի, 2018թ.**

*(տոկոսներով)*

| Բուժհիմնարկների մասնագետների ցանկ | Ոչ աղքատներ | Աղքատներ (առանց ծայրահեղ աղքատների) | Ծայրահեղ աղքատներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Ընտանեկան բժիշկ | 27.3 | 29.0 | 23.3 | 27.5 |
| Մանկաբույժ | 6.5 | 5.8 | 37.1 | 6.8 |
| Մանկաբարձ/ գինեկոլոգ | 1.8 | 1.8 | 0.0 | 1.8 |
| Թերապևտ | 28.0 | 28.8 | 38.4 | 28.2 |
| Նեղ մասնագետ | 24.6 | 23.0 | 0.0 | 24.0 |
| Ատամնաբույժ | 1.2 | 2.4 | 1.2 | 1.4 |
| Մասնավոր բժիշկ | 3.6 | 3.0 | 0.0 | 3.5 |
| Դիագնոստիկ կենտրոն | 2.1 | 0.0 | 0.0 | 1.7 |
| Շտապ օգնություն | 2.4 | 5.0 | 0.0 | 2.9 |
| Այլ | 2.5 | 1.2 | 0.0 | 2.2 |
| **Ընդամենը** | **100** | **100** | **100** | **100** |

Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2018թ.*

Բնակչության 28.2%-ը հիվանդանալու դեպքում խորհրդատվության համար դիմել է թերապևտին, 27.5%-ը ընտանեկան բժշկին, 24.0%-ը՝ նեղ մասնագետին, այն դեպքում, երբ մասնավոր բժիշկներին է դիմել միայն 3.5%-ը:

**Աղյուսակ 7.2. Հայաստան. Հետազոտվող ամսվա վերջին այցի ժամանակ առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) ծառայություններին դիմած բնակչության բաշխումն ըստ բուժհիմնարկի մասնագետների և բնակության վայրի, 2018թ.**

*(տոկոսներով)*

| Բուժհիմնարկի մասնագետների ցանկ | Ք.Երևան | Այլ քաղաքներ | Գյուղեր | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Ընտանեկան բժիշկ | 1.2 | 33.5 | 49.0 | 27.4 |
| Մանկաբույժ | 9.5 | 6.7 | 4.3 | 6.8 |
| Մանկաբարձ/ գինեկոլոգ | 1.3 | 3.1 | 1.3 | 1.8 |
| Թերապևտ | 37.7 | 26.0 | 20.7 | 28.3 |
| Նեղ մասնագետ | 33.8 | 21.4 | 16.3 | 24.0 |
| Ատամնաբույժ | 0.8 | 0.9 | 2.3 | 1.4 |
| Մասնավոր բժիշկ | 7.8 | 1.5 | 0.6 | 3.5 |
| Դիագնոստիկ կենտրոն | 0.0 | 3.2 | 2.2 | 1.7 |
| Շտապ օգնություն | 4.5 | 2.4 | 1.6 | 2.9 |
| Այլ | 3.4 | 1.3 | 1.7 | 2.2 |
| **Ընդամենը** | **100** | **100** | **100** | **100** |

Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2018թ.*

Հիվանդանալու դեպքում խորհրդատվության համար ք. Երևանի բնակչությունն ավելի հաճախ դիմել է թերապևտին, այլ քաղաքների և գյուղերի բնակչությունը՝ ընտանեկան բժշկին:

**Աղյուսակ 7.3. Հայաստան. Հետազոտվող ամսվա վերջին այցի ժամանակ օգնության համար առողջության առաջնային պահպանման ծառայություններին դիմած բնակչության վճարումների բաշխումն ըստ բուժհիմնարկի մասնագետների, 2018թ.**

*(տոկոսներով)*

| Բուժհիմնարկի մասնագետների ցանկ | Ընդամենը վճարվել է | այդ թվում | | |
|---|---|---|---|---|
| | | անձնակազմից որևէ մեկին գնացուցակով | նվերներ կամ ծառայություններ | խորհրդատվության հետ կապված վճարումներ (ռենտգեն/ լաբորատոր հետազոտություն) |
| Ընտանեկան բժիշկ | 100 | 13.0 | 7.0 | 80.0 |
| Մանկաբույժ | 100 | 25.9 | 21.9 | 52.2 |
| Մանկաբարձ/ գինեկոլոգ | 100 | 46.5 | 2.4 | 51.1 |
| Թերապևտ | 100 | 45.5 | 3.2 | 51.3 |
| Նեղ մասնագետ | 100 | 58.4 | 0.2 | 41.4 |
| Ատամնաբույժ | 100 | 98.2 | 0.00 | 1.8 |
| Մասնավոր բժիշկ | 100 | 81.3 | 1.1 | 17.6 |
| Դիագնոստիկ կենտրոն | 100 | 62.8 | 0.2 | 37.0 |
| Շտապ օգնություն | 100 | 100.0 | 0.00 | 0.00 |
| Այլ | 100 | 32.8 | 0.00 | 67.2 |
| Ընդամենը | 100 | 68.7 | 0.9 | 30.4 |

Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2018թ.*

Հետազոտվող ամսվա վերջին այցի ժամանակ, պոլիկլինիկական բուժհիմնարկների մասնագետների օգնությանը դիմած բնակչությունը, միջինում իր ծախսերի 68.7%-ը վճարել է անձնակազմից որևէ մեկին գնացուցակով, միայն 0.9%-ը՝ նվերների տեսքով, իսկ 30.4%-ը՝ ռենտգենի կամ լաբորատոր հետազոտության համար:

Վճարումների չափը տարբերվում է ըստ աղքատության մակարդակի: Ոչ աղքատների կողմից պոլիկլինիկական բուժհիմնարկներում անձնակազմից որևէ մեկին գնացուցակով կատարած վճարման միջին չափը 3.2 անգամ ավելին է, քան աղքատներինը:

Ոչ աղքատների կողմից խորհրդատվության հետ կապված վճարումները (ռենտգեն/ լաբորատոր հետազոտություն) 3.9 անգամ գերազանցել են աղքատների կողմից կատարված վճարումներին:

Պոլիկլինիկական բուժհիմնարկների մասնագետներին դիմած հիվանդների 40.9%-ի մոտ ախտորոշվել է հիպերտոնիա: Վերջին այցի ժամանակ էլեկտրակարդիոգրաֆիա անցել են դիմած հիվանդների 22.3%-ը, իսկ խոլեստերինը ստուգվել է դիմած հիվանդների 19.8%-ի մոտ:

Առողջության առաջնային պահպանման ծառայություններին չդիմելու հիմնական պատճառն ինքնաբուժումն է՝ 56.3% և ֆինանսական վատ վիճակը՝17.0%, իսկ բժշկական խորհրդատվության կամ բուժման համար չդիմածների տեսակարար կշիռն ըստ պատճառների և բնակության վայրի, բերված է ստորև.

**Աղյուսակ 7.4. Հայաստան. Հետազոտվող ամսվա վերջին այցի ժամանակ առողջության առաջնային պահպանման ծառայություններին չդիմելու հիմնական պատճառներն ըստ բնակության վայրի, 2018թ.**

*(տոկոսներով)*

| | Ընդամենը | Ք.Երևան | Այլ քաղաքներ | Գյուղեր |
|---|---|---|---|---|
| **Ընդամենը**<br>այդ թվում՝ | **100** | **100** | **100** | **100** |
| ինքնաբուժում | 56.3 | 62.2 | 56.2 | 47.2 |
| ֆինանսապես ի վիճակի չէի բուժվելու | 17.0 | 11.0 | 20.3 | 22.8 |
| շատ հեռու է | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| խնդիրը լուրջ չէր | 12.5 | 11.9 | 12.3 | 13.7 |
| կարիք չի եղել | 7.7 | 6.9 | 6.2 | 10.6 |
| բժիշկը բարեկամ/ընկեր է | 3.2 | 3.0 | 3.0 | 3.8 |
| այլ | 3.2 | 5.0 | 1.9 | 1.9 |

Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2018թ.*

Ըստ բնակության վայրի, հետազոտված բնակչությունը, որպես բժշկական խորհրդատվության կամ բուժման չդիմելու հիմնական պատճառ, նշել է ինքնաբուժումը (երևանաբնակներ՝ 62.2%, այլ քաղաքների բնակչություն՝ 56.2% և գյուղական բնակչություն՝ 47.2%), ֆինանսականը (գյուղական բնակչություն՝ 22.8%, այլ քաղաքների բնակչություն՝ 20.3%, երևանաբնակներ՝11.0%): Ֆինանսական պատճառը բնակության բոլոր վայրերում նշվել է որպես երկրորդ կարևոր պատճառ:

2018թ.-ի հետազոտության անցած 12 ամիսների ընթացքում հիվանդացած բնակչությունը հիվանդանոցներ է դիմել բուժօգնության համար միջինում 2.5 անգամ: Գիշերը հիվանդանոցում

է մնացել հիվանդանոց վերջին այցի ժամանակ դիմածների 44.7%-ը, որոնք հիվանդանոցում պառկել են միջինում 7.2 օր: Հիվանդանոցներում բուժում ստացած (պառկած) բնակչությունն, ըստ այնտեղ մնալու տևողության, բաշխվել է հետևյալ կերպ, մեկ շաբաթից պակաս 68.4%, մեկ շաբաթից մինչև երկու շաբաթ` 22.8% և երկու շաբաթից ավել` 8.8%:

**Աղյուսակ 7.5. Հայաստան. Հետազոտվող ամսվա ընթացքում վերջին այցի ժամանակ բուժօգնության համար հիվանդանոց դիմած բնակչության բաշխվածությունն ըստ վճարման ձևի*, ըստ բուժհիմնարկի մասնագետների, 2018թ.**

*(տոկոսներով)*

| | Ընդա-մենը | այդ թվում` | | | |
|---|---|---|---|---|---|
| | | հիվանդա-նոցի գանձա-պահին | վճարումներ անմիջապես բուժ. անձնա-կազմին (բժիշկներ,բուժ. քույրեր և այլն) | նվեր (սննդամթերք և այլն) կամ որևէ մատուցած ծառայու-թյուն բուժ. անձնա-կազմից որևէ մեկին | այլ վճարումներ, այդ թվում` լաբորատոր և ռենտգեն հետազոտություն-ների կամ դեղորայքի համար |
| Վիրաբույժ | 100 | 88.3 | 7.3 | 0.2 | 4.2 |
| Ռեանիմատոլոգ | 100 | 38.3 | 15.0 | 0.0 | 46.7 |
| Թերապևտ | 100 | 60.2 | 14.2 | 0.4 | 25.2 |
| Սրտաբան | 100 | 79.0 | 13.4 | 0.0 | 7.6 |
| Մանկաբարձ-գինեկոլոգ | 100 | 71.1 | 18.3 | 1.0 | 9.6 |
| Ուռոլոգ | 100 | 62.2 | 17.0 | 0.4 | 20.4 |
| Գաստրոէնտերոլոգ | 100 | 64.7 | 12.0 | 0.2 | 23.1 |
| Ուռուցքաբան | 100 | 65.5 | 7.5 | 0.6 | 26.4 |
| Էնդոկրինոլոգ | 100 | 72.2 | 6.2 | 0.4 | 21.2 |
| Նյարդաբան | 100 | 67.6 | 17.7 | 0.0 | 14.7 |
| Այլ | 100 | 69.1 | 21.0 | 0.2 | 9.7 |
| **Ընդամենը** | **100** | 80.7 | 10.3 | 0.3 | 8.7 |

Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2018թ.*

**որևէ վճարում կատարած հիվանդների հաշվով*

Ինչպես երևում է աղյուսակից, միջինում, յուրաքանչյուր հիվանդ, հիվանդանոցի գանձապահին վճարել է ողջ գումարի 80.7%-ը, անմիջապես բուժ. անձնակազմին` 10.3%-ը, բացի այդ նվերների տեսքով` 0.3%, այլ վճարումների տեսքով (լաբորատոր և ռենտգեն հետազոտությունների կամ դեղորայքի համար)` 8.7%: Գանձապահական վճարումներից ամենաբարձր տեսակարար կշիռը գրանցվել է վիրաբույժների, սրտաբանների, և էնդոկրինոլոգների մոտ: Իսկ անմիջապես բուժանձնակազմին վճարումների ամենաբարձր տեսակարար կշիռը դիտվել է մանկաբարձ-գինեկոլոգների և նյարդաբանների և ուռոլոգների մոտ: Լաբորատոր և ռենտգեն հետազոտությունների կամ դեղորայքի համար ծախսերի ամենամեծ տեսակարար կշիռը գրանցվել է ռեանիմատոլոգների, ուռուցքաբանների, թերապևտների, գաստրոէնտերոլոգների և էնդոկրինոլոգների մոտ:

Ըստ 2018թ.-ի ՏՏԿԱՀ ստացված տվյալների` բժշկական ծառայությունների համար կատարված ծախսերը կազմել են տնային տնտեսությունների սպառողական ծախսերի 6.0%-ը

կամ միջինում 2 770 դրամ մեկ առկա անդամի հաշվով ամսական (Հավելված 3, աղյուսակ A6.1), ոչ աղքատների՝ 8.2%-ը կամ 3 735 դրամ, աղքատների(առանց ծայրահեղ աղքատների)՝ 0.2%-ը կամ 113 դրամ, ծայրահեղ աղքատների՝ 0.1%-ը կամ 67 դրամ:

Ըստ 2018թ.-ի ՏՏԿԱՀ ստացված տվյալների՝ բժշկական ծառայությունների համար կատարված ծախսերը կազմել են տնային տնտեսությունների ամբողջ ծառայությունների վրա կատարված ծախսերի 16.6%-ը (Հավելված 3, աղյուսակ A6.1):

Հայաստանում անվիճելի է աղքատ տնային տնտեսությունների համար պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության կարևորությունը: Ուստի, հաշվի առնելով, որ այն կախված է ընտանեկան նպաստ ստանալուց, կարևորվում է ոչ միայն նպաստի հասցեականության բարձրացումն, այլև աղքատների և ծայրահեղ աղքատների ընդգրկվածության աստիճանը:

Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության իրավունք ունեցել է բնակչության միայն 8.3%-ը: Ըստ աղքատության մակարդակի՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության իրավունք ունեցել է ծայրահեղ աղքատների 5.0%-ը, աղքատների (առանց ծայրահեղ աղքատների)՝ 8.5%-ը և ոչ աղքատների՝ 8.2%-ը:

Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների միայն 12.6%-ն է ունեցել պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության իրավունք, այդ թվում՝ ծայրահեղ աղքատների՝ 5.3%-ը, աղքատների (առանց ծայրահեղ աղքատների)՝ 13.5%-ը և ոչ աղքատների՝ 12.2%-ը:

Ինչ վերաբերում է ընտանեկան նպաստի համակարգում չհաշվառված տնային տնտեսություններին, ապա պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության իրավունք ունեցել է 7.6%-ը, այդ թվում՝ ծայրահեղ աղքատների՝ 4.8%-ը, աղքատների (առանց ծայրահեղ աղքատների)՝ 6.7%-ը և ոչ աղքատների՝ 7.8%-ը: Միևնույն ժամանակ տնային տնտեսությունների 1.4%-ը տեղյակ էլ չէին ունեցե՞լ են, թե՞ ոչ, այդ փաթեթից օգտվելու իրավունք, այսինքն՝ առկա է չտեղեկացված լինելու հանգամանքը:

Գծապատկեր 7.1-ում ներկայացված է ընդհանուր սպառման մեջ առողջապահությանն ուղղված ծախսերի բաշխումն՝ ըստ քվինտիլային խմբերի: Առողջապահության ծառայությունների վրա ծախսերի տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր սպառման ագրեգատի նկատմամբ ամենահարուստ քվինտիլային խմբի համար ավելի բարձր է, քան ամենաաղքատ քվինտիլային խմբում (15.8%՝ 3.1%-ի դիմաց): Հավելված 2-ի Աղյուսակ A3.9-ից պարզ երևում է, որ եթե ամենաաղքատ քվինտիլում առողջապահության ծառայությունների վրա ծախսերը զիջում են այդ ծառայությունների վրա միջին ծախսին 5.8 անգամ, ապա ամենավերին քվինտիլի բնակչության առողջապահության ծառայությունների վրա կատարված ծախսերը 3.5 անգամ գերազանցում են այդ ծառայությունների վրա միջին ծախսին:

**Գծապատկեր 7.1. Հայաստան. Առողջապահության ծառայությունների վրա ծախսերի մասնաբաժինը բնակչության ընդհանուր սպառման ագրեգատի նկատմամբ, ըստ քվինտիլային խմբերի, 2018թ.**

*(տոկոսներով)*




Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2018թ.*

Ոչ պակաս կարևոր ցուցանիշ է ամենամոտ բուժկետի հեռավորությունը տնային տնտեսությունից: Ըստ 2018թ.-ի հետազոտության, նման տվյալներ ստացվել են միայն գյուղական բնակավայրերով: Ըստ այդ տվյալների, գյուղաբնակ տնային տնտեսությունների 73.5%-ը պատասխանել է, որ բուժկետը գտնվում է մինչև 1 կմ հեռավորության վրա: Միևնույն ժամանակ, տնային տնտեսությունների 0.5%-ը պատասխանել է, որ այն գտնվում է 10 կմ-ից հեռու: Ըստ սպառման քվինտիլային խմբերի, տվյալները բերված են աղյուսակ 7.6-ում: Գյուղական բնակավայրերում բուժկետի մատչելիությունն ըստ սպառման քվինտիլների տարբերվում է: Այն տնային տնտեսությունների տեսակարար կշիռը, որոնց կողմից արձանագրվել է բուժկետի՝ ավելի քան 10 կմ հեռու գտնվելու փաստը, որը սպառման 2-րդ քվինտիլում կազմում է 1.4%:

**Աղյուսակ 7.6. Հայաստան.Գյուղական բնակավայրերում բուժհիմնարկի մատչելիությունն ըստ սպառման քվինտիլների, 2018թ.**

*(տոկոսներով)*

| Հեռավորությունը | Քվինտիլներ | | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | 1-ին | 2-րդ | 3-րդ | 4-րդ | 5-րդ | |
| 0-1 կմ | 71.0 | 71.8 | 72.4 | 75.2 | 75.3 | 73.5 |
| 1-3 կմ | 25.3 | 26.9 | 26.8 | 24.2 | 24.0 | 25.3 |
| 4-5 կմ | - | - | 0.2 | 0.3 | 0.2 | 0.1 |
| 6-10 կմ | 2.8 | - | 0.5 | 0.2 | 0.1 | 0.6 |
| >10 կմ | 0.9 | 1.4 | 0.2 | 0.1 | 0.4 | 0.5 |

Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2018թ.*

Հետազոտված տնային տնտեսությունների ծախսերի մեջ դեղորայքի ձեռք բերման համար կատարված ծախսերը կազմել են 4.0%: Դեղորայքի ձեռք բերման համար կատարած ամսական ծախսերը մեկ շնչի հաշվով կազմել են ընդամենը 1 842 դրամ, ընդ որում, ոչ աղքատներինը՝ 2 167 դրամ, աղքատներինը՝ 797 դրամ և ծայրահեղ աղքատներինը՝533 դրամ: Ոչ աղքատ բնակչության դեղորայքի ձեռք բերման համար կատարված ամսական ծախսերը մեկ շնչի հաշվով 2.7 անգամ գերազանցում են աղքատների նույնանման ծախսերին, իսկ ծայրահեղ աղքատների նկատմամբ՝ 4.1 անգամ:

Եթե քաղաքային բնակավայրերում դեղատների ցանցը բավականին զարգացած է, ապա գյուղական վայրերում կան մատչելիության խնդիրներ: Ըստ 2018թ.-ի հետազոտության տվյալների գյուղաբնակ տնային տնտեսությունների 35.3%-ը պատասխանել է, որ դեղատունը գտնվում է մինչև 1 կմ հեռավորության վրա 23.6%-ը, պատասխանել է, որ այն գտնվում է 10 կմ-ից հեռու: Ըստ քվինտիլային խմբերի, տվյալները բերված են Աղյուսակ 7.7-ում: Ամենահարուստ՝ հինգերորդ քվինտիլի համար դեղատան մատչելիությունը, տարբերվում է ամենաաղքատ՝ առաջին քվինտիլից, համապատասխանաբար՝ 19.0%-ը 30.3%-ի դիմաց: Տնային տնտեսությունների տեսակարար կշիռը, որոնք նշել են, որ ամենամոտ դեղատունը գտնվում է գյուղից ավելի քան 10 կմ հեռու, ըստ սպառման քվինտիլների, տատանվում է 19-ից մինչև 30%-ը:

**Աղյուսակ 7.7. Հայաստան. Դեղատան մատչելիությունը գյուղական բնակավայրերում 2018թ.-ին, ըստ սպառման քվինտիլների**

*(տոկոսներով)*

| Հեռավորությունը | Քվինտիլներ | | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | 1-ին | 2-րդ | 3-րդ | 4-րդ | 5-րդ | |
| 0-1 կմ | 30.7 | 34.7 | 35.6 | 34.2 | 39.5 | 35.3 |
| 1-3 կմ | 20.6 | 19.5 | 17.8 | 19.0 | 17.1 | 18.6 |
| 4-5 կմ | 9.2 | 9.7 | 9.4 | 6.9 | 4.3 | 7.6 |
| 6-10 կմ | 9.2 | 10.5 | 13.0 | 17.7 | 20.1 | 14.9 |
| >10 կմ | 30.3 | 25.6 | 24.1 | 22.2 | 19.0 | 23.6 |

Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2018թ.*

Մինչև 5 տարեկան երեխա ունեցող տնային տնտեսությունները պրոֆիլակտիկ զննման կամ հետծննդյան խորհրդատվության համար հետազոտությանը նախորդող մեկ ամսվա ընթացքում նշված տարիքի երեխաների 30.1%-ին բերել են պոլիկլինիկա, իսկ չհաճախման պատճառները (պատասխանների նկատմամբ) բաշխվել են հետևյալ կերպ՝ ծառայություններն անհրաժեշտ չեն՝ 93.0%, բուժսպասարկման որակն անբավարար է՝ 0.2%, շատ հեռու է՝ 1.3%, բուժհաստատություն չկա՝ 1.5%, այլ պատճառներով՝ 4.0%: Պոլիկլինիկա հաճախած տնային տնտեսությունների 36.6%-ը պատասխանել է, որ երեխային կատարվել է իմունիզացիա, 94.8%-ը՝ չափել են երեխայի քաշը, 94.0%-ը չափել են երեխայի հասակը, 95.2%-ը՝ ստացել են խորհրդատվություն երեխայի աճի և զարգացման վերաբերյալ, 24.9%-ն էլ կատարել է արյան հետազոտություն:

# Գլուխ 8. Կրթությունը և աղքատությունը

Կրթությունը կարող է օգնել մարդկանց դուրս գալ աղքատությունից: Այն դռներ է բացում աշխատանքի առջև և գրավական է հանդիսանում վարկերի ստացման համար: Կրթությունը տալիս է մարդկանց գիտելիք և հմտություններ, որոնք անհրաժեշտ են եկամուտների ավելացման և զբաղվածության հնարավորությունների ընդլայնման համար: Երբ կրթությունն ունի լայն տարածում և հասանելի է աղքատներին, կանանց և խոցելի խմբերին, ապա այն ունի նաև տնտեսական աճի լայն վերաբաշխվածության հեռանկար: Մյուս կողմից, աղքատությունը դրդում է ծնողներին երեխաներին հանել դպրոցից և ուղարկել աշխատելու, քանի որ վճարունակ չեն:

Հայաստանում գրեթե ողջ բնակչությունը գրագետ է: 2011թ.-ի մարդահամարը ցույց տվեց, որ Հայաստանի բնակչության միայն 0.3 տոկոսը գրաճանաչ չէ: Հանրակրթությունը մատչելի է բոլորի համար թե՛ տղաների և թե՛ աղջիկների, բայց ոչ հավասարապես: 2018/2019 ուսումնական տարում սեռային հավասարության ցուցանիշը հանրակրթական դպրոցներում (տղաների համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ աղջիկների համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը) կազմել է 1.04, ընդ որում, տարրական դպրոցում այն կազմել է՝ 1.01, հիմնական դպրոցում՝ 1.01, ավագ դպրոցում՝ 1.20:

Ի տարբերություն հիմնական կրթության, սովորողների ընդգրկվածությունը միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում և բարձրագույն կրթական հաստատություններում համեմատաբար ավելի ցածր է, իսկ աղքատների և ոչ աղքատների ընգրկվածության տարբերությունը բավական նկատելի: Բարձրագույն կրթության հետ կապված բարձր ծախսերը և հատկապես դրանց մատչելիությունը, կրթություն ստանալուց հետո բարձր աշխատավարձ ստանալու ցածր հավանականությունն այն հիմնական պատճառներն են, որով կարելի է բացատրել հիմնական և, մասնավորապես, ընդհանուր միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո աղքատ տնային տնտեսությունների համապատասխան տարիքի բնակչության կրթական համակարգից դուրս մնալը:

2018թ.-ին կրթության մասով համախմբված բյուջեի ծախսերի մասնաբաժինը 2008թ.-ի համեմատ նվազել է (2008թ.-ին 13.7%-ից 2018թ.-ին կազմելով 11.2%): Ծախսերի ենթաճյուղային կառուցվածքում հիմնական շեշտադրումը դրված է միջնակարգ կրթության վրա:

Ներդիր 8.1

*Տեղեկատվություն*

*Կրթության ոլորտի 2018 թվականի գործունեության վերաբերյալ*

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գործունեությունն ուղղված է եղել կրթության որակի և մատչելիության բարելավմանը՝ համակարգի բովանդակային և մեթոդների արդիականացման, իրավական դաշտի ամրապնդման ու կառավարման արդյունավետության բարձրացման ճանապարհով:

***Հանրակրթության ոլորտ***

Մշակվել և ՀՀ կառավարությանն է ներկայացվել «Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգը հաստատելու մասին», «Նոր սերնդի դասագրքերի և ուսումնաօժանդակ գրականության ստեղծման չափանիշներին և գործիքակազմին հավանություն տալու մասին» որոշման նախագիծը: Իրավական ակտերի նախագծերի վերջնական ընդունման համար անհրաժեշտ են համապատասխան օրենքներում կատարել լրացումներ, որից հետո դրանք կհաստատվեն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի պահանջները:

Մշակվել և ՀՀ կառավարությանն է ներկայացվել «Նախադպրոցական կրթության այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների ներդրման ծրագրին հավանություն տալու մասին», ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

«Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում 2018 թվականին հիմնվել է 17 նախակրթարան՝ 425 երեխայի ընդգրկմամբ, այդ թվում՝ Վայոց Ձորում՝ 3, Լոռիում՝ 4, Գեղարքունիքում՝ 1, Երևանում՝ 9 նախակրթարան:

Ընդլայնվել է համընդհանուր ներառական կրթության համակարգը՝ ընդգրկելով նաև ՀՀ Արմավիրի մարզը, հանրակրթական դպրոցներում ներդրվել է ուսուցչի օգնականի հաստիք, կիրառվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի:

Ընդլայնվել է «Կայուն դպրոցական սնունդ» ազգային ծրագիրը՝ 2018 թվականին ծրագրում ներառվել է ՀՀ Շիրակի մարզը: 2018 թվականի սեպտեմբերի 1-ից ՀՀ Շիրակի մարզի հանրակրթական դպրոցների նախակրթարանների, 1-4-րդ դասարանների և ներառական կրթության համակարգում ընդգրկված շուրջ 13 000 սովորողներ ստանում են անվճար սնունդ: Շարունակվել է ծրագրի իրականացումը մինչ այդ մեկնարկած՝ Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի և Տավուշի մարզերում: Միաժամանակ շարունակվել է ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից իրականացվող դպրոցական սննդի ծրագիրը՝ ներառելով Լոռու, Արագածոտնի, Կոտայքի, Գեղարքունիքի և Արմավիրի մարզերի շուրջ 60 հազար սովորող:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում մեկնարկել են «Քո արվեստը դպրոցում», «Դաս Ա» նախագծերը և Դպրոցական աբոնեմենտային ծրագիրը, որում ընդգրկվել են հանրապետության բոլոր դպրոցները:

Վերապատրաստվել է շուրջ 7 000 ուսուցիչ, ատեստավորման արդյունքում առաջին աստիճանի տարակարգ է շնորհվել 393 ուսուցչի, իսկ 2-րդ աստիճանի տարակարգ՝ 18 ուսուցչի:

ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Հաստատվել է «Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը:

2018թ. անցկացվել են դպրոցականների հանրապետական օլիմպիադաներ հանրակրթական 16 առարկայից, որոնց մասնակցել է շուրջ 1 500 սովորող, իսկ միջազգային օլիմպիադաներին Հայաստանը թիմային մասնակցություն է ունեցել «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Քիմիա», «Ինֆորմատիկա», «Աստղագիտություն» «Կենսաբանություն» «Աշխարհագրություն» առարկաներից՝ շահելով 11 մեդալ՝ 4 արծաթ և 7 բրոնզ: 2018 թվականի օգոստոսի 22-ին բացվել է Հայ-չինական բարեկամության դպրոցը, որտեղ կազմակերպվում է 5-ից 12-րդ դասարանների շուրջ 400 աշակերտների ուսումնառությունը:

***Արտաուսումնական դաստիարակություն***

Աշխատանքներ են տարվել մանկապատանեկան սպորտի զարգացման, բակային սպորտի մասսայականացման, հաշմանդամային սպորտի զարգացման, «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի և առողջ ապրելակերպին առնչվող հիմնախնդիրների ուսումնասիրման վերաբերյալ:

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչները և ծրագրերը վերանայելու նպատակով ՀՀ կրթության և գիտության և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարների համատեղ հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ:

Տարվա ընթացքում անցկացվել են մի շարք միջոցառումներ ուսումնամարզական միջոցառումներ, այդ թվում՝ «ՀՀ Ազգային ժողովի գավաթի» խաղարկությունը, որին մասնակցել է ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 1-6-րդ դասարանների 5 245 դպրոցական:

Անցկացվել են ՀՀ անկախության 27-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական 27-րդ մարզական խաղերը, որոնց մասնակցել է շուրջ 55 000 դպրոցական:

***Նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթություն***

2018թ. վերամշակվել և ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման 2018-2022 թվականների ռազմավարական ծրագրին և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվել է ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում սոցիալական գործընկերության հայեցակարգը և պատրաստվել դրանից բխող օրենսդրական փաթեթի նախագիծ շրջանառելու նպատակով:

Մշակվել և հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների անվճար ուսուցմամբ (նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ) 2018/2019 ուսումնական տարվա ընդունելության տեղերն հաստատելու մասին» N 686-Ն որոշումը:

ՀՀ կառավարության և Եվրոպական Միության միջև ստորագրված «Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» ԵՀԳ/2015/038-246 ֆինանսավորման համաձայնագրի շրջանակներում մշակվել են 24 գյուղատնտեսական և գյուղատնտեսությանն առնչվող ՆՄՄԿՈՒ պետական կրթական (որակավորման) չափորոշիչ և համապատասխան ուսումնական պլան՝ ձեռներեցության մոդուլի պարտադիր ներառմամբ: Կարևորելով աշխատաշուկա-կրթական համակարգ փոխադարձ կապի ապահովումը՝ շարունակվում են մասնագիտական կողմնորոշման համակարգի զարգացմանն ուղղված աշխատանքները:

Երկակի ուսուցման (դուալ) կրթական համակարգի ընդլայնման նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարի համապատասխան հրամաններով 2018-2019 ուսումնական տարվանից երկակի ուսուցման (դուալ) կրթական համակարգը փորձնականորեն ներդրվել է 8 ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում. ՄԿՈւ ուսումնական հաստատությունների արդյունավետ կառավարման, ռեսուրսների համակենտրոնացման (խոշորացում,

օպտիմալացում) և ծախսարդյունավետության բարձրացման նպատակով իրականացվել է ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քարտեզագրում:

Մշակվել է «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի նախագիծը:

***Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն***

Լրամշակվել է «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ նախաձեռնելով «Բարձրագույն կրթության և գիտահետազոտական գործունեության մասին» նոր՝ միասնական օրինագծի մշակում: Միասնական օրինագծի մշակված տարբերակը գտնվում է փորձագիտական քննարկման փուլում:

Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի հավատարմագրման հանձնաժողովի որոշմամբ Գորիսի պետական համալսարանին և Եվրոպական համալսարանին շնորհվել է պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 2 տարի ժամկետով:

Հաստատվել է ՀՀ բուհերի առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով 2019/2020 ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը:

Համաձայն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու մասին կարգի պահանջների՝ պետության կողմից իրականացվել է սոցիալապես անապահով, ինչպես նաև՝ սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի ուսանողներին ընտանիքների ուսանողների ուսման վարձավճարների փոխհատուցում՝ 50-100%-ի չափով:

2018 թվականին փոխհատուցում ստացած ուսանողների թիվը կազմել է մոտ 3 300, ուսման վարձավճարի փոխհատուցման գումարը կազմել է մոտ 700 մլն ՀՀ դրամ:

Առկա ուսուցմամբ, բակալավրի կրթական աստիճանում բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող երկու և ավելի երեխա ունեցող ուսանողների համար նախատեսվել է ուսման վարձի լրիվ փոխհատուցում:

***Այլ***

Աշխատանքներ են իրականացվել ՀՀ հանրակրթական դպրոցում իտալերենի խորացված ուսուցում կազմակերպելու նպատակով: Ներկայումս իրականացվում է ծրագրի փորձնական փուլը, և մշակվում է իտալերենի խորացված ուսուցման ծրագրի նախագիծը՝ 2019/2020 ուստարում ներդնելու համար:

Ֆրանկոֆոն պետությունների ու կառավարությունների ղեկավարների 17-րդ գագաթաժողովի կազմակերպման նպատակով հավաքագրվել և ներկայացվել են ՀՀ ուսումնական հաստատությունների կամավոր 732 դասախոսների և ուսանողների թեկնածություններ:

Սփյուռքի հետ համագործակցության շրջանակում իրականացվել է սփյուռքահայ ուսուցիչների մեկամսյա վերապատրաստման ծրագիրը, որին մասնակցել է 57 մասնագետ՝ 16 երկրից:

Ներդիր 8.2

*Նախադպրոցական հաստատությունների գործունեություն*[1]

2018թ. ՀՀ-ում գործել է 884 համայնքային, գերատեսչական և ոչ պետական նախադպրոցական հաստատություն (ՆԴՀ), որոնցից 686-ը՝ մանկապարտեզ, 67-ը՝ մսուր-մանկապարտեզ, 131-ը՝ դպրոց-մանկապարտեզ: ՆԴՀ-ների ընդհանուր քանակից 824-ը համայնքային ենթակայության է, 10-ը՝ գերատեսչական և 50-ը՝ ոչ պետական: Երեխաների ընդգրկվածությունը ՆԴՀ-ներում (0-5 տարեկան բնակչության թվաքանակից) կազմել է 32.6%, քաղաքներում՝ 38.0%, գյուղերում՝ 22.6%: Մեկ խմբում երեխաների միջին թվաքանակը կազմել է 26 երեխա, տեղերի փաստացի զբաղվածությունը՝ 89.8%: Միջին հաշվով մեկ ՆԴՀ հաճախել է 89 երեխա, մեկ մանկավարժին բաժին է ընկել 13 երեխա: ՆԴՀ-ների շենքերի ընդհանուր մակերեսը կազմել է 719.1 հազ. քառ. մ: ՆԴՀ-ներին կից (օժանդակ) տարածքի մակերեսը կազմել է 632.8 հազ. քառ. մ:

**ՆԴՀ-ների գործունեության ցուցանիշներն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2018թ.**

| | ՆԴՀ-ների քանակը, միավոր | այդ թվում՝ ըստ աշխատանքային ռեժիմի | | | Խմբերի քանակը, միավոր | | Նախագծային հզորությունը (տեղերի քանակը), միավոր | Երեխաների թվաքանակը, մարդ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հնգօրյա | վեցօրյա | շուրջօրյա | ընդամենը | որից՝ 3 և բարձր տարիքի երեխաների | | ընդամենը | նրանցից՝ աղջիկներ |
| ք.Երևան | 220 | 200 | 19 | 1 | 1 225 | 1 117 | 34 557 | 33 012 | 16 207 |
| Արագածոտն | 30 | 30 | - | - | 86 | 81 | 2 677 | 2 439 | 1 219 |
| Արարատ | 78 | 78 | - | - | 227 | 217 | 7 910 | 6 742 | 3 251 |
| Արմավիր | 103 | 103 | - | - | 228 | 210 | 7 872 | 6 525 | 3 186 |
| Գեղարքունիք | 47 | 47 | - | - | 130 | 125 | 4 284 | 3 817 | 1 813 |
| Լոռի | 94 | 94 | - | - | 198 | 191 | 5 856 | 5 149 | 2 494 |
| Կոտայք | 53 | 53 | - | - | 246 | 225 | 7 593 | 6 641 | 3 157 |
| Շիրակ | 114 | 114 | - | - | 247 | 233 | 6 107 | 5 455 | 2 613 |
| Սյունիք | 50 | 50 | - | - | 197 | 162 | 5 019 | 4 533 | 2 184 |
| Վայոց ձոր | 31 | 31 | - | - | 59 | 59 | 1 864 | 1 367 | 636 |
| Տավուշ | 64 | 64 | - | - | 203 | 122 | 4 312 | 3 394 | 1 637 |
| **Ընդամենը ՀՀ** | **884** | **864** | **19** | **1** | **3 046** | **2 742** | **88 051** | **79 074** | **38 397** |

**ՆԴՀ-ներ հաճախող երեխաների թվաքանակն ըստ տարիքի,**
**ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2018թ.**

*մարդ*

| | Մինչև 1.5 տարեկան | | 1.5–ից մինչև 3 տարեկան | | 3 – 5 տարեկան | | 6 տարեկան | | 7 տարեկան | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ընդամենը | նրանցից՝ աղջիկներ | ընդամենը | նրանցից՝ աղջիկներ | ընդամենը | նրանցից՝ աղջիկներ | ընդամենը | նրանցից՝ աղջիկներ | ընդամենը | նրանցից՝ աղջիկներ |
| ք.Երևան | 25 | 13 | 2 709 | 1 268 | 20 712 | 10 119 | 9 558 | 4 801 | 8 | 6 |
| Արագածոտն | - | - | 205 | 120 | 1 644 | 752 | 584 | 343 | 6 | 4 |
| Արարատ | - | - | 300 | 148 | 4 329 | 2 107 | 2 043 | 958 | 70 | 38 |
| Արմավիր | - | - | 334 | 161 | 2 393 | 1 179 | 3 770 | 1 829 | 28 | 17 |
| Գեղարքունիք | - | - | 105 | 51 | 2 289 | 996 | 1 373 | 748 | 50 | 18 |
| Լոռի | - | - | 208 | 105 | 3 259 | 1 587 | 1 682 | 802 | - | - |
| Կոտայք | - | - | 452 | 213 | 4 265 | 2 049 | 1 915 | 890 | 9 | 5 |
| Շիրակ | - | - | 292 | 134 | 2 793 | 1 325 | 2 342 | 1 137 | 28 | 17 |
| Սյունիք | 1 | - | 647 | 324 | 2 636 | 1 289 | 1 240 | 568 | 9 | 3 |
| Վայոց ձոր | - | - | - | - | 878 | 403 | 485 | 229 | 4 | 4 |
| Տավուշ | - | - | 285 | 142 | 2 008 | 976 | 1 099 | 517 | 2 | 2 |
| **Ընդամենը ՀՀ** | **26** | **13** | **5 537** | **2 666** | **47 206** | **22 782** | **26 091** | **12 822** | **214** | **114** |

[1] *Գլխավոր համակցությունը (նախադպրոցական հաստատությունների ցանկը) տրամադրվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից:*

### Երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում ըստ սեռի և տարիքային խմբի, 2014-2018թթ.

%

| | | 2014 | 2015 | 2016 | 2017 | 2018 |
|---|---|---|---|---|---|---|
| Աղջիկներ | ընդամենը | 29.9 | 30.3 | 30.4 | 32.0 | 33.6 |
| | 0-2 տարեկան բնակչությունից | 6.6 | 6.4 | 5.8 | 4.9 | 4.9 |
| | 3-5 տարեկան բնակչությունից | 52.9 | 54.2 | 55.2 | 58.5 | 60.5 |
| Տղաներ | ընդամենը | 27.7 | 27.2 | 27.6 | 30.0 | 31.7 |
| | 0-2 տարեկան բնակչությունից | 5.8 | 5.4 | 5.2 | 4.7 | 4.7 |
| | 3-5 տարեկան բնակչությունից | 49.2 | 48.9 | 50.0 | 54.5 | 56.5 |
| **Ընդամենը** | | **28.7** | **28.6** | **28.9** | **30.9** | **32.6** |
| **0-2 տարեկան բնակչությունից** | | **6.2** | **5.8** | **5.5** | **4.8** | **4.8** |
| **3-5 տարեկան բնակչությունից** | | **50.9** | **51.4** | **52.4** | **56.4** | **58.4** |

## *Հանրակրթական հաստատությունների գործունեություն* [1]

### Հանրակրթության հիմնական ցուցանիշներր, 2018/2019 ուս. տարի

| Դպրոց-ների քանակը, միավոր | Աշակերտների թվաքանակը, մարդ | | Աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշըը, %[2] | | | | Ավարտական վկայական ստացածների թվաքանակը 2018թ., մարդ | | Ուսուցիչ-ների թվա-քանակը, մարդ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ընդա-մենը | այդ թվում՝ ըստ կրթական աստիճանի | | | | | |
| | | | | տարրա-կան | հիմնա-կան | ավագ[3] | | | |
| | ընդա-մենը | 1-ին դա-սարանում | | | | | հիմնական կրթությամբ | միջնակարգ կրթությամբ | |
| 1 409 | 382 378 | 38 674 | 83.0 | 91.1 | 89.4 | 59.9 | 31 064 | 9 381 | 31 371 |

## *Հանրակրթական հաստատությունների քանակական բաշխվածություն*

2018/2019 ուսումնական տարում հանրապետությունում գործել են հանրակրթական ծրագրեր իրականացնող 1 409 հաստատություններ (այսուհետ՝ դպրոցներ):

---

*[1] Տեղեկատվությունը տրամադրել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը»:*

*[2] Կրթահամակարգում համախառն ընդգրկվածության ցուցանիշ՝ տվյալ կրթահամակարգի դասարանների աշակերտների ընդհանուր թվաքանակի տոկոսային մասնաբաժինն է մշտական բնակչության նույն կրթահամակարգի համար պաշտոնապես սահմանված տարիքային խմբի թվաքանակի նկատմամբ:*

*[3] Ավագ դպրոցում աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշը ցածր է, քանի որ հիմնական դպրոցն ավարտելուց հետո համապատասխան տարիքի բնակչության 14.9%-ն ուսումը շարունակել է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:*

***Հանրակրթական դպրոցների քանակն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2018/2019 ուս. տարի***

*միավոր*

| | Ընդա-մենը | այդ թվում՝ | | Քաղաքներում | | | Գյուղերում | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | պետա-կան | ոչ պե-տական | ընդա-մենը | այդ թվում՝ | | ընդա-մենը | այդ թվում՝ | |
| | | | | | պետա-կան | ոչ պե-տական | | պետա-կան | ոչ պե-տական |
| ք.Երևան | 253 | 215 | 38 | 253 | 215 | 38 | - | - | - |
| Արագածոտն | 121 | 121 | - | 13 | 13 | - | 108 | 108 | - |
| Արարատ | 112 | 112 | - | 21 | 21 | - | 91 | 91 | - |
| Արմավիր | 120 | 118 | 2 | 26 | 24 | 2 | 94 | 94 | - |
| Գեղարքունիք | 126 | 126 | - | 27 | 27 | - | 99 | 99 | - |
| Լոռի | 163 | 163 | - | 59 | 59 | - | 104 | 104 | - |
| Կոտայք | 101 | 101 | - | 39 | 39 | - | 62 | 62 | - |
| Շիրակ | 166 | 161 | 5 | 52 | 48 | 4 | 114 | 113 | 1 |
| Սյունիք | 117 | 117 | - | 33 | 33 | - | 84 | 84 | - |
| Վայոց ձոր | 48 | 48 | - | 8 | 8 | - | 40 | 40 | - |
| Տավուշ | 82 | 81 | 1 | 18 | 17 | 1 | 64 | 64 | - |
| **Ընդամենը ՀՀ** | **1 409** | **1 363** | **46** | **549** | **504** | **45** | **860** | **859** | **1** |

## *Աշակերտների թվաքանակ և բաշխվածություն*

2018/2019 ուսումնական տարում հանրակրթական դպրոցների նախագծային հզորությունը (աշակերտական տեղերի նախատեսված քանակ) կազմել է 665 416 միավոր, աշակերտների թվաքանակը կազմել է 382 378 մարդ, որոնց 47.7%-ը աղջիկներ են: Դպրոցներում աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 83.0%, ընդ որում, տարրական դպրոցում այն կազմել է 91.1%, հիմնական դպրոցում՝ 89.4%, ավագ դպրոցում՝ 59.9%: Աշակերտների զուտ ընդգրկվածության ցուցանիշը տարրական դպրոցում կազմել է 88.2%, հիմնական դպրոցում՝ 87.8%: Աշակերտների «ճշգրտված զուտ ընդգրկվածության» ցուցանիշը տարրական դպրոցում կազմել է 88.3%, հիմնական դպրոցում՝ 87.9%: Սեռային հավասարության ցուցանիշը կազմել է 1.04, ընդ որում, տարրական դպրոցում այն կազմել է 1.01, հիմնական դպրոցում՝ 1.01, ավագ դպրոցում՝ 1.20:

***Հանրակրթական դպրոցների աշակերտների թվաքանակն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2018/2019 ուս. տարի***

մարդ

| | Պետական դպրոցներ | | | Ոչ պետական դպրոցներ | | | Ընդամենը | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | աղջիկ | տղա | ընդամենը | աղջիկ | տղա | ընդամենը | աղջիկ | տղա | ընդամենը |
| ք.Երևան | 56 777 | 61 304 | 118 081 | 3 822 | 4 418 | 8 240 | 60 599 | 65 722 | 126 321 |
| Արագածոտն | 8 132 | 9 549 | 17 681 | - | - | - | 8 132 | 9 549 | 17 681 |
| Արարատ | 16 725 | 18 251 | 34 976 | - | - | - | 16 725 | 18 251 | 34 976 |
| Արմավիր | 16 139 | 18 718 | 34 857 | 304 | 288 | 592 | 16 443 | 19 006 | 35 449 |
| Գեղարքունիք | 13 489 | 15 767 | 29 256 | - | - | - | 13 489 | 15 767 | 29 256 |
| Լոռի | 14 570 | 15 532 | 30 102 | - | - | - | 14 570 | 15 532 | 30 102 |
| Կոտայք | 17 978 | 19 085 | 37 063 | - | - | - | 17 978 | 19 085 | 37 063 |
| Շիրակ | 14 688 | 16 156 | 30 844 | 137 | 210 | 347 | 14 825 | 16 366 | 31 191 |
| Սյունիք | 8 284 | 8 658 | 16 942 | - | - | - | 8 284 | 8 658 | 16 942 |
| Վայոց ձոր | 2 997 | 3 438 | 6 435 | - | - | - | 2 997 | 3 438 | 6 435 |
| Տավուշ | 8 116 | 8 711 | 16 827 | 67 | 68 | 135 | 8 183 | 8 779 | 16 962 |
| **Ընդամենը ՀՀ** | **177 895** | **195 169** | **373 064** | **4 330** | **4 984** | **9 314** | **182 225** | **200 153** | **382 378** |

**Հանրակրթական դպրոցներից հեռացած (ուսումն անավարտ թողած) աշակերտների թվաքանակն ըստ պատճառի, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2018/2019 ուս. տարվա սկզբին**

մարդ

| | Ընդա-մենը | այդ թվում՝ ըստ պատճառի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | սոցիալ-տնտեսա-կան վատ պայման-ներ | ծնողները չեն ուղար-կում դպրոց (թույլ չեն տալիս) | անկարողություն | | | | մահացել է |
| | | | | լսողա-կան խան-գարում | տեսողա-կան խան-գարում | հենա-շարժո-ղական | մտավոր թերզար-գացում | |
| ք.Երևան | 179 | 48 | 119 | 5 | - | - | - | 7 |
| Արագածոտն | 24 | 5 | 10 | - | - | - | 1 | 8 |
| Արարատ | 35 | 7 | 12 | - | - | - | 1 | 15 |
| Արմավիր | 20 | 4 | 7 | 1 | 1 | - | - | 7 |
| Գեղարքունիք | 29 | 7 | 17 | - | - | 1 | - | 4 |
| Լոռի | 23 | 12 | 7 | - | - | - | 1 | 3 |
| Կոտայք | 8 | 4 | 1 | - | - | - | 1 | 2 |
| Շիրակ | 33 | 11 | 17 | - | - | - | 1 | 4 |
| Սյունիք | 7 | 1 | 3 | - | - | - | - | 3 |
| Վայոց ձոր | 2 | 1 | 1 | - | - | - | - | - |
| Տավուշ | 7 | 5 | 2 | - | - | - | - | - |
| **Ընդամենը ՀՀ** | **367** | **105** | **196** | **6** | **1** | **1** | **5** | **53** |

**Հանրակրթական դպրոցներում աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշն ըստ սեռի, 2014-2018թթ.**

%

| | Ընդամենը | Աղջիկներ | Տղաներ |
|---|---|---|---|
| **2014** | 87.8 | 89.9 | 85.9 |
| **2015** | 86.4 | 88.3 | 84.6 |
| **2016** | 86.0 | 87.5 | 84.7 |
| **2017** | 85.7 | 87.0 | 84.6 |
| **2018** | **83.0** | **84.7** | **81.4** |

**Հանրակրթական դպրոցներում սեռային հավասարության ցուցանիշն ըստ հանրակրթական ծրագրերի մակարդակի (տղաների համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ աղջիկների համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը), 2014-2018թթ.**

| | Տարրական դպրոց | Հիմնական դպրոց | Ավագ դպրոց | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| **2014** | 1.01 | 1.01 | 1.22 | 1.05 |
| **2015** | 1.00 | 1.01 | 1.20 | 1.04 |
| **2016** | 1.00 | 1.01 | 1.21 | 1.03 |
| **2017** | 1.00 | 1.01 | 1.17 | 1.03 |
| **2018** | **1.01** | **1.01** | **1.20** | **1.04** |

## *Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն*[1]

2018/2019 ուսումնական տարում հանրապետությունում գործել են նախնական մասնագիտական (արհեստագործական) ծրագիր իրականացնող 46 պետական ուսումնական հաստատություններ, որոնցից 23-ը՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և 23-ը՝ միջին մասնագիտական: Ուսումնառությունն իրականացվել է հիմնական և միջնակարգ կրթության հիմքի վրա: Ուսանողների թվաքանակը կազմել է 6 723, որոնց 27.1%-ը կանայք են: Անվճար ուսուցման համակարգում սովորել է ուսանողների 99.2%-ը, իսկ վճարովի՝0.8%-ը: Ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 6.7% (կանանց՝ 3.9%, տղամարդկանց՝ 9.2%), սեռային հավասարության ցուցանիշը (տղամարդկանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ կանանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը)՝ 0.42:

**Ուսումնական հաստատություններ ընդունվածների թվաքանակն անվճար և վճարովի ուսուցման համակարգերում ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2018/2019 ուս. տարի**

*մարդ*

| | Ընդունվածների թվաքանակը | | այդ թվում՝ | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ընդա-մենը | նրանցից՝ կանայք | անվճար | | վճարովի | |
| | | | ընդա-մենը | նրանցից՝ կանայք | ընդա-մենը | նրանցից՝ կանայք |
| ք.Երևան | 939 | 309 | 914 | 290 | 25 | 19 |
| Արագածոտն | 142 | 61 | 142 | 61 | - | - |
| Արարատ | 159 | 49 | 159 | 49 | - | - |
| Արմավիր | 83 | 12 | 83 | 12 | - | - |
| Գեղարքունիք | 227 | 58 | 227 | 58 | - | - |
| Լոռի | 227 | 51 | 221 | 45 | 6 | 6 |
| Կոտայք | 257 | 83 | 257 | 83 | - | - |
| Շիրակ | 526 | 224 | 505 | 214 | 21 | 10 |
| Սյունիք | 183 | 59 | 183 | 59 | - | - |
| Վայոց ձոր | 48 | 14 | 48 | 14 | - | - |
| Տավուշ | 135 | 29 | 135 | 29 | - | - |
| **Ընդամենը ՀՀ** | **2 926** | **949** | **2 874** | **914** | **52** | **35** |

**Ուսումնական հաստատությունների ուսանողների թվաքանակն անվճար և վճարովի ուսուցման համակարգերում ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2018/2019 ուս. տարի**

| | Հաստատությունների քանակը, միավոր | | Ուսանողների թվա-քանակը, մարդ | | այդ թվում՝ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | նախամասնագի-տական (արհես-տագործական) | միջին մաս-նագիտական | ընդա-մենը | նրանցից՝ կանայք | անվճար | | վճարովի | |
| | | | | | ընդա-մենը | նրանցից՝ կանայք | ընդա-մենը | նրանցից՝ կանայք |
| ք.Երևան | 7 | 2 | 2 426 | 733 | 2 401 | 714 | 25 | 19 |
| Արագածոտն | 2 | 1 | 290 | 109 | 290 | 109 | - | - |
| Արարատ | - | 3 | 321 | 83 | 321 | 83 | - | - |
| Արմավիր | 1 | 1 | 230 | 39 | 229 | 39 | 1 | - |
| Գեղարքունիք | - | 4 | 523 | 80 | 523 | 80 | - | - |
| Լոռի | 2 | 2 | 533 | 105 | 526 | 99 | 7 | 6 |

[1] *Գլխավոր համակցությունը (նախնական մասնագիտական (արհեստագործական) ծրագիր իրականացնող հաստատությունների ցանկը) տրամադրվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից:*

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կոտայք | 4 | 2 | 662 | 147 | 662 | 147 | - | - |
| Շիրակ | 5 | 1 | 1 003 | 356 | 980 | 346 | 23 | 10 |
| Սյունիք | 1 | 4 | 405 | 98 | 405 | 98 | - | - |
| Վայոց ձոր | - | 1 | 71 | 21 | 71 | 21 | - | - |
| Տավուշ | 1 | 2 | 259 | 51 | 259 | 51 | - | - |
| **Ընդամենը ՀՀ** | **23** | **23** | **6 723** | **1 822** | **6 667** | **1 787** | **56** | **35** |

**Ուսումնական հաստատությունների շրջանավարտների թվաքանակն անվճար և վճարովի ուսուցման համակարգերում ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2018թ.**

*մարդ*

| | Շրջանավարտների թվաքանակը | | այդ թվում՝ | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ընդամենը | նրանցից՝ կանայք | անվճար | | վճարովի | |
| | | | ընդամենը | նրանցից՝ կանայք | ընդամենը | նրանցից՝ կանայք |
| ք.Երևան | 553 | 190 | 539 | 189 | 14 | 1 |
| Արագածոտն | 106 | 56 | 106 | 56 | - | - |
| Արարատ | 114 | 60 | 114 | 60 | - | - |
| Արմավիր | 38 | 7 | 38 | 7 | - | - |
| Գեղարքունիք | 139 | 53 | 139 | 53 | - | - |
| Լոռի | 151 | 47 | 149 | 47 | 2 | - |
| Կոտայք | 210 | 110 | 210 | 110 | - | - |
| Շիրակ | 459 | 223 | 440 | 214 | 19 | 9 |
| Սյունիք | 161 | 70 | 161 | 70 | - | - |
| Վայոց ձոր | 37 | 16 | 37 | 16 | - | - |
| Տավուշ | 77 | 34 | 77 | 34 | - | - |
| **Ընդամենը ՀՀ** | **2 045** | **866** | **2 010** | **856** | **35** | **10** |

## *Միջին մասնագիտական կրթություն*[1]

Հանրապետության միջին մասնագիտական 93 պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններում (ՄՄՈւՀ) 2018/2019 ուսումնական տարում ընդունվել է 7 541 (կանայք՝ 50.3%), սովորել՝ 23 228 (կանայք՝ 52.8%), ավարտել՝ 6 066 (կանայք՝ 57.0%) մարդ: Ուսումնառությունն իրականացվել է հիմնական և միջնակարգ կրթության հիմքի վրա: Ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 11.7% (կանանց՝ 13.1%, տղամարդկանց՝ 10.4%), սեռային հավասարության ցուցանիշը (տղամարդկանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ կանանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը)՝ 1.26:

[1] *Գլխավոր համակցությունը (միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ցանկը) տրամադրվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից:*

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների թվաքանակի շարժն

ըստ ուսուցման ձևի, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2018/2019 ուս. տարի

| | ՄՄՈՒՀ-ների քանակը, միավոր | Ընդունվել են, մարդ | | Ուսանողների թվաքանակը, մարդ | | Ավարտել են 2018թ., մարդ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ընդամենը | նրանցից՝ կանայք | ընդամենը | նրանցից՝ կանայք | ընդամենը | նրանցից՝ կանայք |
| ք.Երևան | 33 | 4 100 | 2 157 | 12 794 | 7 065 | 3 105 | 1 818 |
| Արագածոտն | 1 | 42 | 20 | 104 | 46 | 55 | 36 |
| Արարատ | 4 | 381 | 197 | 1 179 | 612 | 288 | 153 |
| Արմավիր | 5 | 388 | 197 | 1 102 | 568 | 265 | 165 |
| Գեղարքունիք | 8 | 415 | 199 | 1 209 | 616 | 330 | 197 |
| Լոռի | 11 | 640 | 325 | 1 884 | 1 020 | 499 | 310 |
| Կոտայք | 6 | 459 | 173 | 1 330 | 593 | 312 | 131 |
| Շիրակ | 11 | 502 | 258 | 1 825 | 921 | 591 | 322 |
| Սյունիք | 7 | 324 | 142 | 998 | 482 | 337 | 168 |
| Վայոց ձոր | 1 | 67 | 30 | 159 | 73 | 58 | 41 |
| Տավուշ | 6 | 223 | 97 | 644 | 273 | 226 | 118 |
| **Ընդամենը ՀՀ** | **93** | **7 541** | **3 795** | **23 228** | **12 269** | **6 066** | **3 459** |

## *Բարձրագույն մասնագիտական կրթություն* [1]

### Բարձրագույն կրթության առաջին աստիճանի կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների գործունեություն

2018/2019 ուսումնական տարում հանրապետության 56 բարձրագույն պետական և ոչ պետական ուսումնական հաստատու-թյուններ (ԲՈւՀ) և 12 մասնաճյուղեր բարձրագույն կրթության առաջին աստիճանում իրականացրել են մասնագիտական կրթություն բակալավրի ծրագրերով: Այդ հաստատու-թյուններ ընդունվել է 9 512 (կանայք՝ 46.6%), սովորել՝ 69 622 (կանայք՝ 51.6%), ավարտել՝ 15 540 (կանայք՝ 60.1%) մարդ: Ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազ-մել է 52.2% (կանանց՝ 56.6%, տղամարդկանց՝ 48.2%), սեռային հավասարության ցուցանիշը (տղամարդկանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ կանանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը)՝ 1.17:

**Բարձրագույն կրթության առաջին աստիճանի կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների ուսանողների թվաքանակի շարժն**

**ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2018/2019 ուս. տարի**

| | ԲՈւՀ-երի քանակը, միավոր | Մասնա–ճյուղերի քանակը, միավոր | Ընդունվել են, մարդ | | Ուսանողների թվաքանակը, մարդ | | Ավարտել են 2018թ., մարդ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ընդամենը | նրանցից՝ կանայք | ընդամենը | նրանցից՝ կանայք | ընդամենը | նրանցից՝ կանայք |
| ք.Երևան | 45 | - | 8 142 | 3 702 | 59 036 | 30 217 | 12 988 | 7 707 |
| Արմավիր | 1 | - | 15 | - | 93 | - | 27 | - |
| Գեղարքունիք | 2 | - | 173 | 67 | 952 | 447 | 283 | 176 |
| Լոռի | 2 | 2 | 341 | 219 | 2 901 | 1 737 | 720 | 484 |
| Կոտայք | 1 | - | 21 | 9 | 183 | 97 | 47 | 32 |
| Շիրակ | 3 | 5 | 445 | 231 | 3 238 | 1 826 | 816 | 520 |

[1] *Գլխավոր համակցությունը (բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանկը) տրամադրվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից:*

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Սյունիք | 2 | 2 | 245 | 116 | 1 582 | 751 | 329 | 188 |
| Վայոց ձոր | - | 1 | 10 | 4 | 218 | 122 | 56 | 41 |
| Տավուշ | - | 2 | 120 | 81 | 1 419 | 741 | 274 | 192 |
| **Ընդամենը ՀՀ** | **56** | **12** | **9 512** | **4 429** | **69 622** | **35 938** | **15 540** | **9 340** |

**Բարձրագույն կրթության երկրորդ աստիճանի կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և գիտական կազմակերպությունների գործունեություն**

2018/2019 ուսումնական տարում հանրապետության 32 բարձրագույն պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններ (ԲՈՒՀ) ու 9 մասնաճյուղեր և 4 գիտական կազմակերպություններ բարձրագույն կրթության երկրորդ աստիճանում իրականացրել են մասնագիտական կրթություն մագիստրոսի ծրագրերով: Այդ կազմակերպություններ ընդունվել է 5 732 (կանայք՝ 63.7%), սովորել՝ 10 855 (կանայք՝ 68.6%), ավարտել՝ 5 483 (կանայք՝ 66.2%) մարդ: Ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 14.1% (կանանց՝ 19.4%, տղամարդկանց՝ 8.9%), սեռային հավասարության ցուցանիշը (տղամարդկանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ կանանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը)՝ 2.19:

**Բարձրագույն կրթության երկրորդ աստիճանի կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների և գիտական կազմակերպությունների**
**ուսանողների թվաքանակի շարժն ըստ ՀՀ մարզերի և**
**Երևան քաղաքի, 2018/2019 ուս. տարի**

| | ԲՈւՀ-երի քանակը, միավոր | Մասնա–ճյուղերի քանակը, միավոր | Գիտական կազմակեր-պությունների քանակը, միավոր | Ընդունվել են, մարդ | | Ուսանողների թվա-քանակը, մարդ | | Ավարտել են 2018թ., մարդ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ընդա-մենը | նրանցից՝ կանայք | ընդա-մենը | նրանցից՝ կանայք | ընդա-մենը | նրանցից՝ կանայք |
| ք.Երևան | 27 | - | 3 | 5 144 | 3 227 | 9 733 | 6 617 | 4 888 | 3 185 |
| Արմավիր | 1 | - | - | 40 | - | 40 | - | - | - |
| Գեղարքունիք | 1 | - | - | 84 | 64 | 154 | 100 | 67 | 40 |
| Լոռի | 2 | 2 | - | 97 | 84 | 169 | 136 | 120 | 85 |
| Շիրակ | 1 | 5 | 1 | 262 | 199 | 551 | 429 | 310 | 249 |
| Սյունիք | - | 1 | - | 87 | 73 | 178 | 155 | 70 | 57 |
| Վայոց ձոր | - | 1 | - | 18 | 7 | 30 | 15 | 28 | 16 |
| **Ընդամենը ՀՀ** | **32** | **9** | **4** | **5 732** | **3 654** | **10 855** | **7 452** | **5 483** | **3 632** |

## 8.1. Ընդգրկվածությունը կրթության համակարգում

Հանրակրթական դպրոցներում աշակերտների համախառն ընդգրկվածությունն ըստ կրթական ծրագրերի 2018/2019 ուսումնական տարում ներկայացված է Գծապատկեր 8.1-ում[1]:

**Գծապատկեր 8.1. Հայաստան. Հանրակրթական դպրոցներում աշակերտների համախառն ընդգրկվածությունն ըստ կրթական ծրագրերի, 2018/2019 ուսումնական տարում**

*(տոկոսներով)*




Աղբյուրը. *ՀՀ ՎԿ 2018թ.*

Ըստ պաշտոնական վիճակագրության տվյալների՝ 2018թ.-ին հանրապետությունում նախադպրոցական հաստատություններում երեխաների ընդգրկվածությունը (0-5 տարեկան բնակչության թվաքանակից) կազմել է 32.6% (քաղաքներում՝ 38.0%, գյուղերում՝ 22.6%), իսկ 3-5 տարեկանների ընդգրկվածությունը՝ 58.4%:

Ըստ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների՝ նախադպրոցական հաստատություններում համախառն ընդգրկվածությունը (մինչև 6 տարեկան երեխաների թվաքանակից) կազմել է 31% և տարբերվում է ըստ աղքատության մակարդակի: Ոչ աղքատ տնային տնտեսություններում այն կազմել է 33%, աղքատ (առանց ծայրահեղ աղքատների) և ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններում համապատասխանաբար՝ 28% և 0%: Նախադպրոցական հաստատություններում համախառն ընդգրկվածությունը (մինչև 6 տարեկան երեխաների թվաքանակից) տարբերվում է ըստ սպառման ազրեգատի քվինտիլային խմբերի: Առաջին քվինտիլային խմբում այն կազմել է 26%, երկրորդում՝ 30%, երրորդում՝ 32%, չորրորդում՝ 33% և հինգերորդում՝ 43%:

[1] Կրթության համակարգում ընդգրկվածության աստիճանը բերված է ըստ վարչական ռեգիստրների կողմից տրամադրված տեղեկատվության և կարող է տարբերվել ՏՏԿԱՀ տվյալներից:

## Տնային տնտեսությունների կողմից ուսման համար կատարված վճարները

Ըստ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների, 2018թ.-ին ուսման համար կատարված վճարները տնային տնտեսությունների ոչ պարենային ապրանքների և ծառայությունների համար կատարված ծախսերում կազմել են 4.6% (Աղյուսակ A6.1, Գծապատկեր 8.2):

**Գծապատկեր 8.2 Հայաստան. Ուսման համար կատարվող վճարների մասնաբաժինը տնային տնտեսությունների ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների համար կատարվող ծախսերում, ըստ բնակավայրերի, 2018թ.**

*(տոկոսներով)*




Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2018թ.*

Ըստ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների, 2018թ.-ին, ընդհանուր առմամբ, մինչև 6 տարեկան 10 երեխայից գրեթե 7-ը (68.5%) չի հաճախել նախադպրոցական հաստատություն: Պատասխաններից երևում է, որ որպես հիմնական պատճառներ նշել են, որ երեխայի մայրը չի աշխատում՝ 39.5%, մանկապարտեզ չկա՝ 11.3%, իսկ դրանից օգտվելը թանկ է և նախադպրոցական հաստատությունը փակ է՝ 2.1% (Աղյուսակ 8.1):

**Աղյուսակ 8.1. Հայաստան. Նախադպրոցական հաստատություն չհաճախելու պատճառները, 2018թ.**

*(տոկոսներով)*

| | Քվինտիլներ | | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | 1-ին | 2-րդ | 3-րդ | 4-րդ | 5-րդ | |
| Շատ թանկ է | 2.5 | 3.8 | 0.3 | 1.8 | 1.1 | 2.1 |
| Վատ են կերակրում | 0.3 | - | 0.6 | - | 5.3 | 0.7 |
| Վարակիչ հիվանդությունների վտանգ կա | - | 0.3 | 0.9 | 0.6 | - | 0.3 |
| Նախադպրոցական հաստատությունը փակ է | 2.9 | 3.5 | 0.7 | - | 2.4 | 2.1 |
| Աշխատանքի ժամերը հարմար չեն | - | 0.5 | - | 0.5 | - | 0.2 |
| Ծառայության որակը ցածր է | 0.3 | - | 0.8 | 0.7 | - | 0.4 |
| Մայրը չի աշխատում | 46.9 | 35.6 | 35.3 | 32.6 | 42.6 | 39.5 |
| Այլ | 38.0 | 43.3 | 46.3 | 49.7 | 41.0 | 42.9 |
| Մանկապարտեզ չկա | 8.7 | 12.7 | 14.2 | 13.6 | 6.8 | 11.3 |
| Արդեն դպրոց է գնում | 0.4 | 0.3 | 0.9 | 0.5 | 0.8 | 0.5 |
| **Ընդամենը** | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 |

Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2018թ.*

Ամենաաղքատ և ամենահարուստ քվինտիլային խմբերի միջև առկա է տարբերություն: Ամենաաղքատ 1-ին քվինտիլի հարցվողների 2.5%-ը նշել է, որ նախադպրոցական կրթությունը շատ թանկ է, այն ժամանակ, երբ այդ նույն պատճառը նշել է ամենահարուստ քվինտիլի հարցվողների 1.1%-ը (Աղյուսակ 8.1):

Մատչելիության կարևոր ցուցանիշներից է ամենամոտ նախադպրոցական հաստատության հեռավորությունը տնային տնտեսությունից: Ըստ 2018թ.-ի հետազոտության տվյալների, գյուղաբնակ տնային տնտեսությունների 59.9%-ը պատասխանել է, որ նախադպրոցական հաստատությունը գտնվում է մինչև 1 կմ հեռավորության վրա (ամենաաղքատ և ամենահարուստ քվինտիլային խմբերի, համապատասխանաբար՝ 55.3% և 67.1%-ը): Միևնույն ժամանակ տնային տնտեսությունների 5.4%-ը պատասխանել է, որ այն գտնվում է 10 կմ-ից հեռու: Ամենահարուստների 4.1%-ը և ամենաաղքատների 7.5%-ը պատասխանել է, որ մոտակա նախադպրոցական հաստատությունը գտնվում է ավելի քան 10 կմ հեռավորության վրա: Ըստ քվինտիլային խմբերի, տվյալները բերված են Աղյուսակ 8.2-ում:

**Աղյուսակ 8.2. Հայաստան. Նախադպրոցական հաստատությունների մատչելիությունը գյուղական բնակավայրերում, ըստ սպառման քվինտիլների և երթևեկության միջոցների 2018թ.**

*(տոկոսներով)*

| Գյուղական վայրեր | Քվինտիլներ | | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | 1-ին | 2-րդ | 3-րդ | 4-րդ | 5-րդ | |
| Ամենամոտ նախադպրոցական հաստատության հեռավորությունը | | | | | | |
| 0-1 կմ | 55.3 | 54.9 | 64.5 | 58.0 | 67.1 | 59.9 |
| 1-3 կմ | 26.5 | 25.9 | 16.7 | 26.3 | 19.1 | 22.9 |
| 4-5 կմ | 6.5 | 5.5 | 7.4 | 5.5 | 3.2 | 5.7 |
| 6-10 կմ | 4.2 | 6.2 | 6.2 | 7.8 | 6.5 | 6.1 |
| >10 կմ | 7.5 | 7.5 | 5.2 | 2.4 | 4.1 | 5.4 |
| **Ընդամենը** | **100** | **100** | **100** | **100** | **100** | **100** |
| **Երթևեկության միջոցը նախադպրոցական հաստատություն հասնելու համար** | | | | | | |
| Ավտոմեքենա | 10.2 | 15.1 | 11.9 | 12.2 | 17.1 | 13.2 |
| Միկրոավտոբուս/ավտոբուս | 17.3 | 16.6 | 16.3 | 17.8 | 11.5 | 16.0 |
| Թեթև մարդատար տաքսի | 1.7 | 1.0 | 0.4 | 0.8 | 0.3 | 0.9 |
| Գնացք | - | - | - | - | - | - |
| Սայլ | - | - | - | - | - | - |
| Ձի/ավանակ | - | - | - | - | - | - |
| Հեծանիվ | - | - | - | - | - | - |
| Ոտքով | 70.8 | 67.3 | 71.4 | 69.2 | 71.1 | 69.9 |
| **Ընդամենը** | **100** | **100** | **100** | **100** | **100** | **100** |

Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2018թ.*

## Տարրական (1-4 դասարաններ)

Ըստ ՏՏԿԱՀ-ի արդյունքների՝ տարրական (1-4) դասարաններում համախառն ընդգրկվածությունը 2018թ.-ին կազմել է 96% և շատ չի տարբերվում ըստ աղքատության մակարդակի: Տարրական կրթահամակարգում համախառն ընդգրկվածությունը ոչ աղքատ տնային տնտեսությունների համար կազմել է 95%, աղքատ տնային տնտեսությունների (առանց ծայրահեղ աղքատների)՝ 99% և ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների համար՝ 89% Առաջին և երրորդ քվինտիլներում համախառն ընդգրկվածությունը կազմել է 98%, երկրորդ քվինտիլում՝ 96%, չորրորդ քվինտիլում՝ 92% և հինգերորդ քվինտիլում՝ 91%:

Տարրական դասարաններում սովորող երեխա ունեցող տնային տնտեսությունների միջին ամսական ծախսը մեկ աշակերտի հաշվով կազմել է 2 554 դրամ, որից դասագրքերի վրա՝ 32.3%, վարձավճարի համար՝ 8.2%, մասնավոր դասերի համար՝ 11.7% և ուսման այլ ծախսերի վրա՝47.8%: Եթե տարրական դասարաններում սովորող երեխա ունեցող տնային տնտեսությունների միջին ամսական ծախսը մեկ աշակերտի հաշվով կազմել է 2 554 դրամ, ապա ոչ աղքատներինը՝ 3 003 դրամ, աղքատներինը (առանց ծայրահեղ աղքատների)՝ 1 540 դրամ և ծայրահեղ աղքատներինը՝ 1 529 դրամ:

## Միջին դպրոց (5-9 դասարաններ)

Ըստ ՏՏԿԱՀ-ի արդյունքների՝ միջին դպրոցում (5-9 դասարաններում) համախառն ընդգրկվածությունը 2018թ.-ին կազմել է 96%: Միջին դպրոցում համախառն ընդգրկվածությունը ոչ աղքատ և աղքատ (առանց ծայրահեղ աղքատների) տնային տնտեսությունների համար կազմել է 96%, իսկ ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների համար՝ 121%*: Միջին դպրոցում համախառն ընդգրկվածությունը առաջին քվինտիլում կազմել է՝ 96%, երկրորդ քվինտիլում՝ 98%, երրորդ քվինտիլում՝ 94%, չորրորդ քվինտիլում՝ 101%* և հինգերորդ քվինտիլում՝ 92%:

Այն տնային տնտեսությունները, որոնք 2018թ.-ին ունեին միջին դպրոցում սովորող աշակերտ, միջինում ծախսել են մեկ աշակերտի հաշվով ամսական 3 153 դրամ, որից՝ դասագրքերի վրա՝ 39.0%, մասնավոր դասերի համար՝16.7%, վարձավճարի համար՝ 3.6%, իսկ կրթության այլ ծախսերի վրա՝ 40.7%: Եթե միջին դպրոցում (5-9 դասարաններում) սովորող աշակերտ ունեցող տնային տնտեսությունը մեկ աշակերտի հաշվով միջինում ծախսել է ամսական 3 153 դրամ, ապա ոչ աղքատները՝ 3 517 դրամ, աղքատները (առանց ծայրահեղ աղքատների)՝ 2 202 դրամ և ծայրահեղ աղքատները՝ 1 201 դրամ:

Հիմնական կրթություն ստանալուց հետո (որը ներառում է տարրական և միջին կրթությունը) կրթական համակարգից համապատասխան տարիքի երեխաների մի մասը դուրս է մնում:

Քանի որ պարտադիր կրթությունը Հայաստանում անվճար է, ուսումնական ծախսերը տարրական և հիմնական կրթության մակարդակներում սովորողներ ունեցող տնային տնտեսությունների համար այդքան էլ խնդիր չեն, բայց, նույնիսկ այդ ուսումնական ծախսերը բեռ են տնային տնտեսությունների համար, առավել ևս ավելի ծանր բեռ բարձր դասարաններում սովորող երեխաներ ունեցողների համար:

---

* Կրթահամակարգում համախառն ընդգրկվածության ցուցանիշ՝ տվյալ կրթահամակարգի դասարանների աշակերտների ընդհանուր թվաքանակի տոկոսային մասնաբաժինն է մշտական բնակչության նույն կրթահամակարգի համար պաշտոնապես սահմանված տարիքային խմբի թվաքանակի նկատմամբ:

## Ավագ դպրոց (10-12 դասարաններ)

Ըստ ՏՏԿԱՀ-ի արդյունքների՝ ավագ դպրոցում համախառն ընդգրկվածությունը (15-17 տարիքային խումբ) կազմել է 72%: Ավագ դպրոցում համախառն ընդգրկվածությունը ոչ աղքատ տնային տնտեսությունների համար կազմել է 74%, աղքատ տնային տնտեսությունների (առանց ծայրահեղ աղքատների) համար՝ 67%, ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների համար՝ 52%:

Ավագ դասարաններում սովորող երեխա ունեցող տնային տնտեսություններում միջին ամսական ծախսը մեկ աշակերտի հաշվով կազմել է 4 624 դրամ, որից մասնավոր դասերի վրա՝ 35.0%, դասագրքերի վրա՝ 27.8%, վարձավճարի վրա՝ 9.9%, իսկ այլ ծախսերի վրա՝ 27.3%: Ավագ դասարաններում սովորող երեխա ունեցող տնային տնտեսություններում միջին ամսական ծախսը մեկ աշակերտի հաշվով, ըստ աղքատության մակարդակի կազմել է՝ ոչ աղքատների համար 5 320 դրամ, որից մասնավոր դասերի վրա՝ 38.7%, դասագրքերի վրա՝ 24.3%, վարձավճարի վրա՝ 11.6% և այլ ծախսերի վրա՝ 25.4%: Աղքատների (առանց ծայրահեղ աղքատների) համար այդ ծախսը կազմել է՝ 2 653 դրամ, որից դասագրքերի վրա՝ 48.3%, այլ ծախսերի վրա՝ 39.0%, մասնավոր դասերի վրա՝ 12.7%, ծայրահեղ աղքատների համար՝ 1 517 դրամ, որից դասագրքերի վրա՝ 54.6%, այլ ծախսերի վրա՝ 45.4%, իսկ մասնավոր դասերի վրա ծախսեր չեն եղել:

Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ստացված տեղեկատվության համաձայն, 2018թ.-ի ընթացքում 15-17 տարեկան երեխաների 7.8%-ը որևէ ուսումնական հաստատություն չի հաճախել: Նրանց գերակշիռ մասը՝ 68.1%-ը, պատճառաբանել է, որ ավարտել է դպրոցը կամ կրթությունը, 2.0%-ը դպրոց չի հաճախել առողջական խնդիրների պատճառով, 7.5%-ը չի ցանկացել այլևս սովորել, իսկ 16.9%-ի համար կրթական ծառայությունները շատ թանկ են, և, դրանով պայմանավորված, նրանք թողել են ուսումը: Մնացածը չեն հաճախել դպրոց այլ պատճառներով:

## Բարձրագույն կրթական հաստատություններ

Ի տարբերություն հիմնական կրթության, միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում և բարձրագույն կրթական հաստատություններում սովորողների ընդգրկվածությունը համեմատաբար ավելի ցածր է, իսկ աղքատ և ոչ աղքատ տնային տնտեսությունների ընդգրկվածության տարբերությունը՝ բավականին ակնհայտ: Բարձրագույն կրթության հետ կապված մեծ ծախսերը, և հատկապես, դրանց մատչելիությունը, կրթություն ստանալուց հետո բարձր աշխատավարձ ստանալու ցածր հավանականությունը, այն հիմնական պատճառներն են, որով կարելի է բացատրել հիմնական և, մասնավորապես, ընդհանուր միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո աղքատ տնային տնտեսությունների համապատասխան տարիքի բնակչության կրթական համակարգից դուրս մնալը:

Ըստ ՏՏԿԱՀ-ի արդյունքների՝ բարձրագույն կրթական հաստատություններում համախառն ընդգրկվածությունը (18-22 տարիքային խումբ) կազմել է 36%: Բարձրագույն կրթական հաստա-տություններում ոչ աղքատ տնային տնտեսությունների համախառն ընդգրկվածությունը կազմել է 39%, աղքատ (առանց ծայրահեղ աղքատների) տնային տնտեսություններինը՝ 26% և ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններինը՝0%: Բարձրագույն կրթական հաստատություններում համախառն ընդգրկվածությունն ամենաաղքատ քվինտիլում կազմել է 19%, երկրորդում՝ 28%, երրորդում՝ 36%, չորրորդում՝ 32% և ամենահարուստ հինգերորդում՝ 54%:

Բարձրագույն կրթական հաստատություններում սովորող երեխա ունեցող տնային տնտեսություններում միջին ամսական ծախսը մեկ սովորողի հաշվով կազմել է 31 488 դրամ, որից վարձավճարի վրա՝ 89.7%, դասագրքերի վրա՝ 4.2%, մասնավոր դասերի վրա՝ 0.4% և այլ ծախսերի վրա՝ 5.7%:

Գծապատկեր 8.3-ում ներկայացված է բնակչության ընդհանուր սպառման մեջ կրթության ոլորտի ծառայությունների սպառման մասնաբաժինն ըստ քվինտիլային խմբերի: Համաձայն հավելվածում (Աղյուսակ A3.9, Հավելված 2) ներկայացված տվյալների՝ ամենաաղքատ քվինտիլի բնակչության ծախսը կրթության ոլորտի ծառայությունների վրա 11.4 անգամ զիջում է միջին մակարդակին (համապատասխանաբար՝ 147 և 1 683 դրամ), իսկ հինգերորդ քվինտիլի բնակչության սպառումը 4.3 անգամ գերազանցում է միջին մակարդակը (համապատասխանաբար՝ 7 282 և 1 683 դրամ):

**Գծապատկեր 8.3: Կրթության վրա ծախսերի մասնաբաժինը բնակչության ընդհանուր սպառման մեջ, ըստ քվինտիլային խմբերի, 2018թ.**

*(տոկոսներով)*




Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2018թ.*

Ըստ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների 82.8%-ը ոչ աղքատ տնային տնտեսություններից են, 17.2%-ը՝ աղքատ (առանց ծայրահեղ աղքատների) և 0%-ը՝ ծայրահեղ աղքատ:

Տնային տնտեսությունների սովորող անդամների 6.4%-ը պատասխանել է, որ ընթացիկ և նախորդ ուսումնական տարիների ընթացքում իրենց խնդրել են, որ **նվեր տան ուսուցչին կամ դասախոսին**: Տնային տնտեսությունների սովորող անդամների 13.7%-ը պատասխանել է, որ ընթացիկ և նախորդ ուսումնական տարիների ընթացքում սեփական նախաձեռնությամբ կամ ուրիշի խնդրանքով է նվեր տվել ուսուցչին կամ դասախոսին:

**Կրթական հաստատության մատչելիության** ամենակարևոր ցուցանիշներից է ամենամոտ դպրոցական հաստատության հեռավորությունը տնային տնտեսությունից: Ըստ 2018թ.-ի հետազոտության տվյալների, գյուղաբնակ տնային տնտեսությունների 74.8%-ը պատասխանել է, որ միջնակարգ դպրոցը գտնվում է մինչև 1 կմ հեռավորության վրա: Միևնույն ժամանակ տնային տնտեսությունների 2.5%-ը պատասխանել է, որ այն գտնվում է 4 և ավելի կմ հեռու, այդ թվում 0.1%-ը պատասխանել է, որ մոտակա միջնակարգ դպրոցը գտնվում է ավելի քան 10 կմ հեռավորության վրա: Տվյալներն ըստ քվինտիլային խմբերի, բերված են Աղյուսակ 8.3-ում:

**Աղյուսակ 8.3. Հայաստան. Գյուղական բնակավայրեր. Ամենամոտ միջնակարգ դպրոցի հեռավորությունը և այնտեղ հասնելու երթևեկության միջոցը, 2018թ.**

*(տոկոսներով)*

| Գյուղական վայրեր | Քվինտիլներ | | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | 1-ին | 2-րդ | 3-րդ | 4-րդ | 5-րդ | |
| *Ամենամոտ միջնակարգ դպրոցի հեռավորությունը* | | | | | | |
| 0-1 կմ | 71.9 | 73.1 | 79.9 | 75.1 | 73.8 | 74.8 |
| 1-3 կմ | 25.9 | 23.6 | 16.8 | 23.4 | 24.3 | 22.7 |
| 4-5 կմ | 1.9 | 2.1 | 1.8 | 0.9 | 1.0 | 1.6 |
| 6-10 կմ | 0.3 | 1.2 | 1.3 | 0.6 | 0.5 | 0.8 |
| >10 կմ | - | - | 0.2 | 0.0 | 0.4 | 0.1 |
| **Ընդամենը** | **100** | **100** | **100** | **100** | **100** | **100** |
| *Երթևեկության միջոցը դպրոցական հաստատություն հասնելու համար* | | | | | | |
| Ավտոմեքենա | 3.7 | 8.3 | 9.4 | 8.5 | 12.7 | 8.4 |
| Միկրոավտոբուս/ավտոբուս | 5.1 | 3.0 | 2.7 | 3.2 | 2.6 | 3.3 |
| Թեթև մարդատար տաքսի | - | - | - | - | - | - |
| Գնացք | - | - | - | - | - | - |
| Սայլ | - | - | - | - | - | - |
| Ձի/ավանակ | - | - | - | - | - | - |
| Հեծանիվ | - | - | - | - | - | - |
| Ոտքով | 91.2 | 88.7 | 87.9 | 88.3 | 84.7 | 88.3 |
| **Ընդամենը** | **100** | **100** | **100** | **100** | **100** | **100** |

Աղբյուրը. *ՏՏԳԱՀ 2018թ.*

16-20 տարեկան ինչպես տղաների, այնպես էլ աղջիկների կարծիքով, **կրթությունը չշարունակելու հիմնական պատճառը** հանդիսանում է միջնակարգ դպրոցի ավարտը (համապատասխանաբար՝ 54.6% և 54.2%)։ Կրթությունը թանկ է հարցին պատասխանել են տղաների՝ 9.0%-ը և աղջիկների՝ 3.9%-ը։ Ըստ քվինտիլային խմբերի տվյալները բերված են Աղյուսակ 8.4-ում։

**Աղյուսակ 8.4. Հայաստան. 16-20 տարեկան անձանց կրթությունը չշարունակելու պատճառներն ըստ սեռի, 2018թ.**

*(տոկոսներով)*

| | Քվինտիլներ | | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | 1-ին | 2-րդ | 3-րդ | 4-րդ | 5-րդ | |
| **Տղաներ** | | | | | | |
| Հիվանդությունը | - | - | - | - | - | - |
| Ստիպված է աշխատել | - | - | - | - | - | - |
| Տրանսպորտային դժվարություններ | - | - | - | - | - | - |
| Թանկ է | - | 9.1 | 4.7 | 13.3 | 24.9 | 9.0 |
| Դպրոցը փակ է, բայց ոչ արձակուրդի պատճառով | - | - | - | - | - | - |
| Ուսուցման ցածր որակը | - | - | - | - | - | - |
| Չեմ ուզում սովորել | 3.0 | - | 7.3 | - | - | 2.2 |
| Ժամանակավորապես չեմ հաճախում, բայց կշարունակեմ | - | - | - | - | - | - |
| Ընտանեկան պատճառներ | - | - | - | - | - | - |

| | Քվինտիլներ | | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | 1-ին | 2-րդ | 3-րդ | 4-րդ | 5-րդ | |
| Ավարտել եմ հիմնական դպրոցը (9-րդ դաս.) | 10.9 | - | 31.0 | 4.8 | 12.5 | 11.7 |
| Ավարտել եմ միջնակարգ դպրոցը (12-րդ դաս.) | 51.4 | 73.4 | 37.0 | 64.9 | 49.3 | 54.6 |
| Ավարտել եմ ուսումս(քոլեջ, ուսումնարան, ԲՈՒՀ) | 34.7 | 17.5 | 20.0 | 17.0 | 10.0 | 21.9 |
| Այլ | - | - | - | - | 3.3 | 0.6 |
| **Ընդամենը** | **100** | **100** | **100** | **100** | **100** | **100** |
| **Աղջիկներ** | | | | | | |
| Հիվանդությունը | 3.5 | 3.6 | - | - | - | 1.5 |
| Ստիպված է աշխատել | - | - | - | - | - | - |
| Տրանսպորտային դժվարություններ | - | - | - | - | - | - |
| Թանկ է | - | - | 12.2 | - | 11.2 | 3.9 |
| Դպրոցը փակ է, բայց ոչ արձակուրդի պատճառով | - | - | - | - | - | - |
| Ուսուցման ցածր որակը | - | - | - | - | - | - |
| Չի ցանկանում սովորել | 2.1 | - | - | - | - | 0.5 |
| Ժամանակավորապես չեմ հաճախում, բայց կշարունակեմ | - | - | - | 6.1 | - | 1.5 |
| Ընտանեկան պատճառներ | 2.2 | 5.5 | - | - | - | 1.5 |
| Ավարտել եմ հիմնական դպրոցը (9-րդ դաս.) | 17.8 | - | 9.5 | 1.7 | 5.3 | 7.3 |
| Ավարտել եմ միջնակարգ դպրոցը (12-րդ դաս.) | 54.9 | 67.3 | 52.2 | 54.3 | 40.4 | 54.2 |
| Ավարտել եմ ուսումս (քոլեջ, ուսումնարան, ԲՈՒՀ) | 19.5 | 23.6 | 26.1 | 32.1 | 43.1 | 28.2 |
| Այլ | - | - | - | 5.8 | - | 1.4 |
| **Ընդամենը** | **100** | **100** | **100** | **100** | **100** | **100** |

Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2018թ.*

### 8.2. Դասընթացներ կրթական հաստատություններ չհաճախող անձանց համար (14 և բարձր տարեկանների համար)

2018թ.-ի ՏՏԿԱՀ տվյալները վկայում են, որ 14 և բարձր տարիքի կրթական հաստատություններ չհաճախող անձանցից միայն 0.3%-ը հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում հաճախել են որևէ դասընթացի: Դասընթացներն ըստ տևողության բաշխվել են հետևյալ կերպ. մինչև 2 շաբաթ՝ 49.7%, 2 շաբաթից մինչև 1 ամիս՝ 15.8%, 1 ամիս՝ 1.4%, 1 ամսից ավել՝ 33.1%: Ինչպես 2017թ.-ին, այնպես էլ 2018թ.-ին հիմնական վճարումը կատարվել է պետության/համայնքի կողմից, համապատասխանաբար՝ 50.9% և 48.7%: Դասընթացների հիմնական նպատակը ուսուցումն է՝ 40.4%, որակավորման բարձրացումը՝ 31.1%, վերաորակավորումը՝ 28.5%: Ավելի հաճախ բնակչությունը հաճախել է դասընթացների ըստ հետևյալ առարկաների. օտար լեզու՝ 22.0%, համակարգիչ՝ 18.7%, հաշվապահական հաշվառում՝ 7.2%, արհեստ՝ 0.6%: Վերջին 12 ամսվա ընթացքում տնային տնտեսության միջին ծախսը մեկ դասընթացի հաշվով կազմել է մոտ 129 հազար դրամ (նվազագույն 15 հազար դրամից մինչև առավելագույնը՝ 440 հազար դրամ):

# Գլուխ 9. Սոցիալական տրանսֆերտները Հայաստանում և դրանց ներգործությունն աղքատության կրճատման գործում

## 9.1. Սոցիալական տրանսֆերտների համակարգը Հայաստանում

Սոցիալական տրանսֆերտները ներառում են կենսաթոշակները և դրամական սոցիալական աջակցությունը: Կենսաթոշակը եկամտի կարևոր աղբյուր է բնակչության, հատկապես՝ կենսաթոշակառուների համար. այն շատ դեպքերում եկամտի միակ աղբյուրն է, ուստի այդ խմբի բնակչության բարեկեցության աստիճանը պայմանավորված է կենսաթոշակի չափով (Հավելված 4-ի Աղյուսակ A9.1-ը ներկայացնում է Հայաստանում կենսաթոշակառուների թվաքանակն ըստ կենսաթոշակի տեսակների): Հայաստանի Հանրապետությունում դրամական սոցիալական աջակցության ոլորտի ամենամեծ ծրագիրն ընտանեկան նպաստի (ԸՆ) ծրագիրն է: Այն ամենամեծն է բնակչության ընդգրկվածության, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեում այդ նպատակի համար նախատեսված ֆինանսական միջոցների առումով:

## 9.2. Աղքատության մակարդակի կրճատման վրա սոցիալական տրանսֆերտների ազդեցության գնահատումը

Թեպետ սոցիալական տրանսֆերտներին ուղղված համախմբված բյուջեի ծախսերը տարեցտարի ավելանում են, դրանք շարունակում են ՀՆԱ-ի բավական սահմանափակ մասը կազմել (2018թ.՝ 7.1%): Այդուհանդերձ, սոցիալական տրանսֆերտները զգալիորեն նպաստում են աղքատության մակարդակի կրճատմանը: 2018 թվականի գնահատականները ցույց են տալիս, որ եթե բոլոր տեսակի սոցիալական տրանսֆերտների (այդ թվում՝ կենսաթոշակների և սոցիալական աջակցության նպաստների) վճարումը դադարեցվի, իսկ տնային տնտեսությունները չկարողանան այլ աղբյուրների հաշվին փոխհատուցել այդ կորուստը, ապա աղքատության ընդհանուր մակարդակը կավելանա 21.4 տոկոսային կետով (23.5%-ից մինչև 44.9%): Աղքատությունը նաև էապես կխորանա և կսրվի:

Սոցիալական տրանսֆերտները աղքատության մակարդակի կրճատման առումով շահառու տնային տնտեսությունների վրա էական ազդեցություն ունեն, և թեպետ դրամական սոցիալական աջակցություն ստացող ոչ բոլոր ընտանիքներն են կարողանում հաղթահարել աղքատությունը, այդ աջակցությունը ստանալու արդյունքում էապես կրճատվում են աղքատության թե խորությունը, թե սրությունը: Կենսաթոշակները՝ որպես սոցիալական տրանսֆերտների ամենամեծ բաղադրիչ, ավելի մեծ ներգործություն ունեն աղքատության հաղթահարման գործում, քան դրամական սոցիալական աջակցությունը, որի ազդեցությունն աղքատության կրճատման վրա 19 տոկոսային կետ է: Այդուհանդերձ, փոքր չէ նաև դրամական սոցիալական աջակցության, մասնավորապես՝ ընտանեկան նպաստի տեսքով ստացվող եկամուտների դերն աղքատության կրճատման գործում: 2018 թվականին ընտանեկան նպաստի ծրագիրը 2.3 տոկոսային կետի չափով ազդեցություն է ունեցել աղքատության կրճատման վրա:

Ի տարբերություն 2017 թվականի, երբ ընդհանուր բնակչության հաշվով ԸՆ ծրագրում ընդգրկվածության նվազման պարագայում ամենաաղքատ քվինտիլում ընդգրկվածությունն աճել է,

2018 թվականին ընդհանուր ընդգրկվածության կրճատումն արտացոլվել է նաև ամենաաղքատ քվինտիլում (2017 թվականի համեմատ, ընդգրկվածության մակարդակը 2018 թվականին ընդհանուր բնակչության հաշվով նվազել է 12.9%-ից մինչև 12.6%, իսկ ամենաաղքատ քվինտիլում՝ 39.0%-ից մինչև 37.9%): 2018 թվականին ԸՆ-ի շահառուների 76.5%-ը պատկանում է ամենաստորին երկու քվինտիլներին՝ 2017 թվականի 78.7%-ի համեմատ: Նմանապես, վճարված բոլոր նպաստների 78.3%-ը 2018 թվականին բաժին է ընկել ամենաաղքատ երկու քվինտիլներին՝ 2017 թվականի 75.5%-ի համեմատ:

**Մեթոդաբանություն**

Սոցիալական պաշտպանության ծրագրերի ներգործությունը երկրում աղքատության մակարդակի փոփոխության վրա գնահատվում է տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) միջոցով: Վերլուծությունն անդրադառնում է սոցիալական պաշտպանության երկու հիմնական ծրագրի՝ կենսաթոշակներին և պետական դրամական աջակցությանը, որում ներառված են բոլոր տեսակի սոցիալական դրամական աջակցությունները: Բացառությամբ ընտանեկան նպաստի, բոլոր այլ տեսակի սոցիալական նպաստները հատկացվում են բնակչության շատ նեղ խմբերի, ինչի արդյունքում նման նպաստառուները միանգամայն փոքր մաս են կազմում ՏՏԿԱՀ-ում, և նրանց առնչվող դիտարկումների քանակը չի բավարարում վիճակագրորեն նշանակալի եզրահանգումներ կատարելու համար:

Սոցիալական տրանսֆերտների (կենսաթոշակների և պետական դրամական աջակցության) ներգործությունն աղքատության մակարդակի վրա գնահատելու համար կիրառվել է հետևյալ մեթոդաբանությունը. հետազոտությամբ դիտարկված աղքատության մակարդակի արդյունքները («հետտրանսֆերտային» մակարդակ) համեմատվել են այն արդյունքների հետ, որոնք կստացվեին, եթե այդ տրանսֆերտները չվճարվեին («նախատրանսֆերտային» մակարդակ): Տնային տնտեսությունների համար հաշվարկվել է «նախատրանսֆերտային» սպառման ագրեգատը՝ հաշվարկված ընդհանուր սպառման ագրեգատից հանելով սոցիալական տրանսֆերտների գումարը (կենսաթոշակների գումարը, դրամական սոցիալական աջակցության գումարը, կամ երկուսը միասին)՝ ելնելով այն վարկածից, որ սոցիալական տրասֆերտների ամբողջ գումարը տնային տնտեսության կողմից սպառվում է (իրավիճակ, որը միանգամայն բնորոշ է Հայաստանի նման ցածր եկամուտներով երկրներին): Այս մեթոդաբանությունը հատկապես կարևորվում է սոցիալական աջակցության հասցեականության բարելավման տեսանկյունից: Սոցիալական աջակցության համար թիրախային բնակչությունը «նախատրանսֆերտային» աղքատներն են, քանի որ սոցիալական աջակցություն ստանալուց հետո աղքատ ընտանիքների մի որոշ խումբ հաղթահարում է աղքատության շեմը, ուստի «հետտրանսֆերտային» բնակչությունը որպես թիրախային խումբ դիտարկելը կարող է զգալի անճշտություններ պարունակել:

Աղքատության մակարդակի վրա կենսաթոշակների ներգործությունը գնահատվել է՝ համեմատելով «նախատրանսֆերտային» աղքատության մակարդակը կենսաթոշակ ստանալուց հետո աղքատության մակարդակի հետ, այսինքն՝ «կենսաթոշակ ստանալուց հետո», բայց առանց «նախքան սոցիալական աջակցություն ստանալը» աղքատության մակարդակի հետ[1]:

---

[1] *Հետազոտությամբ ստացված արդյունքները որոշակի վիճակագրական սխալով (շեղմամբ) են ներկայացնում ՀՀ բնակչության պատկերը: Նման վիճակագրական սխալ պարունակում են նաև «նախատրանսֆերտային» և «հետտրանսֆերտային» աղքատության մակարդակները: Աղքատության մակարդակի վրա սոցիալական տրանսֆերտների ներգործությունն ունի վիճակագրական նշանակություն, եթե «նախատրանսֆերտային» և «հետտրանսֆերտային» աղքատության միջին մակարդակների վստահության միջակայքերը չեն համընկնում:*

### 9.3. Ինչպիսի՞ն է Հայաստանում սոցիալական տրանսֆերտների ներգործությունն աղքատության մակարդակի վրա

2018 թվականին Հայաստանում սոցիալական նպաստների և կենսաթոշակների համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 426.2 միլիարդ դրամ կամ ՀՆԱ-ի 7.1%-ը (2008 թվականի 207.9 միլիարդ դրամի կամ ՀՆԱ-ի 5.8%-ի և 2017 թվականի 411.1 միլիարդի դրամ կամ ՀՆԱ-ի 7.4%-ի համեմատ)։ Ամենամեծ սոցիալական տրանսֆերտները կենսաթոշակներն են, որոնք ներառում են տարիքային, զինվորական և սոցիալական կենսաթոշակները։

2018 թվականին սոցիալական տրանսֆերտները կազմել են Հայաստանի տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով ամսական համախառն եկամտի 15.5%-ը (2008 թվականին՝ 16.5%-ը, իսկ 2017 թվականին՝ 16.1%-ը) (Աղյուսակ 6.1)։ Տնային տնտեսությունների մեկ չափահաս անձի հաշվով միջին ամսական եկամտի կառուցվածքում սոցիալական տրանսֆերտները կազմել են սպառման ամենաստորին քվինտիլում 23.3%-ը, իսկ ամենավերին քվինտիլում՝ ընդամենը 8.7% (Հավելված 2, Աղյուսակ A.3.10)։ Ըստ բնակավայրերի դիտարկելիս՝ սոցիալական տրանսֆերտները եկամտի կարևոր աղբյուր են եղել Երևանից դուրս քաղաքաբնակ տնային տնտեսությունների համար՝ կազմելով միջին ամսական եկամտի 17.0%-ը, մինչդեռ գյուղաբնակներ և երևանաբնակներ տնային տնտեսությունների համար սոցիալական տրանսֆերտները կազմել են միջին ամսական եկամտի համապատասխանաբար 13.4%-ը և 12.1%-ը (Հավելված 2,Աղյուսակ A.3.10)։

Ըստ ՏՏԿԱՀ արդյունքների, 2018 թվականին ԸՆ-ը որպես եկամտի աղբյուր նշել է տնային տնտեսությունների 12.6%-ը, կենսաթոշակները՝ 52.8%-ը, երեխայի ծննդյան և խնամքի հետ կապված նպաստները՝ 1.3%-ը, այլ նպաստները, ներառյալ արտոնությունները՝ 1.8%-ը (Աղյուսակ 9.1)։

**Աղյուսակ 9.1. Հայաստան. Սոցիալական տրանսֆերտները որպես եկամտի աղբյուր նշած բնակչության մասնաբաժինը, 2008-2018թթ.**

*(տոկոսներով)*

| | Կենսաթոշակ | Ընտանեկան նպաստ | Գործազրկության նպաստ | Երեխայի ծննդյան և խնամքի նպաստ | Այլ նպաստներ |
|---|---|---|---|---|---|
| **2008թ.** | 50.5 | 15.3 | 0.6 | 0.5 | 3.7 |
| **2009 թ.** | 51.9 | 12.2 | 1.1 | 0.7 | 4.2 |
| **2010 թ.** | 52.5 | 13.4 | 1.3 | 1.1 | 3.1 |
| **2011 թ.** | 53.3 | 10.2 | 1.2 | 1.1 | 3.2 |
| **2012 թ.** | 53.9 | 13.5 | 0.5 | 1.4 | 2.6 |
| **2013 թ.** | 53.7 | 12.2 | 0.4 | 1 | 1.6 |
| **2014 թ.** | 55.2 | 13.3 | 0 | 1.3 | 2.3 |
| **2015 թ.** | 54,0 | 13,5 | 0,1 | 1,7 | 2.1 |
| **2016 թ.** | 52.4 | 13.6 | 0 | 1.3 | 2.7 |
| **2017 թ.** | 55.5 | 12.9 | 0 | 1.4 | 0.3 |
| **2018 թ.** | 52.8 | 12.6 | 0 | 1.3 | 1.8 |

Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2008-2018թթ.*

2018 թվականի հետազոտությամբ ստացված արդյունքների հիման վրա կարելի է եզրահանգել, որ չնայած ՀՆԱ-ի մեջ սոցիալական տրանսֆերտների փոքր մասնաբաժնին՝ դրանք շարունակում են աղքատության հաղթահարմանն ուղղված կարևոր գործիք լինել։ Եթե սոցիալական տրանսֆերտների (կենսաթոշակների և դրամական սոցիալական աջակցության) վճարումը

դադարեցվի, իսկ աղքատ բնակչությունը չկարողանա այլ աղբյուրների հաշվին փոխհատուցել այդ կորուստը, ապա աղքատության և ծայրահեղ աղքատության մակարդակները զգալիորեն կաճեն (Աղյուսակ 9.2): Աղքատության մակարդակը 23.5%-ից կհասնի 44.9%-ի, աղքատներն ավելի կաղքատանան, քանի որ աղքատության խորությունը՝ աղքատության գծի նկատմամբ նրանց միջին սպառման պակասուրդը 4.2%-ից կհասնի 19.0%-ի, և աղքատությունն ավելի կսրվի՝ աղքատության սրության համաթիվը 1.1%-ից կհասնի 12.8%-ի: Նման անբարենպաստ ազդեցությունն առավել նկատելի կլինի ծայրահեղ աղքատ բնակչության համար: Եթե սոցիալական տրանսֆերտների (կենսաթոշակների և դրամական սոցիալական աջակցության) վճարումը դադարեցվի, իսկ ծայրահեղ աղքատ բնակչությունը չկարողանա այլ աղբյուրների հաշվին փոխհատուցել այդ կորուստը, ապա ծայրահեղ աղքատության մակարդակը 1.0%-ից կհասնի 19.1%-ի, ծայրահեղ աղքատներն ավելի կաղքատանան, քանի որ աղքատության խորությունը՝ ծայրահեղ աղքատության գծի նկատմամբ նրանց միջին սպառման պակասուրդը 0.1%-ից կհասնի 10.1%-ի, և ծայրահեղ աղքատությունն ավելի կսրվի՝ աղքատության սրության համաթիվը 0.0%-ից կհասնի 9.4%-ի:

**Աղյուսակ 9.2. Հայաստան. Սոցիալական տրանսֆերտների ներգործությունն աղքատության մեղմացման վրա, 2018թ.**

*(տոկոսներով)*

| | Աղքատներ | | | Ծայրահեղ աղքատներ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Աղքա-տության մակարդակ | Աղքա-տության խորություն | Աղքա-տության սրություն | Աղքա-տության մակարդակ | Աղքա-տության խորություն | Աղքատության սրություն |
| «Հետտրանսֆերտային» մակարդակ (կենսաթոշակ և սոցիալական աջակցություն ստանալուց հետո) | 23.5 | 4.2 | 1.1 | 1.0 | 0.1 | 0.0 |
| «Նախատրանսֆերտային» մակարդակ (նախքան կենսաթոշակ և սոցիալական աջակցություն ստանալը) | 44.9 | 19.0 | 12.8 | 19.1 | 10.1 | 9.4 |
| Նախքան կենսաթոշակների վճարումը (նախքան կենսաթոշակ ստանալը և սոցիալական աջակցություն ստանալուց հետո) | 43.0 | 16.7 | 10.7 | 16.4 | 8.2 | 7.5 |
| Նախքան ընդամենը սոցիալական աջակցության վճարումը (նախքան ԸՆ և այլ սոցիալական աջակցություն ստանալը, կենսաթոշակ ստանալուց հետո) | 25.9 | 6.0 | 2.2 | 3.8 | 0.9 | 0.3 |
| Նախքան ԸՆ վճարումը (նախքան ԸՆ ստանալը, կենսաթոշակ և այլ սոցիալական աջակցություն ստանալուց հետո) | 25.8 | 5.8 | 2.1 | 3.6 | 0.8 | 0.3 |

**Աղբյուրը.** *ՏՏԿԱՀ 2018թ.*

Կենսաթոշակները՝ որպես սոցիալական տրանսֆերտների ավելի մեծ բաղադրիչ, աղքատության հաղթահարման առումով ավելի մեծ դեր ունեն: Այդուհանդերձ, փոքր չէ նաև սոցիալական աջակցության, մասնավորապես՝ ընտանեկան նպաստի ներգործությունը: Օրինակ, եթե դադարեցվի միայն ընտանեկան նպաստի վճարումը, ապա ծայրահեղ աղքատության մակարդակը կավելանա 2.6 տոկոսային կետով (1.0%-ից մինչև 3.6%), իսկ աղքատության մակարդակը կավելանա 2.4 տոկոսային կետով (23.5%-ից մինչև 25.8%): Աղքատությունը կխորանա ու կսրվի

համապատասխանաբար 1.8 և 1.1 տոկոսային կետով, իսկ ծայրահեղ աղքատության խորությունն ու սրությունը կավելանան համապատասխանաբար 0.8 և 0.3 տոկոսային կետով (Աղյուսակ 9.2): Այս ցուցանիշները վկայում են, որ ընտանեկան նպաստները հատկապես մեծ ազդեցություն ունեն ծայրահեղ աղքատության վրա: 2010-2018թթ. ընթացքում աղքատության մակարդակի վրա սոցիալական տրանսֆերտների ներգործության դիտարկումը ցույց է տալիս դրանց կենսական կարևորությունը: 2010 թվականին սոցիալական տրանսֆերտների չվճարման դեպքում աղքատությունը կավելանար 54.2%-ով կամ 18.4 տոկոսային կետով, իսկ 2018 թվականին՝ 44.9%-ով կամ 21.4 տոկոսային կետով (Աղյուսակ 9.3):

**Աղյուսակ 9.3. Հայաստան. Սոցիալական տրանսֆերտների ներգործությունն աղքատության մեղմացման վրա, 2010թ. և 2018թ.**

*(տոկոսներով)*

| | Աղքատության մակարդակ | | Ծայրահեղ աղքատության մակարդակ | |
|---|---|---|---|---|
| | 2010թ. | 2018թ. | 2010թ. | 2018թ. |
| «Հետտրանսֆերտային» մակարդակ (կենսաթոշակ և սոցիալական աջակցություն ստանալուց հետո) | 35.8 | 23.5 | 3.0 | 1.0 |
| «Նախատրանսֆերտային» մակարդակ (նախքան կենսաթոշակ և սոցիալական աջակցություն ստանալը) | 54.2 | 44.9 | 20.9 | 19.1 |
| Նախքան կենսաթոշակների վճարումը (նախքան կենսաթոշակ ստանալը և սոցիալական աջակցություն ստանալուց հետո) | 51.9 | 43.0 | 17.3 | 16.4 |
| Նախքան ընդամենը սոցիալական աջակցության վճարումը (նախքան ԸՆ և այլ սոցիալական աջակցություն ստանալը, կենսաթոշակ ստանալուց հետո) | 39.4 | 25.9 | 6.8 | 3.8 |
| Նախքան ԸՆ վճարումը (նախքան ԸՆ ստանալը, կենսաթոշակ և այլ սոցիալական աջակցություն ստանալուց հետո) | 38.8 | 25.8 | 6.5 | 3.6 |

**Աղբյուրը**. *ՏՏԿԱՀ 2010թ. և 2018թ.*

Աղյուսակ 9.4-ում ներկայացված են աղքատության «նախատրանսֆերտային» և «հետտրանսֆերտային» մակարդակները միայն այն տնային տնտեսությունների համար, որոնք ստանում են այդ սոցիալական տրանսֆերտները: Սոցիալական տրանսֆերտների չվճարման դեպքում էապես կդժվարանա նման տնային տնտեսությունների ապրուստը: Ակնհայտ է, որ պատկերն այս դեպքում շատ ավելի ծանր կլինի, քան նախորդ աղյուսակում արտացոլված՝ ամբողջ բնակչության կտրվածքով գնահատված սոցիալական տրանսֆերտների չվճարման ազդեցությունը: Եթե կենսաթոշակները չվճարվեն, իսկ կենսաթոշակառու բնակչությունը չկարողանա այլ աղբյուրների հաշվին փոխհատուցել այդ կորուստը, ապա աղքատության մակարդակը կենսաթոշակառուների շրջանում էապես կավելանա՝ 26.4%-ից հասնելով 63.4%-ի, իսկ ծայրահեղ աղքատների մասնաբաժինը կենսաթոշակառուների շրջանում կավելանա՝ 1.2%-ից հասնելով 30.4%-ի: Աղքատության մակարդակն ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների շրջանում

շատ ավելի բարձր է երկրի աղքատության միջին մակարդակից նույնիսկ ԸՆ-ը ստանալուց հետո. աղքատության 23.5% միջին մակարդակի համեմատ այն կազմում է 47.3%: Նման տնային տնտեսությունների շրջանում ընտանեկան նպաստի վճարման դադարեցումը կհանգեցնի աղքատության մակարդակի աճի՝ 47.3%-ից մինչև 65.6%, իսկ ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների մասնաբաժինը 3.3%-ից կհասնի 23.7%-ի:

**Աղյուսակ 9.4. Հայաստան. Կենսաթոշակ և /կամ սոցիալական աջակցություն ստացող տնային տնտեսությունների աղքատության մակարդակի վրա սոցիալական տրանսֆերտների ներգործությունը, 2018թ.**

*(տոկոսներով)*

| | Ծայրահեղ աղքատներ | Աղքատներ | Աղքատության խորություն (P1/P0) | Աղքատության սրություն |
|---|---|---|---|---|
| *Կենսաթոշակ ստացող տնային տնտեսություններ* | | | | |
| Կենսաթոշակ ստանալուց հետո | 1.2 | 26.4 | 4.7 | 1.2 |
| Նախքան կենսաթոշակ ստանալը | 30.4 | 63.4 | 28.5 | 19.5 |
| *Սոցիալական աջակցություն ստացող տնային տնտեսություններ* | | | | |
| Սոցիալական աջակցություն ստանալուց հետո | 3.0 | 45.4 | 9.8 | 2.9 |
| Նախքան սոցիալական աջակցություն ստանալը | 23.0 | 62.8 | 22.6 | 10.6 |
| *ԸՆ ստացող տնային տնտեսություններ* | | | | |
| ԸՆ ստանալուց հետո | 3.3 | 47.3 | 10.4 | 3.1 |
| Նախքան ԸՆ ստանալը | 23.7 | 65.6 | 23.5 | 10.7 |

Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2018թ.*

Նշում. *Աղքատության խորությունը (P1/P0) ցույց է տալիս աղքատ կամ ծայրահեղ աղքատ բնակչության սպառման միջին պակասուրդը, համապատասխանաբար, աղքատության ընդհանուր կամ պարենային գծի նկատմամբ:*

Դրամական աջակցությունը դադարեցնելը ոչ միայն կավելացնի աղքատության գծից ցածր գտնվող տնային տնտեսությունների քանակը, այլև կհանգեցնի աղքատության խորության ու սրության սաստկացմանը: Այսպիսով, սոցիալական տրանսֆերտներն էական ազդեցություն ունեն նպաստառու տնային տնտեսությունների աղքատության մակարդակի կրճատման վրա, և թեպետ ոչ բոլոր նպաստառուներն են կարողանում դրամական աջակցությունը ստանալուց հետո հաղթահարել աղքատության բեռը, նրանց շրջանում էապես կրճատվում է աղքատության թե՛ խորությունը, թե՛ սրությունը:

Մարզային կտրվածքով աղքատության մակարդակի նվազեցման վրա ընտանեկան նպաստի ազդեցությունը դիտարկելիս նույնպես ընդգծվում է ընտանեկան նպաստի կարևորությունը, հատկապես՝ ծայրահեղ աղքատ բնակչության համար: Ընտանեկան նպաստի ազդեցությունը ծայրահեղ աղքատության մակարդակի նվազեցման վրա շարունակում է զգալի մնալ Երևանում և բոլոր մարզերում: Եթե ընտանեկան նպաստը չվճարվի, և բնակչությունը չկարողանա այլ աղբյուրների հաշվին փոխհատուցել այդ կորուստը, ապա ծայրահեղ աղքատության մակարդակը կաճի բոլոր 10 մարզերում և Երևան քաղաքում: Ընտանեկան նպաստը միանգամայն կենսական է Շիրակի, Լոռու, Տավուշի և Արմավիրի մարզերի ծայրահեղ աղքատ բնակչության համար, քանի որ ընտանեկան նպաստի չվճարման դեպքում ծայրահեղ աղքատ բնակչության մասնաբաժինը կավելանա 2.1-6.5 տոկոսային կետով:

Ընտանեկան նպաստի չվճարումը կհանգեցնի Արարատի մարզում աղքատության ընդհանուր մակարդակի աճին 4.5 տոկոսային կետով, Տավուշի մարզում՝ 6.2 տոկոսային կետով, իսկ Շիրակի և Լոռու մարզերում՝ համապատասխանաբար 4.2 և 4.8 տոկոսային կետով (Աղյուսակ 9.5.):

### Աղյուսակ 9.5. Հայաստան. Ընտանեկան նպաստի ներգործությունն աղքատության մակարդակի վրա՝ ըստ մարզերի, 2018թ.

*(տոկոսներով)*

| | «Հետտրանսֆերտային» մակարդակ (կենսաթոշակ և սոցիալական աջակցություն ստանալուց հետո) | | Նախքան ԸՆ վճարումը (նախքան ԸՆ ստանալը, կենսաթոշակ և այլ սոցիալական աջակցություն ստանալուց հետո) | | ԸՆ չվճարման ազդեցությամբ պայմանավորված փոփոխությունը, տոկոսային կետ | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ծայրահեղ աղքատության մակարդակ | Աղքատության մակարդակ | Ծայրահեղ աղքատության մակարդակ | Աղքատության մակարդակ | Ծայրահեղ աղքատություն | Աղքատություն |
| ք. Երևան | 1.0 | 20.0 | 2.5 | 20.8 | 1.5 | 0.8 |
| Արագածոտն | 0.0 | 16.2 | 0.4 | 17.7 | 0.4 | 1.5 |
| Արարատ | 0.0 | 19.8 | 3.1 | 24.3 | 3.1 | 4.5 |
| Արմավիր | 0.9 | 25.3 | 4.0 | 26.2 | 3.1 | 1.0 |
| Գեղարքունիք | 0.0 | 22.4 | 1.5 | 25.9 | 1.5 | 3.5 |
| Լոռի | 3.1 | 29.4 | 8.8 | 34.2 | 5.6 | 4.8 |
| Կոտայք | 0.0 | 22.7 | 1.8 | 23.8 | 1.8 | 1.1 |
| Շիրակ | 2.6 | 42.2 | 9.1 | 46.5 | 6.5 | 4.2 |
| Սյունիք | 0.0 | 16.7 | 1.2 | 17.7 | 1.2 | 1.0 |
| Վայոց Ձոր | 1.6 | 18.6 | 2.6 | 20.9 | 1.0 | 2.3 |
| Տավուշ | 0.9 | 25.6 | 3.0 | 31.7 | 2.1 | 6.2 |
| **Ընդամենը** | 1.0 | 20.0 | 2.5 | 20.8 | 1.5 | 0.8 |

Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2018թ.*

## 9.4. Սոցիալական տրանսֆերտների արդյունավետությունը

Ովքե՞ր են ստանում սոցիալական տրանսֆերտներ: Տնային տնտեսությունների ամբողջացված հետազոտության տվյալների հիման վրա սոցիալական տրանսֆերտների արդյունավետությունը գնահատելու համար դիտարկվել է «նախատրանսֆերտային» աղքատ, ծայրահեղ աղքատ, ինչպես նաև ոչ աղքատ բնակչության ընդգրկվածությունը սոցիալական աջակցության ծրագրերում: Որքան բարձր է աղքատ և ծայրահեղ աղքատ բնակչության, և ցածր՝ ոչ աղքատ բնակչության ընդգրկվածությունը, այնքան արդյունավետ է սոցիալական աջակցությունը, և այնքան բարձր է դրա՝ առավել կարիքավորներին ուղղված հասցեականությունը:

Ընտանեկան նպաստի համակարգի դիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ ծայրահեղ աղքատների ընդգրկվածությունն ԸՆ համակարգում աճել է. 2008 թվականի 77.5%-ի համեմատ 2018 թվականին ընտանեկան նպաստ է ստացել «նախքան ԸՆ ստանալը» ծայրահեղ աղքատների 84.2%-ը (Աղյուսակ 9.6): Միևնույն ժամանակ, 2018 թվականին ընտանեկան նպաստ ստացել է «նախքան ԸՆ ստանալը» ոչ աղքատների 5.9%-ը, ինչը 1.5 տոկոսային կետով պակաս է 2008 թվականի համապատասխան ցուցանիշից (7.4%):

Հարկ է նշել, որ կենսաթոշակները՝ ի տարբերություն ընտանեկան նպաստի, վճարվում են բոլոր նրանց, ովքեր ունեն կենսաթոշակ ստանալու իրավունք՝ առանց աղքատության մակարդակը

հաշվի առնելու: Ըստ այդմ, աղքատներին ուղղված հասցեականության խնդիր այս բնագավառում չկա:

### Աղյուսակ 9.6. Հայաստան. Սոցիալական տրանսֆերտների շահառուները, 2008թ. և 2018թ.

*(տոկոսներով)*

| | Նախքան սոցիալական աջակցություն ստանալը | | Նախքան ընտանեկան նպաստ ստանալը | | Նախքան կենսաթոշակ ստանալը | |
|---|---|---|---|---|---|---|
| «Նախատրանսֆերտային» բնակչության ընդգրկվածությունը կենսաթոշակային և սոցիալական աջակցության ծրագրերում | | | | | | |
| | 2008թ. | 2018թ. | 2008թ. | 2018թ. | 2008թ. | 2018թ. |
| Չափավոր աղքատներ | 37.6 | 24.9 | 33.8 | 23.8 | 70.9 | 65.3 |
| Ծայրահեղ աղքատներ | 79.3 | 85.0 | 77.5 | 84.2 | 95.4 | 98.0 |
| Ոչ աղքատներ | 11.2 | 7.0 | 7.4 | 5.9 | 36.5 | 34.0 |

Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2008 և 2018թթ.*

Նշում. *«Չափավոր աղքատներ» տերմինը վերաբերում է աղքատության գծից ներքև, սակայն ծայրահեղ աղքատության գծից վերև գտնվող անձանց:*

**Սոցիալական տրասֆերտները և անհավասարությունը.** ՏՏԿԱՀ գնահատականները ցույց են տալիս, որ սոցիալական տրանսֆերտները նպաստում են նաև սպառման բաշխվածության միջև անհավասարության նվազեցմանը: Սպառման ագրեգատի բաշխվածության «նախատրանսֆերտային» Ջինիի գործակիցը 2018 թվականին 0.388-ից նվազելով կազմում է 0.312, երբ սպառման ագրեգատին ավելացվում են կենսաթոշակները, իսկ բոլոր սոցիալական տրանսֆերտների ավելացման պարագայում սպառման անհավասարությունը կրճատվում է մինչև 0.298 (Աղյուսակ 9.7.):

### Աղյուսակ 9.7. Հայաստան. Սոցիալական տրանսֆերտների ներգործությունը սպառման ագրեգատի բաշխվածության անհավասարության վրա (սպառման ագրեգատի Ջինիի գործակիցները), 2008-2018թթ.

| | «Նախատրանսֆերտա-յին» մակարդակ (նախքան կենսաթոշակ և սոցիալական աջակցություն ստանալը) | Նախքան ընդամենը սոցիալական աջակցության վճարումը (նախքան ԸՆ և այլ սոցիալական աջակցություն ստանալը, կենսաթոշակ ստանալուց հետո) | «Հետտրանսֆերտա-յին» մակարդակ (կենսաթոշակ և սոցիալական աջակցություն ստանալուց հետո) |
|---|---|---|---|
| **2008թ.** | 0.316 | 0.258 | 0.242 |
| **2009թ.** | 0.346 | 0.272 | 0.257 |
| **2010թ.** | 0.359 | 0.282 | 0.265 |
| **2011թ.** | 0.357 | 0.28 | 0.267 |
| **2012թ.** | 0.359 | 0.282 | 0.269 |
| **2013թ.** | 0.354 | 0.282 | 0.271 |
| **2014թ.** | 0.377 | 0.289 | 0.277 |
| **2015թ.** | 0.375 | 0.292 | 0.279 |
| **2016թ.** | 0.362 | 0.302 | 0.286 |
| **2017թ.** | 0.376 | 0.303 | 0.289 |
| **2018թ.** | 0.388 | 0.312 | 0.298 |

Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2008-2018թթ*

### 9.5. Ընտանեկան նպաստ

Աղյուսակ 9.8-ում ներկայացնում է 2016-2018 թվականներին ԸՆ ծրագրում ընդգրկվածության մակարդակը ըստ «նախքան սոցիալական աջակցություն ստանալը» սպառման քվինտիլների և աղքատության վերին գծից ցածր գտնվող բնակչության համար: ԸՆ ծրագրում ընդգրկվածությունը շարունակում է նվազել՝ 2018 թվականին կազմելով բնակչության ընդհանուր թվի 12.6%-ը: 2016-ից 2017 թվականներին ԸՆ ծրագրում ընդգրկվածությունը նույնպես նվազել է՝ բնակչության ընդհանուր թվի 13.6%-ից հասնելով 12.9%-ի: Այնուամենայնիվ, աղքատ բնակչության ընդգրկվածության մակարդակը 2018 թվականին աճել է, թեպետ այդ աճն այնքան զգալի չի եղել, որքան 2016-ից 2017 թվականներին: Աղքատների (այսինքն՝ աղքատության վերին գծից ցածր գտնվողների) 32.1%-ը 2018 թվականին ներառված է եղել ԸՆ ծրագրում, ինչը փոքր-ինչ գերազանցում է 2017 թվականի համապատասխան ցուցանիշը (31.3%): Չնայած այն հանգամանքին, որ վերին երեք քվինտիլների ընդգրկվածությունը 2016-ից 2017 թվականներին նվազել է 6.6%-ից մինչև 4.1%, 2018 թվականին այն աճել է՝ հասնելով 4.7%-ի: 2018 թվականին սոցիալական աջակցության բոլոր նպաստների, այդ թվում՝ ԸՆ-ի, երեխայի խնամքի և սոցիալական օգնության այլ նպաստների ծրագրերում ընդգրկվածությունն աղքատների շրջանում փոքր-ինչ աճել է (2017 թվականի 32.8%-ից 2018 թվականին հասնելով 33.3%-ի): Ամենաաղքատ քվինտիլում արձանագրվել է ընդգրկվածության ցուցանիշի ոչ մեծ անկում (2017 թվականին՝ 14.4%, 2018 թվականին՝ 13.9%):

**Աղյուսակ 9.8. Հայաստան. Ընտանեկան նպաստ և այլ սոցիալական աջակցություն ստացողների բաշխումն ըստ «նախքան սոցիալական աջակցություն ստանալը» սպառման քվինտիլների, 2016-2018թթ.**

*(տոկոսներով)*

| | | Քվինտիլ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը | Ստորին | II | III | IV | Վերին | Աղքատներ |
| *Ընտանեկան նպաստ* | | | | | | | |
| 2016թ. | 13.6 | 35.3 | 12.9 | 10.3 | 6.4 | 3.2 | 24.3 |
| 2017թ. | 12.9 | 39.0 | 13.3 | 6.8 | 3.7 | 1.8 | 31.3 |
| 2018թ. | 12.6 | 37.9 | 11.1 | 7.1 | 4.6 | 2.5 | 32.1 |
| *Սոցիալական աջակցություն (ներառյալ ԸՆ)* | | | | | | | |
| 2016թ. | 17.1 | 43.4 | 15.6 | 11.6 | 8.2 | 6.5 | 30 |
| 2017թ. | 14.4 | 40.4 | 14.7 | 7.6 | 5.3 | 4.0 | 32.8 |
| 2018թ. | 13.9 | 39.2 | 11.9 | 8.7 | 6.0 | 3.7 | 33.3 |

Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2016-2018թթ*

Աղյուսակ 9.9-ը ներկայացնում է ՏՏԿԱՀ հիման վրա ԸՆ-ի ընդհանուր վճարումների (նպաստների) և նպաստառուների բաշխումը՝ ըստ «նախքան ԸՆ ստանալը» սպառման քվինտիլային խմբերի: Տվյալները ցույց են տալիս, որ 2018 թվականին նպաստառուների 75.5%-ը «նախքան ԸՆ ստանալը» սպառման ամենաստորին քվինտիլներից են, որոնք ստանում են ԸՆ-ի ընդհանուր վճարումների (նպաստների) 76.5%-ը: ԸՆ-ի միջոցների իրական «արտահոսքը» սպառման վերին քվինտիլների (մանավորապես՝ ամենավերին երկու քվինտիլների) նպաստառուներին բաշխված միջոցներն են, այսինքն՝ նպաստառուների այն 12.2%-ը, որոնց հատկացվել է ԸՆ վճարումների 11.2%-ը, թեպետ նրանք կարիքավոր չեն:

**Աղյուսակ 9.9. Հայաստան. Ընտանեկան նպաստ և այլ սոցիալական աջակցություն ստացողների և վճարված գումարների բաշխումն ըստ «նախքան ԸՆ ստանալը» և «նախքան սոցիալական աջակցություն ստանալը» սպառման քվինտիլների, 2018թ.**

*(տոկոսներով)*

| | Քվինտիլներ | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Ստորին | 2-րդ | 3-րդ | 4-րդ | Վերին |
| *Ընտանեկան նպաստ, ըստ «նախքան ԸՆ ստանալը» սպառման քվինտիլների* | | | | | |
| Նպաստներ | 57.0 | 18.5 | 12.3 | 7.9 | 4.3 |
| Նպաստառուներ | 58.1 | 18.4 | 12.3 | 7.6 | 3.5 |
| *Սոցիալական աջակցություն (ներառյալ ԸՆ), ըստ «նախքան սոցիալական աջակցություն ստանալը» սպառման քվինտիլների* | | | | | |
| Նպաստներ | 55.1 | 18.0 | 13.2 | 8.7 | 5.1 |
| Նպաստառուներ | 54.3 | 18.1 | 13.7 | 9.0 | 4.8 |

Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2018թ.*

Բնակչության ո՞ր խմբերը ԸՆ համակարգում ընդգրկվելու կամ այդ համակարգից դուրս մնալու ավելի մեծ հավանականություն ունեն: Ըստ ՏՏԿԱՀ արդյունքների հիման վրա գնահատականների, աղքատության մակարդակը շարունակում է բարձր մնալ առանց աշխատող անդամի կամ առանց վարձու աշխատանքից ստացվող եկամտի, և հատկապես՝ 4 և ավելի երեխաներ ունեցող տնային տնտեսություններում, որոնց ընդգրկվածությունն ԸՆ համակարգում ավելի մեծ է (Աղյուսակ 9.10): Գյուղաբնակ հողազուրկ տնային տնտեսությունների, ինչպես նաև միգրացիայի մեջ գտնվող անդամ չունեցող տնային տնտեսությունների շրջանում նույնպես աղքատության մակարդակն ընդհանուրի համեմատ բարձր է. այդուհանդերձ, այդ տնային տնտեսությունների ընդգրկվածությունն ԸՆ համակարգում փոքր է:

**Աղյուսակ 9.10. Հայաստան. Աղքատության մակարդակը և «նախքան ԸՆ ստանալը» աղքատների ընդգրկվածությունն ըստ տնային տնտեսությունների առանձին խմբերի, 2008 և 2018թթ.**

*(տոկոսներով)*

| Տնային տնտեսության առանձին խումբը | Ծայրահեղ աղքատության մակարդակը | | Աղքատության մակարդակը | | Նախքան ԸՆ աղքատների ընդգրկվածությունը | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2008թ. | 2018թ. | 2008թ. | 2018թ. | 2008թ. | 2018թ. |
| 4 և ավելի երեխաներ ունեցող տնային տնտեսություններ | 23.1 | 22,8 | 56.7 | 63,9 | 76.7 | 69,8 |
| Առանց աշխատող անդամի տնային տնտեսություններ | 23.1 | 27.7 | 56.7 | 62.6 | 76.7 | 75.3 |
| Առանց վարձու աշխատանքից ստացվող եկամտի տնային տնտեսություններ | 11.6 | 7.7 | 43.6 | 31.6 | 71.1 | 53.0 |
| Գյուղաբնակ հողազուրկ տնային տնտեսություններ | 8.3 | 6.7 | 37.6 | 28.5 | 69.4 | 57.1 |
| Միգրացիայի մեջ գտնվող անդամ չունեցող տնային տնտեսություններ | 4 | 4.0 | 28.3 | 27.2 | 65.8 | 30.3 |

Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2008 և 2018թթ.*

# Գլուխ 10. Բնակչության բնակարանային պայմանները

Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտություններն (ՏՏԿԱՀ) առանձնահատուկ հնարավորություն են ընձեռում հավաքագրելու տվյալներ՝ բնակչության կենցաղային պայմանների, կոմունալ ծառայությունների մատչելիության և բնակարանային խնդիրներին առնչվող այլ հարցերի շուրջ: Այս գլխում ներկայացված է 2008թ.-ից 2018թ.-ն ընկած ժամանակահատվածում, ՏՏԿԱՀ-ի տվյալներով ստացված, բնակարանային պայմանների հիմնական ցուցանիշների մասին համեմատական վերլուծությունը:

## 10.1. Բնակչության բնակարանային պայմանները

Հայաստանում 2018թ. տնային տնտեսությունների գերակշիռ մասը (91.2%-ը) հանդիսանում է իր կացարանի սեփականատերը: Քաղաքային բնակավայրերում տնային տնտեսությունները գլխավորապես բնակվում են բազմաբնակարան շենքերում՝ 72.7%, իսկ գյուղական բնակավայրերում գերակշռում են առանձնատները՝ 94.6% (Աղյուսակ 10.1): 2018թ.-ին հանրակացարաններում ապրողների տեսակարար կշիռը ավելի մեծ է քաղաք Երևանում: Հանրակացարաններում, ժամանակավոր և այլ տեսակի կացարաններում բնակվող քաղաքային և գյուղական բնակչության համամասնությունը կազմում է 2.4% և 1.0%: Ժամանակավոր կացարաններում բնակվող տնային տնտեսությունների մեծ մասն աղքատ է և պատկանում է 1-ին քվինտիլին:

**Աղյուսակ 10.1. Հայաստան: Տնային տնտեսությունների բաշխումն ըստ կացարանի տեսակի, բնակավայրի, աղքատության մակարդակի և սպառման քվինտիլային խմբերի, 2018թ.**

*(տոկոսներով)*

| | Ընդամենը | այդ թվում՝ ըստ կացարանի տեսակի | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | առանձնատուն | բնակարան | հանրակացարան | ժամանակավոր կացարան | այլ տեսակի կացարան |
| *Ըստ բնակության վայրի* | | | | | | |
| Քաղաք | 100 | 24.9 | 72.7 | 1.2 | 1.1 | 0.1 |
| այդ թվում Երևան | 100 | 23.3 | 74.7 | 1.7 | 0.1 | 0.2 |
| Այլ քաղաք | 100 | 26.7 | 70.5 | 0.6 | 2.2 | 0.0 |
| Գյուղ | 100 | 94.6 | 4.4 | 0.0 | 0.9 | 0.1 |
| Ընդամենը | 100 | 49.2 | 48.9 | 0.8 | 1.0 | 0.1 |
| | | | | | | |
| Ոչ աղքատ | 100 | 48.9 | 49.7 | 0.5 | 0.8 | 0.1 |
| Աղքատ | 100 | 49.9 | 46.2 | 1.7 | 1.9 | 0.3 |
| Ծայրահեղ աղքատ | 100 | 67.6 | 22.2 | 3.5 | 6.7 | 0.0 |

| | Ընդամենը | այդ թվում՝ ըստ կացարանի տեսակի | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | առանձնատուն | բնակարան | հանրակացարան | ժամանակավոր կացարան | այլ տեսակի կացարան |
| | | | | | | |
| Առաջին | 100 | 51.8 | 44.0 | 1.9 | 1.9 | 0.4 |
| Երկրորդ | 100 | 52.0 | 45.7 | 0.8 | 1.5 | 0.0 |
| Երրորդ | 100 | 49.3 | 49.2 | 0.4 | 1.1 | 0.0 |
| Չորրորդ | 100 | 50.0 | 49.1 | 0.4 | 0.5 | 0.0 |
| Հինգերորդ | 100 | 44.8 | 53.8 | 0.6 | 0.6 | 0.2 |

Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2018թ.*

**Կացարանների ծանրաբեռնվածությունը** լուրջ խնդիր է երկրում: 2018թ.-ի հետազոտության տվյալներով մեկ սենյականոց բնակարանների ծանրաբեռնվածությունը կազմել է 2.03 մարդ: Կացարանների ծանրաբեռնվածությունը կախված է աղքատության մակարդակից: Այսպես, հետազոտության տվյալների համաձայն, մեկ սենյականոց բնակարանների ծանրաբեռնվածությունն ամենացածր քվինտիլում 2.1 անգամ գերազանցում է ամենաբարձր քվինտիլում գրանցված ցուցանիշը: 2018թ.-ին այդ ծանրաբեռնվածությունն ամենացածր քվինտիլում կազմել է 2.95 մարդ տնային տնտեսության հաշվով, իսկ ամենաբարձր քվինտիլում՝ 1.74 մարդ: 1 000 տնային տնտեսությունից 507 տնային տնտեսությունում (2008թ.-ի՝ 877ի, և 2017թ.-ի՝582-ի համեմատ) մեկ սենյականոց բնակարաններում գրանցվել է 2 և ավելի առկա մարդ: 2018թ.-ին գյուղական բնակչության ապահովվածությունն ընդհանուր մակերեսով բավական գերազանցել է քաղաքայինին (Աղյուսակ 10.2): Միևնույն ժամանակ, բնակարանային ֆոնդի բարեկարգվածությունը գյուղում անհամեմատ ցածր է, քան քաղաքում: Խոհանոցի, սառը ջրի, ողողվող զուգարանի և լոգարանի (գործող) միաժամանակյա առկայություն գրանցվել է գյուղական բնակավայրերի միայն 12.4% տնային տնտեսությունների մոտ, իսկ քաղաքային բնակավայրերում՝ 87.6%:

**Աղյուսակ 10.2. Հայաստան. Տնային տնտեսության մեկ շնչի հաշվով ապահովվածությունն ընդհանուր մակերեսով, 2018թ.**

*(քառ.մ.)*

| | |
|---|---|
| Ընդամենը | 25.8 |
| այդ թվում՝ քաղաքային | 22.9 |
| գյուղական | 30.4 |

Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2018թ.*

Հետազոտության արդյունքում ստացվել են նաև տնային տնտեսությունների սուբյեկտիվ գնահատականներն իրենց բնակարանային պայմանների վերաբերյալ (Աղյուսակ 10.3): 2018թ.-ին տնային տնտեսությունների մեծ մասի՝62.3%-ի գնահատմամբ իրենց բնակարանային պայմանները բավարար են (2008թ.-ի 60.2%-ի և 2017թ.-ի՝ 63.4%-ի, դիմաց): Տնային տնտեսությունների 16.8%-ն իր բնակարանային պայմանները գնահատել է վատ, իսկ 2.6%-ը՝ շատ վատ: Միայն 18.3%-ն է իր բնակարանային պայմաններին տվել լավ կամ շատ լավ գնահատական (2008թ.-ի 12.2%-ի և 2017թ.-ի՝15.4%-ի դիմաց): Բնակարանային պայմանների վերաբերյալ տնային տնտեսությունների սուբյեկտիվ գնահատականները դիտարկվել են նաև ըստ բնակության վայրի, աղքատության մակարդակի և ըստ սպառման ազրեգատի քվինտիլային խմբերի: 2018թ.-ին քաղաքաբնակ տնային տնտեսություններն ավելի բավարարված են իրենց բնակարանային պայմաններից, քան նմանատիպ գյուղաբնակ տնային տնտեսությունները (Աղյուսակ 10.3):

Առավել աղքատ տնային տնտեսությունները, որոնք գտնվում են ամենացածր քվինտիլային խմբերում, իրենց բնակարանային պայմաններից ավելի դժգոհ են, քան ոչ աղքատները, ամենավերին քվինտիլում բնակարանային պայմաններից բավարարվածության մակարդակն ավելի բարձր է: Ամենաստորին սպառման քվինտիլում՝ 33.0%-ն իր բնակարանային պայմանները գնահատել է վատ կամ շատ վատ, իսկ ամենավերին քվինտիլում նման տնային տնտեսությունները կազմել են 11.1%:

**Աղյուսակ 10.3. Հայաստան. Բնակարանային պայմանների վերաբերյալ տնային տնտեսությունների սուբյեկտիվ գնահատականները, 2018թ.**

*(տոկոսներով)*

| | Ընդամենը | Բնակարանային պայմանների վերաբերյալ տնային տնտեսությունների սուբյեկտիվ գնահատականները | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | շատ լավ | լավ | բավարար | վատ | շատ վատ |
| *Ըստ բնակության վայրի* | | | | | | |
| Քաղաք | 100 | 0.5 | 21.2 | 63.2 | 12.6 | 2.5 |
| այդ թվում՝ ք.Երևան | 100 | 0.5 | 18.3 | 67.4 | 10.6 | 3.2 |
| այլ քաղաք | 100 | 0.4 | 24.3 | 58.9 | 14.7 | 1.7 |
| Գյուղ | 100 | 0.3 | 11.7 | 60.3 | 24.8 | 2.9 |
| Ընդամենը | 100 | 0.4 | 17.9 | 62.3 | 16.8 | 2.6 |
| | | | | | | |
| Ոչ աղքատ | 100 | 0.4 | 19.8 | 63.1 | 15.2 | 1.5 |
| Աղքատ (առանց ծայրահեղ աղքատների) | 100 | 0.3 | 10.1 | 59.2 | 23.3 | 7.1 |
| Ծայրահեղ աղքատ | 100 | 0.0 | 0.0 | 39.1 | 38.4 | 22.5 |
| | | | | | | |
| Առաջին | 100 | 0.4 | 9.9 | 56.7 | 25.2 | 7.8 |
| Երկրորդ | 100 | 0.0 | 10.6 | 63.5 | 21.6 | 4.3 |
| Երրորդ | 100 | 0.1 | 15.4 | 67.3 | 15.5 | 1.7 |
| Չորրորդ | 100 | 0.2 | 19.3 | 64.3 | 15.4 | 0.8 |
| Հինգերորդ | 100 | 1.2 | 28.9 | 58.8 | 10.4 | 0.7 |

Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2018թ.*

Բնակարանային պայմանները համեմատաբար ավելի վատ են աղքատ և հատկապես ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններում: Եթե բնակարանի մակերեսի սակավությունից դժգոհել է հարցմանը մասնակից ոչ աղքատ տնային տնտեսությունների 15.7%-ը, ապա աղքատ տնային տնտեսությունների շրջանում բնակմակերեսի չափից դժգոհել է տնային տնտեսությունների 29.6%-ը, ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների 64.0%-ը (Աղյուսակ 10.4.): Նույն կերպ ծայրահեղ աղքատների համար խնդիր է հանդիսացել ջեռուցման պակասը, քանդված պատեր և հատակ ունենալը, ինչպես նաև՝ քանդված փեղկեր և դռներ ունենալը, խոնավությունը, կաթող տանիքը և վատ լուսավորվածությունը:

**Աղյուսակ 10.4. Հայաստան. Բնակարանային պայմանների հետ կապված տնային տնտեսությունների բողոքները 2018թ.-ին ըստ աղքատության մակարդակի**

*(տոկոսներով)*

| | Ոչ աղքատ | Աղքատ | Ծայրահեղ աղքատ |
|---|---|---|---|
| Ընդամենը | **100*** | **100*** | **100*** |
| Մակերեսի սակավություն | 15.7 | 29.6 | 64.0 |
| Աղմուկ հարևաններից և շրջապատից | 2.9 | 5.1 | 9.2 |
| Վատ լուսավորվածություն | 6.3 | 13.3 | 29.1 |
| Ջեռուցման պակաս | 46.9 | 64.7 | 91.3 |
| Խոնավություն | 21.6 | 30.6 | 46.3 |

| | Ոչ աղքատ | Աղքատ | Ծայրահեղ աղքատ |
|---|---|---|---|
| Կաթող տանիք | 10.7 | 16.6 | 40.7 |
| Քանդված պատեր և հատակ | 16.6 | 34.8 | 75.2 |
| Քանդված փեղկեր և դռներ | 13.9 | 30.0 | 63.1 |
| Երթևեկության խցանում | 2.5 | 2.4 | 12.4 |
| Արդյունաբերական արտանետում | 3.4 | 4.7 | 0.0 |
| Վերելակը հաճախակի չի գործում | 3.1 | 2.6 | 6.2 |
| Ջրամատակարարումը վատ է | 11.2 | 13.8 | 25.3 |
| Աղբահանությունը վատ է | 17.9 | 25.7 | 29.4 |
| Բազմաբնակարան շենքի ընդհանուր օգտագործման տարածքների և բակերի սպասարկումը վատն է | 15.2 | 16.9 | 18.9 |
| Կանաչապատ գոտիների պակաս | 29.2 | 33.9 | 49.1 |
| Այլ | 4.9 | 7.2 | 23.7 |

Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2018թ.*

Նշում. **Գումարը գերազանցում է 100%-ը, քանի որ տնային տնտեսությունները կարող էին նշել մի քանի պատասխան*

2018թ.-ին տնային տնտեսությունների միայն 2.9%-ը կամ 23.3 հազարն է կարողացել վերանորոգել իր կացարանը վերջին մեկ տարվա ընթացքում, ընդ որում նրանց գերակշռող մասը՝ 93.1%-ը, եղել են ոչ աղքատ տնային տնտեսությունները, մինչդեռ աղքատ տնային տնտեսությունները կազմել են 6.9%, իսկ ծայրահեղ աղքատներից և ոչ մեկը չի կարողացել վերանորոգել իր կացարանը:

## 10.2. Խմելու ջրի մատչելիությունը, ջրահեռացումը և աղբահանությունը

**Խմելու ջրի մատչելիությունը.** 2018թ.-ի հետազոտության տվյալներով կենտրոնացված ջրամատակարարման համակարգ ունեն հարցմանը մասնակցած տնային տնտեսությունների ճնշող մեծամասնությունը՝ քաղաքաբնակ տնային տնտեսությունների 99.7%-ը և գյուղաբնակ տնային տնտեսությունների 94.4%-ը (Աղյուսակ 10.5):

Կենտրոնացված ջրամատակարարում ունեցող տնային տնտեսությունների 97.0%-ի մոտ ջրի ծորակը գտնվում է տանը, 2.8%-ի մոտ՝ բակում, իսկ 0.2%-ի մոտ՝ փողոցում:

**Աղյուսակ 10.5. Հայաստան. Խմելու ջրի մատչելիությունը տնային տնտեսությունների համար 2008 և 2018թթ.-ի համեմատականը**

*(տոկոսներով)*

| Ջրի հիմնական աղբյուրը | Ընդամենը հանրապետությունում | | Քաղաքային բնակավայրերում | | Գյուղական բնակավայրերում | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2008թ. | 2018թ. | 2008թ. | 2018թ. | 2008թ. | 2018թ. |
| Կենտրոնացված ջրամատակարարում | 97.1 | 97.9 | 99.5 | 99.7 | 92.4 | 94.4 |
| մինչև 1 ժամ | 0.7 | 0.0 | 0.1 | 0.0 | 1.9 | 0.0 |
| 1-5 ժամ | 31.3 | 8.4 | 31.2 | 2.7 | 31.4 | 18.4 |
| 6-12 ժամ | 28.6 | 10.1 | 32.6 | 5.4 | 20.5 | 18.3 |
| 13-23 ժամ | 5.7 | 9.1 | 5.9 | 9.8 | 5.3 | 7.9 |
| 24 ժամ | 33.7 | 72.3 | 30.2 | 82.1 | 40.9 | 55.4 |
| Ջրհոր, աղբյուր | 1.2 | 0.9 | 0.1 | 0.3 | 3.1 | 2.2 |
| Ջրամատակարարման սեփական համակարգ | 0.5 | 0.9 | 0.1 | 0.0 | 1.3 | 2.5 |
| Բերովի ջուր | 1.1 | 0.0 | 0.2 | 0.0 | 3.0 | 0.0 |
| Այլ աղբյուրներ | 0.1 | 0.3 | 0.1 | 0.0 | 0.2 | 0.9 |

Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2008 և 2018թթ*

Կենտրոնացված ջրամատակարարման համակարգը միշտ չէ, որ ապահովում է բավարար ջրամատակարարման ծառայություններ: 2018թ.-ին տնային տնտեսություններն օրական ջուր ունեցել են միջինը 20.3 ժամ: Կենտրոնացված ջրամատակարարման համակարգ ունեցող տնային տնտեսությունների միայն 72.3%-ն է ունեցել շուրջօրյա ջրամատակարարում: Չնայած դա 2008թ.-ի համեմատ ակնհայտ բարելավում է, այնուամենայնիվ, 2018թ.-ին տնային տնտեսությունների 8.4%-ը ջուր է ունեցել օրական 1-5 ժամ: Հանրապետության ոչ բոլոր բնակավայրերում է, որ բնակչությանը ջուրը մատուցվել է ամեն օր: Ամսվա ընթացքում տնային տնտեսությունները ջուր ունեցել են միջինում 30 օր:

2018թ.-ին քաղաքային բնակավայրերում տնային տնտեսությունների 0.3%-ը ջուր է ունեցել 3 շաբաթ:

Գյուղական բնակավայրերում տնային տնտեսությունների 0.3%-ը ջուր է ունեցել ամսական 1-7օր, 0.9%-ը ամսական ջուր է ունեցել 2 շաբաթ, 3.7%-ը՝ 3 շաբաթ:

Հանրապետությունում տնային տնտեսությունների 0.3%-ը ջուր է ունեցել ամսական 2 շաբաթ, 1.5%-ը՝ 3 շաբաթ:

**Աղյուսակ 10.6. Հայաստան Ջրամատակարարման ծառայությունների մատչելիությունն ըստ սպառման ագրեգատի քվինտիլային խմբերի, 2008 և 2018թ.**

*(տոկոսներով)*

| | Առաջին քվինտիլ | | Երկրորդ քվինտիլ | | Երրորդ քվինտիլ | | Չորրորդ քվինտիլ | | Հինգերորդ քվինտիլ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2008թ | 2018թ | 2008թ | 2018թ | 2008թ | 2018թ | 2008թ | 2018թ | 2008թ | 2018թ |
| Կենտրոնացված ջրամատակա-րարում | 96.6 | 96.3 | 96.4 | 96.8 | 96.0 | 97.7 | 97.8 | 98.7 | 98.2 | 99.0 |
| մինչև 1 ժամ | 1.1 | 0.0 | 1.0 | 0.0 | 0.5 | 0.0 | 0.5 | 0.0 | 0.5 | 0.0 |
| 1-5 ժամ | 35.5 | 10.2 | 33.8 | 7.1 | 28.6 | 8.4 | 30.1 | 7.4 | 29.4 | 9.0 |
| 6-12 ժամ | 24.0 | 8.9 | 26.9 | 12.4 | 28.2 | 7.5 | 32.7 | 10.5 | 30.3 | 11.2 |
| 13-23 ժամ | 4.5 | 6.1 | 6.5 | 10.3 | 6.2 | 9.9 | 5.1 | 9.5 | 6.1 | 9.8 |
| 24 ժամ | 34.9 | 74.8 | 31.8 | 70.2 | 36.5 | 74.2 | 31.6 | 72.6 | 33.7 | 70.0 |
| Ջրհոր, աղբյուր | 1.6 | 1.7 | 1.2 | 1.5 | 1.1 | 1.2 | 1.4 | 0.4 | 0.6 | 0.3 |
| Ջրամատակա-րարման սեփական աղբյուր | 0.5 | 1.5 | 0.7 | 1.4 | 0.8 | 0.7 | 0.3 | 0.5 | 0.5 | 0.6 |
| Բերովի ջուր | 1.0 | 0.0 | 1.7 | 0.0 | 2.0 | 0.0 | 0.3 | 0.0 | 0.7 | 0.0 |
| Այլ աղբյուրներ | 0.3 | 0.4 | - | 0.4 | 0.1 | 0.4 | 0.2 | 0.4 | 0.0 | 0.1 |

Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2008 և 2018թթ.*

2018թ.-ին տնային տնտեսություններում կենտրոնացված ջրամատակարարման առկայությունը, ըստ սպառման ագրեգատի քվինտիլային բաշխվածության, շատ չի տարբերվում և կազմում է 96- 99%:

Այդուհանդերձ, ոչ աղքատ տնային տնտեսությունների 11.2%-ը, աղքատ տնային տնտեսությունների 13.8%-ը և ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների 25.3%-ը նշել են ջրամատակարարման ծառայության վատ վիճակ (Աղյուսակ 10.4):

**Ջրահեռացման կենտրոնացված համակարգ.** 2018թ.-ին երկրում ավելացել է ջրահեռացման կենտրոնացված համակարգից օգտվող տնային տնտեսությունների համամասնությունը՝ 2008թ.-ի համեմատ (համապատասխանաբար՝ 71.9 և 66.7 տոկոս) (Աղյուսակ 10.7):

**Աղյուսակ 10.7. Հայաստան. Ջրահեռացման կենտրոնացված համակարգի մատչելիությունը, 2008 և 2018թթ.**

*(տոկոսներով)*

| | Քաղաքային բնակա-վայրերը | | Երևան | | Այլ քաղաքներ | | Գյուղական բնակա-վայրեր | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2008թ. | 2018թ. | 2008թ. | 2018թ. | 2008թ. | 2018թ. | 2008թ. | 2018թ. | 2008թ. | 2018թ. |
| Ջրահեռացման կենտրոնացված համակարգ | 91.1 | 98.1 | 96.5 | 98.6 | 85.5 | 97.5 | 19.0 | 28.6 | 66.7 | 71.9 |
| Ջրահեռացման կենտրոնացված համակարգը չի գործում | 0.2 | 1.9 | 0.1 | 1.4 | 0.3 | 2.5 | 1.3 | 71.3 | 0.6 | 28.1 |
| Կոյուղու բացակայություն | 8.7 | 0.0 | 3.4 | 0.0 | 14.2 | 0.0 | 79.7 | 0.1 | 32.7 | 0.0 |

Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2008 և 2018թթ.*

Ջրահեռացման կենտրոնացված համակարգի առկայության առումով զգալի է քաղաք-գյուղ տարբերությունը: Ջրահեռացման կենտրոնացված համակարգից օգտվում են Երևանի գրեթե բոլոր բնակիչները (98.6%): Այլ քաղաքային բնակավայրերում ջրահեռացման կենտրոնացված համակարգ ունեն տնային տնտեսությունների 97.5%-ը, մինչդեռ գյուղական բնակավայրերում ջրահեռացման կենտրոնացված համակարգից օգտվում են տնային տնտեսությունների միայն 28.6%-ը: Դա լուրջ խնդիր է, քանզի կոյուղու առկայությունը շատ կարևոր է բավարար սանիտարական պայմաններ ապահովելու համար, ինչպես նաև առողջապահության տեսանկյունից:

Ջրահեռացման կենտրոնացված համակարգի առկայությունը, ըստ սպառման ագրեգատի քվինտիլային խմբերի (Աղյուսակ 10.8), տատանվում է 69-ից մինչև 76%-ը:

**Աղյուսակ 10.8. Հայաստան. Ջրահեռացման կենտրոնացված համակարգի առկայությունն ըստ սպառման ագրեգատի քվինտիլային խմբերի, 2018թ.**

*(տոկոսներով)*

| Ջրահեռացման համակարգի առկայությունը | Սպառման ագրեգատի քվինտիլային խմբեր | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Առաջին | Երկրորդ | Երրորդ | Չորրորդ | Հինգերորդ |
| Ջրահեռացման կենտրո-նացված համակարգ | 72.3 | 72.9 | 75.8 | 69.0 | 69.5 |
| Ջրահեռացման կենտրո-նացված համակարգը չի գործում | 0.0 | 0.1 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Կոյուղու բացակայություն | 27.7 | 27.0 | 24.2 | 31.0 | 30.5 |

Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2018թ.*

**Աղբահանություն.** 2018թ.-ին 2008թ.-ի համեմատ, երկրում ավելացել է աղբահանության կենտրոնացված համակարգից (աղբամուղ, աղբը հավաքվում է բեռնատարով, աղբակույտի մեջ) օգտվող տնային տնտեսությունների համամասնությունը (93.6%՝ 80.9%-ի դիմաց) (Աղյուսակ 10.9): Աղբահանության ծառայությունն ավելի լավ է գործում քաղաքային բնակավայրերում, քան

գյուղական բնակավայրերում, որտեղ տնային տնտեսությունները շատ հաճախ այրում կամ հորում են իրենց աղբը: Բնակչության մի մասը՝ ծայրահեղ աղքատների 29.4%-ը, աղքատների 25.7%-ը և ոչ աղքատների 17.9%-ը բողոքել են, որ աղբահանությունը վատ է իրականացվում (Աղյուսակ 10.4):

**Աղյուսակ 10.9. Հայաստան. Աղբահանությունը, 2008 և 2018թթ.**

*(տոկոսներով)*

| | Քաղաքային բնակավայրեր | | Երևան | | Այլ քաղաքներ | | Գյուղական բնակավայրեր | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2008թ. | 2018թ. | 2008թ. | 2018թ. | 2008թ. | 2018թ. | 2008թ. | 2018թ. | 2008թ. | 2018թ. |
| Աղբամուղ և/կամ հավաքվում է բեռնատարով. թափվում է աղբա-կույտի մեջ | 98.0 | 99.4 | 99.5 | 99.1 | 96.5 | 99.7 | 47.4 | 84.2 | 80.9 | 93.6 |
| Այրվում է | 0.8 | 0.1 | 0.1 | 0.0 | 1.5 | 0.3 | 31.9 | 13.3 | 11.3 | 5.1 |
| Հորվում է | 0.4 | 0.0 | 0.1 | 0.0 | 0.6 | 0.1 | 10.4 | 2.0 | 3.8 | 0.8 |
| Այլ | 0.8 | 0.5 | 0.3 | 0.9 | 1.4 | 0.0 | 10.3 | 0.5 | 4.0 | 0.5 |

Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2008 և 2018թ.*

## 10.3. Բնակարանների ջեռուցումը

Ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերի տնային տնտեսությունների գերակշիռ մասը ջեռուցել են իրենց բնակարանները: Իր կացարանը ջեռուցող տնային տնտեսությունների համամասնությունը 2018թ.-ին կազմել է 98.7% (Աղյուսակ 10.10):

Կացարանների ջեռուցման համար տնային տնտեսություններն օգտագործել են բնական գազը՝ 46.4% (2010թ.-ի՝ 57.1%-ի դիմաց), փայտը՝36.0% (2010թ.-ի՝25.8%-ի դիմաց), էլեկտրաէներգիան՝12.8% (2010թ.-ի՝ 11.7% -ի դիմաց) և այլն:

Նախորդ տարվա համեմատ նվազել է բնակարանները փայտով ջեռուցող տնային տնտեսությունների մասնաբաժինը, համապատասխանաբար՝ 37%-ից 36%, մինչդեռ ավելացել է բնակարանները գազով (համապատասխանաբար՝ 45.6%-ից 46.4%) և էլեկտրաէներգիայով (համապատասխանաբար՝ 11.2%-ից 12.8%) ջեռուցող տնային տնտեսությունների մասնաբաժինը, նախորդ տարվա համեմատ նվազել է էներգիայի այլ տեսակներով ջեռուցվող տնային տնտեսությունների մասնաբաժինը՝ 6.0%-ից դառնալով 4.6%: 2018թ. տնային տնտեսությունների 99.9%-ն ունի էլեկտրաէներգիա, 86.7%-ը՝ կենտրոնացված գազամատակարարում:

**Աղյուսակ 10.10. Հայաստան. Կացարանների ջեռուցման տեսակները, 2010 և 2018թթ**

*(տոկոսներով)*

| | Քաղաքային բնակավայրեր | | ք.Երևան | | Այլ քաղաքներ | | Գյուղական բնակավայրեր | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **2010թ** | **2018թ** | **2010թ** | **2018թ** | **2010թ** | **2018թ** | **2010թ** | **2018թ** | **2010թ** | **2018թ** |
| **Ընդամենր** | **100** | **100** | **100** | **100** | **100** | **100** | **100** | **100** | **100** | **100** |
| **Չեն ջեռուցվել** | 1.7 | 1.7 | 2.4 | 2.7 | 1.1 | 0.7 | 0.5 | 0.5 | 1.3 | 1.3 |
| **Ջեռուցվել են** այդ թվում՝ ըստ օգտագործված էներգիայի տե-սակների | 98.3 | 99.8 | 97.6 | 97.3 | 98.9 | 99.3 | 99.5 | 99.5 | 98.7 | 98.7 |

| | Քաղաքային բնակավայրեր | | ք.Երևան | | Այլ քաղաքներ | | Գյուղական բնակավայրեր | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2010թ | 2018թ | 2010թ | 2018թ | 2010թ | 2018թ | 2010թ | 2018թ | 2010թ | 2018թ |
| Կենտրոնացված ջեռուցում | 0.4 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.7 | 0.2 | - | 0.0 | 0.3 | 0.1 |
| Նավթ.դիզելային վառելիք | - | 0.0 | - | 0.0 | - | 0.0 | 0.1 | 0.1 | 0.0 | 0.1 |
| Էլեկտրաէներգիա | 17.2 | 20.1 | 23.2 | 23.8 | 11.0 | 15.9 | 1.0 | 1.0 | 11.7 | 12.8 |
| Գազ | 69.4 | 64.9 | 70.1 | 69.6 | 68.7 | 59.7 | 33.2 | 16.2 | 57.1 | 46.4 |
| Փայտ | 12.0 | 14.4 | 6.0 | 6.3 | 18.2 | 23.3 | 52.5 | 71.3 | 25.8 | 36.0 |
| Այլ | 1.0 | 0.5 | 0.6 | 0.2 | 1.4 | 0.9 | 13.2 | 11.4 | 5.1 | 4.6 |

Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2010 և 2018թթ*

2018թ.-ին տնային տնտեսությունների մեծամասնության համար ջեռուցման հիմնական աղբյուր է հանդիսացել գազը՝ 46.4 տոկոս: Ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ այլ քաղաքային բնակավայրերում գազը մնում է ջեռուցման հիմնական աղբյուրը (Աղյուսակ 10.10): Իսկ գյուղական բնակավայրերում ջեռուցման հիմնական աղբյուրը մնացել է փայտը:

2018թ.-ին կացարանների ջեռուցման համար օգտագործված սարքերի տեսակներից (Աղյուսակ 10.11) բնակչությունը առավել հաճախ օգտագործել է ինչպես ինքնաշեն վառարան (39.8%), այնպես էլ լոկալ-անհատական կաթսա (25.5%): Քաղաքային բնակավայրերում բնակչությունը նախընտրել է լոկալ-անհատական կաթսան (36.4%), այն դեպքում, երբ գյուղական բնակչությունը նախընտրել է ինքնաշեն վառարանը (80.1%):

**Աղյուսակ 10.11. Հայաստան. Կացարանների ջեռուցման համար օգտագործված սարքերի տեսակները, 2018թ**

*(տոկոսներով)*

| | Քաղաքային բնակավայրեր | ք.Երևան | Այլ քաղաքներ | Գյուղական բնակավայրեր | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| Էլեկտրական սալիկ | 7.2 | 8.3 | 6.0 | 0.1 | 4.5 |
| Էլեկտրական ջեռուցիչ | 12.4 | 15.0 | 9.7 | 0.6 | 7.9 |
| Գազօջախ | 0.8 | 0.7 | 0.8 | 0.5 | 0.7 |
| Ինքնաշեն վառարան | 15.0 | 6.9 | 23.8 | 80.1 | 39.8 |
| Գործարանային արտադրության վառարան | 27.6 | 24.2 | 31.2 | 8.7 | 20.4 |
| Լոկալ-անհատական կաթսա | 36.4 | 44.4 | 27.8 | 7.8 | 25.5 |
| Լոկալ-կոլեկտիվ կաթսա, ամբողջ շենքի համար | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Կենտրոնացված ջեռուցում | 0.1 | 0.1 | 0.2 | 0.0 | 0.1 |
| Այլ | 0.4 | 0.4 | 0.4 | 2.1 | 1.1 |
| ***Ընդամենը*** | ***100*** | ***100*** | ***100*** | ***100*** | ***100*** |

Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2018թ.*

Ընդհանուր առմամբ, տնային տնտեսությունների միջին ամսական սպառողական ծախսերում բնակ-կոմունալ ծառայությունների համար կատարված ծախսերը կազմել են 13.1%, իսկ 2018թ.-ին բնական գազի և էլեկտրաէներգիայի համար կատարված ծախսերի մասնաբաժինը եղել է համապատասխանաբար 6.2 և 5.0 տոկոս և միասին կազմել են բնակ-կոմունալ ծախսերի 85.8%-ը (տե՛ս Հավելված 3, Աղյուսակ A6.1): Տնային տնտեսությունների միջին ամսական սպառողական ծախսերում կապի ծառայությունների համար կատարված ծախսերը կազմել են 4.4%:

Գծապատկեր 10.1-ը համեմատում է ոչ աղքատների, աղքատների և ծայրահեղ աղքատների միջին ամսական սպառողական ծախսերում տարբեր ծառայությունների համար կատարված ծախսերի մասնաբաժինները:

2018թ.-ին ոչ աղքատների կողմից կոմունալ ծառայությունների համար կատարված ծախսերը (մեկ շնչի հաշվով, միջին ամսական) 4.1 անգամ բարձր են, քան ծայրահեղ աղքատներինը, իսկ բնական գազի համար կատարված ծախսերը բարձր են 5.4 անգամ: Նույն ժամանակահատվածում ոչ աղքատների կողմից կապի ծառայությունների համար կատարված ծախսերը (մեկ շնչի հաշվով միջին ամսական) 3.9 անգամ բարձր են, քան ծայրահեղ աղքատներինը:

Ոչ աղքատ տնային տնտեսություններում մեկ շնչի հաշվով ամսական ծախսը միայն գազի վրա միջինում կազմել է 3336 դրամ, աղքատներինը՝ 1260 դրամ, ծայրահեղ աղքատներինը՝ 615 դրամ:

**Գծապատկեր 10.1. Հայաստան. Տարբեր ծառայությունների դիմաց կատարված ծախսերի մասնաբաժինն ընդամենը սպառողական ծախսերի նկատմամբ ըստ աղքատության մակարդակի, 2018թ.**

*(տոկոսներով)*




Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2018թ.*

**) Կապի ծառայությունները ներառում են հեռախոսավճարները, հեռագրավարձը և ինտերնետային ծառայություններից օգտվելու վճարները*

## 10.4. Երկարաժամկետ օգտագործման ապրանքների առկայությունը

Հայաստանի տնային տնտեսությունները նշել են, որ երկարաժամկետ օգտագործման կենցաղային ապրանքների մեծ մասը հիմնականում ձեռք է բերվել տարիներ առաջ: Գրեթե բոլոր տնային տնտեսությունները, անկախ բնակության վայրից, ունեն հեռուստացույց, իսկ սառնարան, բջջային հեռախոս, գազօջախ և լվացքի մեքենա ունեն նրանց հիմնական մասը:

2018թ.-ի ընթացքում ձեռք բերված երկարաժամկետ օգտագործման ապրանքների շարքում առավել հաճախ գնվել են հեռուստացույցներ, բջջային հեռախոսներ, սառնարաններ, լվացքի մեքենաներ, գազօջախներ, փոշեկուլներ և համակարգիչներ:

Աղյուսակ 10.12. Հայաստան. Երկարաժամկետ օգտագործման կենցաղային ապրանքների առկայությունը 100 տնային տնտեսությունների հաշվով, 2008 և 2018թթ.

*(հատ)*

| | Ընդամենը | | Քաղաք | | Գյուղ | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2008թ | 2018թ. | 2008թ. | 2018թ. | 2008թ. | 2018թ. |
| Հեռուստացույց | 98 | 99 | 99 | 99 | 98 | 99 |
| Սառնարան | 91 | 97 | 94 | 98 | 85 | 96 |
| Լվացքի մեքենա | 79 | 95 | 82 | 95 | 73 | 94 |
| Փոշեկուլ | 46 | 76 | 52 | 82 | 33 | 63 |
| Կարի մեքենա | 42 | 46 | 41 | 46 | 45 | 45 |
| Գազօջախ | 86 | 93 | 89 | 94 | 80 | 90 |
| Արբանյակային ալեհավաք | 7 | 24 | 6 | 18 | 9 | 34 |
| Բջջային հեռախոս | 72 | 98 | 75 | 98 | 68 | 98 |
| Տեսախցիկ | 3 | 9 | 3 | 12 | 1 | 5 |
| Լուսանկարչական ապարատ | 22 | 26 | 21 | 28 | 23 | 23 |
| Համակարգիչ | 10 | 62 | 14 | 64 | 2 | 57 |

Աղբյուրը. *ՏՏԿԱՀ 2008 և 2018թթ.*

2018թ. բջջային հեռախոս ուներ տնային տնտեսությունների 98 տոկոսը, ստացիոնար հեռախոս՝ 41.1տոկոսը:

Վերջին տարիների ընթացքում կտրուկ ավելացել է բջջային հեռախոս ունեցող տնային տնտեսությունների մասնաբաժինը, հատկապես գյուղական վայրերում, որտեղ նրանց թիվը 2018թ.-ին հասել է 98%-ի և հավասարվել քաղաքային բնակավայրերի մասնաբաժնին:

Համաձայն կապի ծառայություններ մատուցող կազմակերպությունների վիճակագրական տվյալների, 2018թ.-ին բջջային կապի ակտիվ բաժանորդների քանակը կազմել է 3 579.3հազար, ինչը 1.0%-ով ավել է 2017թ.-ի համապատասխան ցուցանիշից (3 488.5 հազար): Իսկ ինտերնետ հասանելիության բաժանորդների քանակը 2018թ.-ին կազմել է 2 894.0 հազար, որից բջջային հեռախոսակապով՝ 2 455.1 հազար կամ 84.8%: Լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդների թվաքանակը 2018թ.-ին կազմել է 2.586.9 հազար, այդ թվում՝ շարժական լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդների թվաքանակը ՝ 2.239.5 հազար, իսկ ֆիքսված՝ 347.4 հազար:

Աղյուսակ 10.13. Հայաստան. Համակարգչի և ինտերնետային կապի մատչելիությունը վերջին 3 ամիսների ընթացքում տնային տնտեսության որևէ անդամին, 2018թթ.

*(տոկոսներով)*

| | 2018թ. | | |
|---|---|---|---|
| | Ընդամենը | քաղաք | գյուղ |
| **Ընդամենը տնային տնտեսություններ** | **100** | **100** | **100** |
| այդ թվում | | | |
| **Համակարգչի հասանելիությունը տնային տնտեսության որևէ անդամին ցանկացած վայրում** | 66.7 | 71.5 | 59.4 |
| այդ թվում տանը | 65.2 | 69.9 | 57.6 |
| **Ինտերնետի հասանելիությունը տնային տնտեսության որևէ անդամին ցանկացած վայրում** | 68.2 | 73.1 | 60.3 |
| Տանը մշտական և ոչ միշտ | 60.4 | 64.4 | 53.9 |
| Որև է այլ տեղում* | 32.1 | 37.8 | 22.7 |

| | 2018թ. | | |
|---|---|---|---|
| | Ընդամենը | քաղաք | գյուղ |
| այդ թվում՝ | | | |
| Աշխատավայրում | 3.3 | 4.4 | 1.6 |
| Ուսումնական հաստատությունում | 1.5 | 1.3 | 1.7 |
| Այլ անձանց տանը | 4.4 | 5.2 | 3.2 |
| Ինտերնետի մատչելիության (անվճար) կենտրոնում | 0.2 | 0.4 | 0.0 |
| Ինտերնետի մատչելիության (վճարովի) կենտրոնում | 0.2 | 0.2 | 0.2 |
| Բջջային հեռախոսի կամ այլ վայրում շարժական սարքի միջոցով | 76.4 | 81.1 | 68.7 |

Աղբյուրը. *ՏՏԳՄՀ 2018թթ.*

** Գումարը գերազանցում է ընդամենը, քանի որ մեկ անդամը կարող է օգտվել համակարգչից և տանը և այլ տեղում:*

Համակարգիչ ունեցող տնային տնտեսությունների մասնաբաժինն ըստ հետազոտության տվյալների կազմել 66.7%, այդ թվում՝ քաղաքային բնակավայրերում՝ 71.5%-ին, իսկ գյուղական բնակավայրերում՝ 59.4%-ին: 2018թ.-ին ինտերնետային կապը մատչելի է եղել 68.2% տնային տնտեսությունների անդամներից որևէ մեկին (Աղյուսակ 10.13), այդ թվում՝ քաղաքային բնակավայրերում՝ 73.1%-ին, իսկ գյուղական բնակավայրերում՝ 60.3%-ին: Ինտերնետային կապը մատչելի էր ինչպես տնից, այնպես էլ այլ վայրերից: Մասնավորապես, տնային տնտեսությունների անդամների 60.4%-ը տանն ունեցել է մշտական կամ ոչ մշտական ինտերնետային կապ:

Տնային տնտեսությունների անդամների կողմից ինտերնետային կապի մատչելիության մասին հիմնական արդյունքները, ըստ տնային տնտեսությունների անդամների սեռի և տարիքի, բերվում են Աղյուսակ 10.14-ում: 2018թ.-ին տնային տնտեսության անդամներից 68.2%-ին մատչելի է եղել ինտերնետային կապը, այդ թվում՝ տղամարդկանց 69.9%-ին, իսկ կանանց՝ 66.9%-ին (Աղյուսակ 10.14): Ինտերնետային կապն առավել մատչելի է եղել 15-24 տարեկաններին (95.0%):

**Աղյուսակ 10.14. Հայաստան. Ինտերնետային կապի մատչելիությունը տնային տնտեսության անդամներին վերջին 12 ամիսների ընթացքում ըստ անդամների սեռի և տարիքի, 2018թ.**

*(տոկոսներով)*

| | Ընդամենը բնակչություն | Սեռ | | Տարիք | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | տղամարդ | կին | <5 | 5-14 | 15-24 | 25+ |
| **Տնային տնտեսության անդամները օգտվում են ինտերնետից** | 68.2 | 69.9 | 66.9 | 26.4 | 70.7 | 95.0 | 92.0 |
| ***Տանը մշտական կամ ոչ միշտ*** | 60.4 | 62.4 | 58.8 | 25.1 | 62.4 | 74.6 | 61.0 |
| ***Որևէ այլ տեղում*** | 32.1 | 33.4 | 31.0 | 5.1 | 43.0 | 91.3 | 88.3 |
| այդ թվում՝ | | | | | | | |
| Աշխատավայրում | 3.3 | 3.5 | 3.2 | - | - | 2.8 | 4.3 |
| Ուսումնական հաստատությունում | 1.5 | 1.5 | 1.4 | - | 4.6 | 7.2 | 0.1 |
| Այլ անձանց տանը | 4.4 | 4.1 | 4.7 | 3.1 | 5.7 | 6.7 | 3.9 |
| Ինտերնետի մատչելիության (անվճար) կենտրոնում | 0.2 | 0.3 | 0.2 | - | - | 0.5 | 0.3 |
| Ինտերնետի մատչելիության (վճարովի) կենտրոնում | 0.2 | 0.2 | 0.2 | - | 0.1 | 0.5 | 0.2 |
| Բջջային հեռախոսի միջոցով ցանկացած վայրում | 28.3 | 29.9 | 27.1 | 1.2 | 17.2 | 56.3 | 28.6 |
| Այլ վայրում շարժական սարքի միջոցով | 0.9 | 1.1 | 0.7 | 0.1 | 0.6 | 2.0 | 0.8 |

Աղբյուրը. *ՏՏԳՄՀ 2018թ.*